

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ.
2023



Զ. ՏԱՐԻ


ԲԱՆԴՈՒՄ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՆՅՐ ԼԹՈՒՈՅ ՄԻՔՈՅ ԷԶՐԻԼՏՆԻ

ԳԵԿՊԵՏԵՐ


2023

Ա. ԷԶՐԻԼՏԻՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ**

(31 դեկտեմբերի, 2023 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Տարեմուտի այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքերն ենք բերում ամենքիդ: Ամանորը սահմանագիծն է պատմություն դարձած օրերի եւ հուսառատ գալիքի:

Փրկչական 2024 թվականը դիմավորում ենք խոր մտահոգություններով, դիմավորում ենք ահռելի կորուստների անամոքելի ցավը մեր սրտում: Ծանր տարի ապրեցինք, սակայն Տիրոջն ապավինած՝ հույսով ու լավատեսությամբ ենք նայում մեր ազգի ապագային: Արցախի բռնազավթման եւ հայաթափման, Հայաստանի շուրջ ստեղծված լրջագույն իրավիճակով եւ առկա հիմնախնդիրներով հանդերձ՝ հաստատակամ պիտի հաղթահարենք դժվարությունները՝ ամուր պահելով նվիրումն ու սերը առ հայրենին եւ հավատը առ մեր Ամենակալ Տերը:

Սիրելիներ, ուրախության, թե նեղության պահերին մեր ժողովուրդը միշտ ապավինել է Աստծուն, միշտ ուժ ու զորություն առել Բարձրալից՝ հավատքով, որ Աստված մեզ հետ է: Անտարակույս, մեր ժողովրդի հոգեւոր ներուժն ու ոգու ամրությունը մեզ պիտի առաջնորդեն վերհառնումի եւ հայոց կյանքի հաղթական վերընձյուղման: Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու չարչարվել է, բայց չի հանձնվել, ցեղասպանվել է, բայց չի կործանվել, սրատվել է, բայց չի մահացել: Արդարեւ, չի կարող ընդհատվել պատմությունը մի ժողովրդի, որի տարեգրությունը զարգարված է աստվածաշատության եւ հայրենասիրության հրաշալի վկայություններով, ապրելու եւ արարելու անընդմիջելի տենչանքով:

Փորձությունները հաճախ են պատահում ժողովուրդների կյանքում, սակայն դժվարին իրավիճակներից հաղթանակած են դուրս գալիս այն ազգերը, որոնք աննկուն են մնում ոգով ու առ Աստված հավատքով եւ արիաբար դիմակայում նեղություններին ու մարտահրավերներին: «Տերը ապավենն է բոլոր նրանց, ովքեր հույսը դրել են Նրա վրա»,— ասում է սաղմոսերգուն (17.31):

Արդ, սիրելիներ, նոր տարում նորոգվենք հոգով ու մտքով, զորանանք հույսով, ինքնաքննության մեջ անդադրադադնա մեր ընթացքին ու գործերին, սրբագրենք թերացումներն ու սայթաքումները, թույլ չտանք, որ ազգային կյանքում սերմանվի ատելություն ու պառակտում, արմատավորվի կործանարար հարմարվողականությունն ու անտարբերությունը: Ապրենք հավատքով զարդարուն կյանքով, միմյանց հանդեպ աստվածապատվեր սիրով, որպեսզի զգանք Աստծո շնորհաբեր ներկայությունը մեզանում: «Մեր անձերը կառուցենք հավատի սրբություն, աղոթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Աստծու սիրով»,— ինչպես հորդորում է առաքյալը (Հուդա 20—21): Միասնական լինենք Հայաստանում ու սփյուռքում եւ մեր համախումբ ջանքերը ծառայեցնենք հանուն համազգային շահերի պաշտպանության, հայրենյաց ու ազգի կյանքի նոր արշալույսի կերտման: Գիտակցենք, որ հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարված են բոլոր ժամանակների հայ սերունդների աղոթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտվի հայոց ինքնությունը, եւ որի սրբազան հողից է հավետ ուժ առնելու հայ ժողովուրդը: Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին ու եղբայրներին, նրանց մեջ առատացնենք հույսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը, եւ զորեղ մնա հավատն առ Աստված: Աջակից լինենք կարիքավորներին ու նեղյալներին եւ Բարձրյալի օգնականությունը հայցենք անհայտ կորած եւ գերյալ մեր զավակներին ու նրանց ընտանիքներին:


Սուրբգրական պատգամի համաձայն՝ չմոռանանք բարեգործությունը եւ մեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՝ պատարագներն են հաճելի Աստծուն (հմմտ. Եբր. ԺԳ. 16), եւ այս է ճանապարհը մեր ժողովրդի բարեպաշտ ու ապահով կյանքի, այս է ճանապարհը դարավոր ու նվիրական արժեքներով մեր ազգի եւ պետության լինելիության ու հարատեւության:


Սրտագինս աղոթենք, որ Երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի հայոց աշխարհը եւ ողջ մարդկությանը, իր զորակցությամբ հույսի ու սիրո շնորհները եւ հաղթության պարգեւը սփռի վտանգների միջով անցնող մեր հայրենիքի ու համայն հայության կյանքին այսօր եւ միշտ եւ հավիտյան, ամեն:

Բարի, օրհնյալ Նոր տարի:

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Տ. ՍՈՎՍԵՍ ՎԱՐՊԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 դեկտեմբերի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է մեր ազգի առաջին լուսավորիչներ եւ մեր Եկեղեցու հիմնադիրներ Սբ. Թադեոս եւ Սբ. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Հոգեգալստյան օրը Վերնատան մեջ մյուս աշակերտների հետ նրանք եւս «լցվեցին Սուրբ Հոգով» (Գործք. Բ. 4) ու «սկսեցին բոլոր հեթանոսների լեզուներով պատմել «Աստծու մեծագործությունների մասին» (Գործք. Բ. 11):

Հին Ուխտի ժամանակ Աստծու պատգամախոսները մարգարեներն էին, իսկ Նոր Ուխտի ժամանակ Տիրոջ Ավետարանի քարոզիչները դարձան առաքյալներ: Մեր Տեր Հիսուս Քրիստոս երկինք համբարձվելուց առաջ նրանց պատվիրեց գնալ եւ քարոզել Ավետարանը բոլոր ազգերին ու նրանց մկրտել Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով (Մատթ. ԻԸ. 19, Մարկ. ԺԶ. 15): Տիրավանդ այս պատգամին հնազանդ՝ առաքյալները սփռվեցին աշխարհով մեկ՝ բոլոր ազգերին լուսավորելու Քրիստոսի Ավետարանի լույսով:

Սբ. Թադեոս ու Սբ. Բարդուղիմեոս առաքյալները Տիրոջ այս լուսավոր պատգամն իրականություն դարձրին Հայաստանում, ուր եւ նահատակվեցին Սանատրուկ Թագավորի հրամանով՝ դառնալով Հայոց Եկեղեցու հիմնադիրները եւ հայ ազգի հավերժ բարեխոսները: Նրանց քարոզչության ու նահատակության համար էլ Հայ Եկեղեցին համարվում է առաքելական եւ կոչվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Սբ. Թադեոս եւ Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության շնորհիվ հայ ժողովուրդը լուսավորվեց Քրիստոսի լույսով, այնուհետեւ Սբ.

Գրիգոր Լուսավորչի ու Սբ. Տրդատ արքայի ջանքերով քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, ապա սուրբ Թարգմանիչ վարդապետների շնորհիվ այն ազգային դիմագիծ ստացավ:

Սիրելի հավատացյալներ, մեր պատմության այն շրջաններում, երբ հայ ազգը շեղվել է առաքյալների քարոզած այս հավատքից, հեռացել է նրանց հիմնած Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդներից, դադարել է լսել իր հոգեւոր առաջնորդներին, ընկել է ծանր փորձությունների մեջ: Ժամանակ առ ժամանակ որոշ շրջանակներ տարածում են այն թեզը, թե հայ ազգը թուլացավ, երբ քրիստոնյա դարձավ: Սակայն իրականում ճիշտ հակառակն է. հայ ժողովուրդն օրհասական կորուստներ ունեցավ ոչ թե քրիստոնյա լինելու, այլ քրիստոնյա չլինելու պատճառով: Մեր դժբախտությունների պատճառ եղել են Մայր Եկեղեցուց հեռանալը եւ առաքյալների քարոզած մաքուր հավատի ու քրիստոնեության պակասը:

Սուրբ Գրքում հստակորեն ասվում է. եթե չպահեք Աստծու օրենքները, ապա բոլոր ազգերից վերջինը կլինեք, դուք կցանեք, իսկ արդյունքը կուտեն ուրիշները, պատերազմների մեջ կընկնեք, ձեր զավակները գերի կլինեն, կսփռվեք աշխարհով մեկ (տե՛ս Ղեւտ. ԻԶ. 14–33): Այնինչ՝ եթե պահպանեք Աստծու պատվիրանները, ապա կհաջողեք ու կզորանաք, հալածական կանեք ձեր թշնամիներին, եւ Տերը ձեր երկրին խաղաղություն կպարգեւի (տե՛ս Ղեւտ. ԻԶ. 3–8):


Ուստի այս օրը մեզ համար առաքելական ճշմարիտ հավատի վերանորոգության հրավեր է: Առաքյալների տոնը մեր սերն ու հավատարմությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու նրա գահակալի նկատմամբ վերահաստատելու եւ մեր հայրերի ու վարդապետների թողած ժառանգությանն ու բարոյական արժեքներին հավատարիմ մնալու ուխտի օր է:

Սիրելի հավատացյալներ, ըստ ավանդության՝ Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան բերեց Սբ. Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խաչի վրա խոցեց Տեր Հիսուսի կողը (Հովհ. ԺԹ. 34), ինչպես նաեւ մի բաժին այն յուղից, որ Տեր Հիսուս փոխանցել էր առաքյալներին, իսկ Բարդուղիմեոս առաքյալն իր հետ Հայաստան բերեց Տիրամոր պատկերը:

Առաքյալների հիշատակի օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով դեռեւս 2014 թվականին հռչակվել է Աստվածամուկ Սուրբ Գեղարդի ուխտի օր, եւ հնարավորություն է ըն-

ձեռվել, որ հավատացյալները գան ու երկրպագեն Սուրբ Գեղարդին՝ «ի մխիթարություն իրենց հուսացյալ հոգիների եւ ի կատարումն սրտի բաղձանքների»:

Սիրելի՛ հավատացյալներ, այս գեղեցիկ առիթով շնորհավորում եմ ամենքիս ու աղոթքով հայցում Սբ. Թադեոսի եւ Սբ. Բարդուղիմեոսի բարեխոսությունը մեր ազգի համար, որպեսզի Աստված առաքելական հավատքի մեջ զորացնի ու պահպանի մեզ, իսկ այսօր դուրս բերված աստվածամուխ Սբ. Գեղարդը շարունակի հրաշագործել մեր կյանքում՝ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի շինություն մեր հայրենիքի. ամեն:



Տ. ԱՐՍԵՆ ՔԱՅԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 դեկտեմբերի 2023 թ.)

«Համարի՛ք եթե այն գալիլեացի՞ք եղեն մեղա-
տո՞ւրք քան զամենայն գալիլեացիս, զի զայնպիսի
անցս կրեցին, ոչ. ասեմ՝ ձեզ, այլ եթե ոչ ապաշ-
խարհեցե՞ք ամենեփին նո՛յնպես կորնչիցիք»

(Ղուկ. ԺԳ. 2–3):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային քարոզչության ընթացքում բազմաթիվ են դեպքերը, երբ Տերն Իր լսարանին մինչ որեւէ վարդապետական թեզ ամբողջապես ներկայացնելը դիմում էր ունկնդրին՝ հարցերի միջոցով օգնելով նրան մտքում հող նախապատրաստել ճշմարտության համար, որից հետո միայն բարձրաձայնում կամ հաստատում է աստվածային իմաստությունը: Ահա այդպիսի դեպք է այսօր մեզ ներկայացնում Ղուկասի Ավետարանը: Հիսուս Քրիստոս, մինչ քարոզում եւ ուսուցանում էր, այդ նույն ժամանակ ոմանք գալիս եւ հայտնում են, թե Պիղատոսը մի խումբ գալիլիացիների է կոտորել եւ նրանց արյունը խառնել զոհերի արյուններին: Հրեական միջավայրում անօրինակ մի իրավիճակ: Իշխող տեսակետի համաձայն՝ որեւէ փորձանք կամ դժբախտություն, որ պատահում էր մարդուն, իր կամ իր նախնիների մեղքերի հետեւանքն է: Հիշենք ի ծնե կույրի օրինակը: Այդպես կարծողների պակաս չի զգացվում նաեւ մեր օրերում: Ահա Քրիստոս, ի պատասխան այդ պատահարի, նախ հարցնում է. «Կարծում եք, թե այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկվեցին, ավելի՞ մեղավոր էին, քան բոլոր գալիլիացիները: Ոչ, ասում եմ ձեզ, սակայն եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույնպես պիտի կորչեք»: Ավելին՝ նույն միտքը հաստատելու համար Հիսուս հիշեցնում է մի ուրիշ՝ այս անգամ արդեն բնության արհամիրքի արդյունքում տեղի ունեցած դժբախտ պատահար՝ Սիլովամում աշտարակի փլուզումը, որ բերեց մարդկային կորուստների:

Սիրելիներ, փորձանքներն ու պատահարները, ցավ ի սիրտ, օրինա-
չափորեն ուղեկցում են մեզ մեր կյանքի գրեթե բոլոր ժամանակներում:
Մարդը, հակված լինելով մեղքին ու մեղանշականին, իր գործողություն-
ներին իբրեւ հետեւանք՝ ստանում է նոր ու ավելի մեծ փորձանքներ,
որոնք ի վերջո կկործանեն մեզ, եթե ականջալուր չլինենք մեր Տիրոջ
պատգամին եւ դարձի չգանք ու չապաշխարենք: Դարձի գալ առաջին
հերթին ենթադրում է ուղղության փոփոխություն, շարժման փոփոխու-
թյուն, որին տրամաբանորեն հետեւելու է գործողության փոփոխությու-
նը: Ֆիզիկական եւ հոգեւոր այս փոփոխությունը հայտնի է ապաշխա-
րություն բառով, որը լսել ենք բազմաթիվ անգամներ, տեսականորեն գի-
տենք, որ ապաշխարելն իր հերթին ունի երեք հանգրվան՝ մեղքի գիտակ-
ցում, խոստովանություն եւ հատուցում: Այս ճամփորդությունը կոչվում է
ապաշխարություն: Հիմա ոչ հոետորական հարց տանք ինքներս մեզ. ար-
դյո՞ք մենք մինչեւ վերջ անցնում ենք այս ճանապարհը, թե՛ կանգ ենք առ-
նում հիշյալ աստիճաններից մեկին կամ կարծում ենք, որ մեր գիտելիքն
այդ գործողության վերաբերյալ արդեն իսկ մեզ ազատում է մեղքից եւ
մեղքի հետեւանք կործանումից: Սրան կարող ենք պատասխանել միայն
ինքներս մեր ներսը խորագնին քննելուց հետո, որովհետեւ մեր ուղեղը
կենսաբանական շատ կարեւոր հատկություն ունի՝ մոռացության տալու
այն սխալ որոշումները կամ հոգեւոր իմաստով մեղքերը, որոնք կայաց-
րել ու գործել ենք մեր կյանքի ընթացքում: Հատկանշականն այն է, որ
տեղեկատվությունը չի ջնջվում մեր ուղեղից, այն կա, առկա է, սակայն
գիտակցական մակարդակում տեսանելի չէ: Նույնը տեղի է ունենում
մեր հոգու հետ: Եթե մեղք գործելուց ու գիտակցելուց հետո միամտորեն
մտածում ենք, որ մի հարմար պահի կանդրադառնանք դրան, եւ դրա-
նով մոռացության ենք մատնում այն, դա դեռ չի նշանակում, որ այլեւս
չկա այդ մեղքը: Ո՛չ, սիրելիներ, դա այդպես չէ: Ավելին, սարսափելի է
գիտակցել, որ մենք ժամանակի ընթացքում համակերպվում ենք այդ
մտքին եւ սկսում ենք համերաշխ ապրել մեր մեղքերի հետ:

Ուրեմն մեր Տերն այսօր նույն հարցումը նաեւ մեզ է ուղղում՝ ասելով,
որ որեւէ մեկի հետ պատահած դժբախտ դեպքի մասին լսելիս նախ անդ-
րադարձ կատարիր ինքդ քեզ եւ հարց տուր ինքդ քեզ. մի՞թե ես ավելի ան-
մեղ եմ, քան այն մարդը, որի հետ պատահեց այդ դեպքը: Վստահաբար՝
ո՛չ: Տրամաբանական հարց է առաջանում՝ իսկ ինչո՞ւ ինձ հետ չպատահեց
այդ դեպքը: Մենք հաճախ ենք ականատես լինում, որ հայրենազուրկ ու

տարագիր մեր քույրերի ու եղբայրների հասցեին հնչում է այդ կեղծ մեղադրանք, թե ինչո՞ւ լքեցին հայրենի եզերքը, ինչո՞ւ եկան եւ նմանօրինակ բազմաթիվ ինչուներ: Այդ հարցերի պատասխանը Քրիստոսի հնչեցրած հարցի մեջ է: Խնչ է, մենք կարծում ենք, որ մեր արցախցի ազգակիցներն ավելի՞ մեղավոր են, քան մենք: Արդյո՞ք մենք կարծում ենք, որ Ցեղասպանությանը զոհ դարձած մեր նախնիներն ավելի մեղավոր էին, քան մենք այսօր: Քրիստոնյա հայի պատասխանը նույնն է՝ ո՛չ: Այդ դեպքում պիտի հարցնենք՝ իսկ ինչո՞ւ դա չպատահեց մեզ հետ կամ ինչո՞ւ այժմ չի պատահում: Մի՞թե Աստված մեզ ավելի շատ է սիրում, քան մյուսներին:

Այս հարցի պատասխանը գտնելու համար Քրիստոս պատմեց անպտուղ թզենու առակը. մի մարդ իր այգում թզենի էր տնկել եւ երբ եկավ նրա ճյուղերին պտուղ փնտրելու, չգտավ ու ցանկանում էր կտրել այդ ծառն ու այրել: Այգեգործը, որի խնամքին հանձնված էր այգին, խնդրեց ագարակատիրոջը թույլ տալ, որ ինքը մեկ տարի եւս շարունակի խնամել ծառը, փխրեցնի արմատների հողը, պարարտացնի այն, եւ եթե դա էլ չօգնի, թզենու ծառից ազատվի մյուս տարի:

Սիրելիներ, այս առակի գործող անձանց եւ այգու ու թզենու վերաբերյալ կան մի շարք մեկնություններ, որոնք բոլորն էլ ունեն մեկ ընդհանրություն. առակն ուսուցանում է, որ յուրաքանչյուրիս համար սահմանված է որոշակի ժամանակահատված, որին մենք կյանք են անվանում եւ որի ընթացքում մենք առաքելություն ունենք բարի եւ առաքինի գործերով զարդարելու մեր կյանքի թզենին: Եւ երբ մեր Տերը կգա՝ փնտրելու մեր պտուղները, թող հուսախաբ չլինի առակի այգետիրոջ նման ու թող հարկադրված չլինի մեր կյանքի ծառը կտրելու եւ հնոցը նետելու: Ուրեմն մեզ հետ այս ամենը չի կատարվում լոկ այն պատճառով, որ Աստված առակի այգեգործի միջնորդությամբ մեզ եւս «մեկ տարի» ժամանակ է տվել, որպեսզի մենք պարարտացվենք ու եւս մեկ անգամ հնարավորություն ունենաք պտղաբերելու: Սա է պատճառը, որ անձնական, անհատական եւ հասարակական մակարդակներում մեզ դեռ չի պատահում այն, ինչ պատահել եւ կամ շարունակում է պատահել այլ անձանց կամ հասարակությունների հետ:


Մեզ մնում է անսալ մեր Տիրոջ խոսքին ու ապաշխարել, որպեսզի նույնը չպատահի մեզ հետ, եւ մենք նույնպես կորստյան չմատնվենք:

Արեւելյան իմաստություն կա, ըստ որի՝ դրախտը գտնվում է դժոխքի կենտրոնում: Այո՛, մեղք գործելն ավելի հեշտ ու դյուրին է, քան ապաշ-

խարելը: Բայց մեղավոր լինել նշանակում է ոչ թե կործանված լինել, այլ հնարավորություն ունենալ ապաշխարելու, դարձի գալու, մեր հայացքն ուղղելու դեպի դրախտը եւ ընթանալու այդ ուղղությամբ: Հնարավորություն ունենալ գնալու դեպի Աստված եւ այդ ճանապարհին, մեզ տրված աստվածապարգեւ ժամանակն օգտագործելով, հաշվետվության ժամանակ Տիրոջը հաճելի կերպով ներկայանալու:

Սիրելիներ, առակի թզենին լինելու կամ չլինելու պարտականությունը մեզ պարտադրված չէ, դա պետք է լինի մեր կամքն ու ցանկությունը, իսկ Աստծուն ներկայանալը տեղի է ունենալու անկախ մեր կամքից ու ցանկությունից եւ անկախ մեր՝ պատրաստ կամ անպատրաստ լինելու հանգամանքից:

Ուրեմն հարկ է այս օրը, այս պահը, այս ակնթարթը, որ անցկացնում ենք այստեղ միասին, օգտագործենք նախ իրապես ապաշխարելու համար. «Նախ դու խոստովանիր քո անօրենությունները, որ արդարացվես» (Եսայի ԽԳ, 26): Այնուհետ մաքուր հոգով մոտենանք հաղորդվելու մեր Տիրոջ փրկչական Մարմնին ու Արյանը՝ հայցելով երկայնամիտ Տիրոջ ողորմությունը՝ ավելացնելու մեր ժամանակը՝ ավելիով պտղաբերելու եւ ընծայաբերելու Իրեն, քանի որ Նրան են վայելում միայն փառքը, իշխանությունն ու պատիվը, այժմ եւ միշտ հավիտյանս: Ամեն:



Տ. ՍԵԼԱԿ ՔԱՂԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(10 դեկտեմբերի, 2023)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տեսէ՛ք եւ զգոյ՛շ լեռով յամենայն ազանու-
թենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրով իցեն
կեսնք նորա»

(Ղուկ. ԺԲ. 15):

Սիրելիներ, Ղուկասի Ավետարանի հատկապես այս հատվածներում Հիսուս Քրիստոս փորձում է մեզ բացատրել, թե որոնք են քրիստոնյայի կյանքը, նրա ապրումը եւ նրա շարժումը:

Քրիստոսին է մոտենում հավաքված ժողովրդից մեկը եւ ասում. «Վարդապետ, ասա եղբորս, որ ժառանգությունն ինձ հետ բաժանի»: Քրիստոս, հասկանալով շահերի բախումը, ասում է. «Ո՞վ մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրա»: Ապա դառնալով ժողովրդին՝ զգուշացնում է, որ ազահույններից զգույշ մնան, եւ հետո մի առակ է պատմում: Մեծահարուստ մեկը, առատ բերք հավաքելով, երեկոյան մտածում է առավոտը բացվելուն պես հին շտեմարանները քանդելու, դրանց փոխարեն ավելի մեծերը կառուցելու եւ այդ շտեմարաններում ցորենն ու ողջ բարիքներն ամբարելու մասին: Եւ խորհում է այսպես. «Ինքս ինձ կասեմ՝ ո՞վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հագինստ արա, կեր, խմիր եւ ուրախ եղիր»:

Սիրելիներ, այստեղ Քրիստոս զգուշացնում է, չի ասում, թե հարստությունը, ունեցվածքը Աստծու օրհնությունը չեն, ազահույնությունն է խոտելի Աստծու աչքին: Եւ տեսնում ենք, որ հարուստը մտածում է ոչ թե բարեգործություն անելու, քանի որ այդ տարի բերքն առատ էր, այլ առավել շատ կուտակելու մասին: Առակի շարունակության մեջ Աստված մեծահարուստին ասում է. «Անմիտ, հենց այս գիշեր հողիդ քեզնից պա-

հանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ղևմն է լինելու»: Ապա դառնալով ժողովրդին՝ Քրիստոս շարունակում է. «Նույնպես է նաեւ նա, ով իր անձի համար գանձ կհավաքի եւ Աստծով չի հարստանա»:

Սիրելիներ, մի առակ կա ճամփորդի եւ իմաստունի մասին: Մի ճամփորդ, շրջագայելով երկրեերկիր, փորձում էր իմաստություն ձեռք բերել: Լսելով մեծ իմաստունի համբավի մասին՝ կամենում է այցելության գնալ նրան: Եւ մտնելով իմաստունի տուն՝ ապշում է, քանի որ վերջինս շատ պարզ պայմաններում էր բնակվում: Եւ ասում է նրան. «Դու իմաստուն մարդ ես, կարող էիր ունենալ մեծ հարստություն, ավելի շքեղ տուն ու պալատ, առավել բարվոք կյանք»: Բայց իմաստունը, նայելով ճամփորդի դեմքին, ասում է. «Ես կյանքի ճամփորդ եմ»:

Այո՛, սիրելիներ, մենք բոլորս՝ քրիստոնյաներս, կյանքի ճամփորդներ ենք: Սրանից հետո Քրիստոս ցույց է տալիս մեզ շրջապատող կենդանիներին եւ բնությանը եւ բաղդատում մեր կյանքի հետ: Ասում է. «Նայեցեք ագռավներին, որոնք ոչ սերմանում են, ոչ հնձում են, որոնք ոչ շտեմարաններ ունեն եւ ոչ էլ ամբարներ, բայց Աստված կերակրում է նրանց, որքան եւս առավել ձեզ, որ շատ ավելի հարգի եք թռչուններից»:

Եւ այստեղ ակամայից մենք հիշում ենք «Հայր մեր»-ի «Հանապազօրյա հացը տուր մեզ այսօր» տողը:

Այո՛, սիրելիներ, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ ամեն վայրկյան դամոկլյան սրի պես մեր գլխին կախված է պատերազմի եւ արհավիրքների վտանգը: Մենք՝ իբրեւ քրիստոնյաներ, պետք է պատրաստ լինենք ցավի եւ տառապանքի այս փորձությունները քրիստոնեաբար հաղթահարելու: Եւ ակամայից իմ մտքին գալիս է Ջրբան Խալիլի «Մարգարեն» ակնարկի մի հատված, որտեղ խոսվում է հարստության մասին. ինչ է շահում այն շունը, որը Սուրբ Երկրի ճանապարհին՝ անապատի ավազների մեջ, թաղում է ոսկորն այն հույսով, թե վերադարձին պիտի գտնի այն: Այո՛, Քրիստոս ասում է. «Նայեցեք վայրի շուշանին, ինչպես է աճում, ոչ աշխատում է, ոչ հյուսում, ասում եմ ձեզ, Սողոմոն իսկ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագնվեց, իսկ եթե խոտը, որ այսօր բաց դաշտի մեջ է, իսկ վաղը հնոց է նետվելու, Աստված այդպես հանդերձավորում է, որքան եւս առավել ձեզ պիտի զգեստավորի, թերահավատներ»:


Ահա մեր թերահավատության առիթը եւ աստիճանը: Ուրեմն՝ հավատի մեջ զորանանք՝ Տիրոջն առավել վստահելով: Ապա ավելացնում է

Քրիստոս. «Մի մտահոգվեք, թե ինչ եք ուտելու կամ ինչ եք խմելու եւ մի մտաւանջվեք, որովհետեւ այդ ամենը աշխարհի հեթանոսներն են, որ փնտրում են, իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ»:

Սիրելիներ, նույն ճամփորդը, անցնելով քաղաքի գերեզմանոցով, տեսնում է տապանաքարերի արձանագրությունները: Ըստ այդ արձանագրությունների՝ մեկն ապրել է երեսուն, մեկ ուրիշը՝ քսան, մյուսը՝ հինգ օր, իսկ շատերը՝ ոչ մի օր: Եւ ճամփորդն իմաստունին հարցնում է հանգուցյալների՝ այդքան քիչ օրեր ապրելու պատճառների մասին, իսկ իմաստունը պատասխանում է, որ այդ քարերին արձանագրված է քրիստոնյաների իրապես քրիստոնեաբար ապրած օրերի թիվը: Թերեւս նրանք բազում օրեր էին ապրել, բայց ապրել էին ավելի շատ իբրեւ թերահավատ հեթանոսներ, քան գիտակցված քրիստոնյաներ:

Եւ, վերջապես, ինչպես Քրիստոսն է ասում, հետամուտ լինենք Աստծու արքայության, եւ այդ ամենն ավելիով կտրվի մեզ ոչ միայն հանդերձյալ կյանքում, այլեւ այս աշխարհում:

Ուստի Սուրբ Հոգուց շնորհ հայցենք, որպեսզի իմաստությամբ կարողանանք տնօրինել մեր կյանքի օրերը, որոնք ողողված պիտի լինեն Հիսուս Քրիստոսով, նրա շնորհով եւ զորությամբ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:



Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(17 դեկտեմբերի, 2023)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Յաւել մեզ հաւատա»
(Ղուկ. Ժէ. 5):

Սիրելի հավատացյալներ,

Մղձավանջային, կորստաբեր տարին ավարտին է մոտենում, դրսում սկսվել է նախատոնական առեւտրային եռուզեռը, իսկ քրիստոնյաներս փորձում ենք նաեւ ինքնաքննությունամբ անդրադառնալ մեր ապրած կյանքին, արածին ու չարածին՝ նոր սպասումներ, ակնկալություններ ունենալով գալիք տարուց: Մեզնից յուրաքանչյուրը ցանկանում է, որ նոր տարում Աստված իրականացնի նաեւ հավաքական ու անձնական մեր տարբեր խնդրանքները: Եւ այս մտածումները հաճախ մեզ եկեղեցի են տանում, ուր ամեն Ս. Պատարագի ժամանակ Աստված շարունակում է խոսել մեզ հետ՝ ուսուցանելով, հորդորելով եւ խրատելով: Այսօրվա ավետարանական հատվածում կրկին ականատեսն ենք Հիսուսի եւ առաքյալների միջեւ հետաքրքիր մի զրույցի, երբ Տիրոջ աշակերտները մեկ բան են խնդրում՝ Վարդապետից՝ ասելով. «Ավելացրո՛ւ մեր հավատը»: Գուցե հիմա շատերդ զարմացած կամ տարակուսած եք առաքյալների խնդրանքի վրա: Մի՞թե նրանք էլ հավատի մեջ ամրանալու կարիք ունեին, երբ ամեն ժամ Տիրոջ հետ էին, ականատեսները Նրա հրաշքների ու բժշկումների: Առաքյալների այս պահվածքը հասկանալու համար անհրաժեշտ է ամբողջությամբ դիտարկել եւ քննել օրվա սուրբգրային ընթերցվածը: Նախքան առաքյալների այս խնդրանքը, Տերը երկու կարեւոր բանի մասին է խոսում՝ գայթակղության եւ ներողամտության:

Աշխարհը լի է բազում գայթակղություններով, որոնք հաճախ շեղում են մարդուն եւ մեղքի մեջ գցում: Հնարավոր չէ պատկերացնել մի աշխարհ,

որտեղ գայթակղություններ չկան: Պարզապես ժամանակի ընթացքում փոխվում են գայթակղության ձևերն ու գործիքակազմը, բայց երեւոյթը մնում է միշտ արդիական: Ոչ ոք ապահովագրված չէ գայթակղվելուց, սատանայի թակարդն ընկնելուց, մեղք գործելուց, բայց շատ կարեւոր է ճիշտ ժամանակին հետ կանգնել, ապաշխարել եւ Տիրոջը դառնալ: Այստեղ Հիսուս մի շատ կարեւոր շեշտադրություն է կատարում՝ վաճ տալով նրան, որի միջոցով գայթակղությունը կգա: Պատկերն ավելի խտացնելու նպատակով Տերն անգամ ասում է, որ ավելի լավ կլինեք այդ մարդու պարանոցից ծանր մի քար կախված լինեք, եւ ծովը նետվեք, քան փոքրերից մեկին գայթակղեցնեք: Ավելին՝ Հիսուս հորդորում է զգույշ լինել նաեւ ինքներս մեր հանդեպ: Ուրեմն՝ երբեք չպետք է գայթակղության առիթ դառնալ մյուսների համար՝ դրանով իսկ ոչ միայն քեզ դատապարտելով, այլեւ դիմացինիդ:

Հաջորդիվ Քրիստոս խոսում է քրիստոնեական ներողամտության կարեւորության մասին՝ ասելով, որ մենք պարտավոր ենք անգամ մեղանշած մեր եղբորը ներել: Հրեական մտածողության համաձայն՝ կատարյալ էր այն մարդը, որն իր եղբորը երիցս ներում էր: Զպետք է կենտրոնանալ թվերի վրա, քանզի Հիսուս փոխում է այս մտածողությունը եւ ներելու համար ավելի բարձր շեմ սահմանում: Նախ Հիսուս ներեց մեզ խաչի վրա եւ փրկության հույս տվեց՝ ամեն անգամ հիշեցնելով, որ անշափ շատ է մեզ սիրում: Նույն այս ներումն ենք հայցում նաեւ Տերունական աղոթքում՝ դիմացինի մեջ տեսնելով Աստծու պատկերը: Եկեք անկեղծորեն խոստովանենք, որ ամբողջովին չենք կարող խուսափել տարատեսակ գայթակղություններից, իրականում երբեմն նաեւ դժվար է ներելը, երբ ներսումդ անսահման ցավ եւ տառապանք կա: Բնականաբար Տիրոջ այս խոսքերն ազդել էին առաքյալների վրա, նրանք իրենց տկար եւ անօգնական էին զգում, ուստի եւ խնդրեցին իրենց հավատն ավելացնել՝ փորձություններին դիմանալու եւ հաղթահարելու համար: Հիսուսի պատասխանն էլ շատ հստակ էր. «Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք եւ այս թթենուն ասեք՝ արմատախի՛ր եղիր եւ տնկվիր ծովի մեջ, նա կհնազանդվի ձեզ» (Ղուկ. ԺԷ. 6):

Ավետարանական այս պատմությունից կարելի է եզրակացնել, որ մարդն ինքը չի կարող միայնակ իր հավատն ավելացնել, այլ միայն Տիրոջ օգնությամբ: Հավատն աստվածատուր շնորհ է, որ այլակերպում, պայծառակերպում է մարդու կյանքը, անհնարինը հնարավոր դարձնում՝ ուժ տալով արարելու եւ բարիք գործելու համար: Առանց հավատի ոչ միայն

դժվար է ապրելը, այլեւ նույնիսկ՝ մեռնելը: Հավատն է որոշակիացնում մեր կյանքի ընթացքը՝ այն դարձնելով իմաստալից եւ երջանիկ: Մի պահ փորձեք պատկերացնել, թե ինչ քառասյին, տխուր եւ ձանձրալի կլինեք կյանքն առանց հավատի, երբ անհուսովությունն ու անորոշությունը թագավորեին մեր հոգիներում: Այլ խոսքով՝ հավատը կենսական անհրաժեշտություն է մարդու համար, որը ցանկանում է լիարժեք կյանքով ապրել: Իսկ կատարյալ կյանքի հիմքն Աստծու հետ անմիջական կապն ու ամենօրյա հարաբերություններն են:

Հավատի շնորհիվ մեր առաջ բացվում են բոլոր փակ դռները, եւ մենք հնարավորություն ենք ստանում ճաշակելու աստվածային բարիքները, հաղորդ դառնալու անմատուց խորհուրդներին: Ինչպես միջնադարի նշանավոր ռաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզն է ասում. «Հավատը երկնքի արքայության բանալին է, որ Աստված տվեց մեզ. քանզի ով ձեռքում ունենա հավատի զորությունը, կբացի եւ կմտնի արքայություն»: Այդ խորհրդանշական բանալիները մեզ ձրիաբար տրվում են Ս. Մկրտության ժամանակ, երբ անդամագրվում ենք Քրիստոսի Եկեղեցուն եւ քրիստոնյա դառնում: Իսկ քրիստոնյայի կյանքը վայելք ու հաճույք չէ, այլ խաչի ճանապարհ, որի վերջնակետն Աստծու արքայությանն արժանանալն է: Հետեւաբար մեզնից է արդեն կախված, թե ինչպե՞ս կօգտագործենք բանալի-շնորհները՝ մեր փրկության, թե՞ կորստի համար:

Տեր Հիսուս Քրիստոս Իր երկրային առաքելության ընթացքում մեծապես կարեւորում էր հավատի առկայությունը: Չպետք է մոռանալ, որ ըստ Աստծու խոսքի՝ մանանեխի հատիկի չափ հավատը կարող է անգամ սարեր շուռ տալ ու բազմապիսի հրաշքներ գործել: Անկարելի բան չկա Տիրոջ աշակերտների, այս դեպքում՝ նաեւ քրիստոնյաներիս համար, եթե սրտանց եւ անվերապահ հավատում ենք Աստծուն եւ հավատարիմ մնում Նրա լույս պատվիրաններին: Սա է պատճառը, որ Հիսուս հաճախ բժշկումներից առաջ հարցնում էր, թե հավատո՞ւմ է տվյալ մարդն Իրեն: Իսկ արդեն բուժելուց հետո ասում, որ հենց հավատը փրկեց նրան: Ավետարանական լուսնոտ երեխայի բժշկության դրվագում էլ նրա հայրը բարձր գոռաց՝ ասելով. «Հավատում եմ, օգնի՛ր իմ անհավատությունը»: Այսպիսի հավատ է Աստված մեզնից սպասում՝ անպայմանավոր, հաստատուն եւ կենդանի:

Սիրելիներ, մեր ականջներում անընդհատ պետք է հնչի Տիրոջ խոսքը. «Մի՛ վախեցիր, միայն հավատա»: Վստահ եղեք՝ ինչ էլ լինի, Տերը մեզ մե-

նակ չի թողնելու կյանքի փոթորկահույզ օվկիանոսում մահաբեր ալիքների, դժվարությունների եւ փորձությունների ժամանակ: Նա ամուր բռնելու է մեր ձեռքը, չի թողնելու՝ խեղդվենք, եւ անպայման ամրացնելու է մեզ հավատի մեջ: Աստված ուզում է տեսնել մեր հավատը եւ այդ նույն հավատից բխած գործերը: Զորավոր հավատը կյանքի շարժիչ ուժն է բոլոր իրավիճակներում, որն օգնում է հաղթահարելու նույնիսկ թերարժեքության բարդությունները եւ հավատալու սեփական ուժերին: Ցավոք, վերջին շրջանում տկարացել ենք մեր հավատի մեջ, չենք հավատում այլեւս ապագա հաղթանակներին, ձեռքբերումներին, ապրում ենք ամեն օրով թեկուզեւ անորոշության մեջ՝ բավարարվելով ոչ բարեկամական տարբեր շրջանակներից հրապարակ նետված ստին ու կեղծիքին: Այնինչ մեր բառապաշարում պետք է բացառենք «չեմ կարող», «անհնարին է» արտահայտությունները, եթե իսկապես սրտանց հավատում ենք Աստծուն եւ մեր հույսը դնում ոչ թե մարդկանց, այլ հենց Նրա վրա: Այդ ժամանակ Աստված էլ կտա համապատասխան շնորհներն ու զորությունը՝ աստվածահաճո եւ հայրենաշեն ձեռնարկները կյանքի կոչելու համար: Մեզ մնում է աներկբա հավատալ Աստծուն եւ հավատարիմ լինել մեր նախնյաց հավատին, նրանց ստեղծած հոգեւոր արժեքներին: Միայն այս դեպքում հաջողություններ կարձանագրենք հայրենական կյանքում եւ անձնականում, կապրենք մեր երազած Հայրենիքում եւ անխոս երջանիկ կլինենք: Ես հավատում եմ հայի ստեղծարար ոգուն, մեր հաղթանակներին ու հաջողություններին, որոնք ուժ են տալիս ապրելու, ապրեցնելու, արարելու, պաշարելու համար: Եթե այս տեսակ հավատամքով չշարժվենք, ոտքի չկանգնենք ընկած վիճակից, չբժշկվենք մեր ցավերից, ապա մեզ ավելի տխուր ու կործանարար իրավիճակներ են սպասում: Բայց ես մնում եմ լավատես ու հուսառատ, որ կարողանալու ենք մեր ներսից վանել վախն ու անտարբերությունը՝ լծվելով պետականության կերտման սրբազան առաքելությանը, որտեղ կարեւոր դերակատարություն պիտի ունենա նաեւ Հայոց Եկեղեցին:

Թող հարուցյալ Տերը զորացնի մեզ՝ ամենքիս, առաքելական եւ լուսավորչական հավատի մեջ, առավել իմաստություն պարգևի պատասխանատվություն եւ որոշումներ ընդունող պաշտոնյաներին՝ հայոց նավը զերծ պահելու նավաբեկություններից ու առաջնորդելու դեպի խաղաղ նավահանգիստ:

Տիրոջ սերը, խաղաղությունն ու ողորմությունը մեզ հետ լինեն այսօր, վաղը եւ հավիտյանս. ամեն:

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 դեկտեմբերի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի ամենայն, որ բարձրացուցանէ զանձն
իւր՝ խոնարհեցի. եւ որ խոնարհեցուցանէ
զանձն՝ բարձրացի»

(Ղուկ. ԺԸ. 14):

Սիրելի՛ եւ բարեպաշտ հավատակիցներ,

Մենք՝ բոլորս էլ, գիտենք, որ դչուրին չէ այս աշխարհում ապրելն ու զերծ մնալը ամեն տեսակի գայթակղություններից ու մոլություններից, ի մասնավորի՝ հպարտության մեղքից: Մենք սիրում ենք, երբ մեզ նկատում են եւ մեծարում: Հաճելի զգացում է լինել գնահատված ու հարգված, սակայն միեւնույն ժամանակ վտանգավոր՝ հպարտության եւ անգամ ամբարտավանության մեղքի մեջ ընկնելու առումով: Այսօր մեր Տեր Հիսուս Քրիստոսի օգտաշատ պատգամը, որ փոխանցվում է Սբ. Ղուկաս ավետարանչի միջոցով, ներամփոփում է հերթական խորիմաստ առակներից մեկը՝ բոլորիս շատ հայտնի փարիսեցու եւ մաքսավորի հակադրություն պատմությունն ու բարոյագիտությունը:

Եկեք փորձենք հասկանալ, թե որն է իրական հակադրությունը փարիսեցու եւ մաքսավորի միջեւ: Ինչ էր ուզում մեր Տեր Հիսուս Քրիստոս պատգամել ու բացատրել իր լսարանին, եւ ինչ դասեր մենք կարող ենք այսօր քաղել այդ նույն առակից ու պատգամից: Բոլորս էլ ականատես ենք լինում, մանավանդ վերջին ժամանակներում, թե ինչպես է հպարտություն կոչվող զգացումը չարաշահվում շատ-շատերի կողմից: Հայրենիքով կամ զավակով հպարտանալիս երբեմն կամա թե ակամա ընկղմվում ենք հպարտության մեղքի մեջ եւ ստեղծում նոր շաստվածներ մեր կյանքում՝ մերժելով ճշմարիտ Քրիստոս Աստծուն, որ մեզ համար

խոնարհվեց իր փառքից եւ զոհաբերվեց մեզ համար Խաչի վրա՝ պարգեւելով մեզ կյանք եւ հարուստուն՝ իր իսկ հարուստան միջոցով:

Փարիսեցիները հրեա կրոնական կառավարիչներ էին, որոնք բարեպաշտորեն հետեւում էին ավանդույթներին եւ խստորեն պահպանում Հին Ուխտի օրենքը՝ հատկապես մաքրման կանոնները: Նրանք մեծ հարգանք էին վայելում ժողովրդի մեջ եւ արդարամտության օրինակ ծառայում: Այսօրվա մեր առակում նշված փարիսեցին տաճար է գնում աղոթելու եւ համեմատում է իրեն ուրիշների հետ՝ ենթարկվելով հպարտության ծանրագույն մեղքին: Այդ դարաշրջանում հարկահավաքներին կամ մաքսավորներին արհամարհում էին իրենց հայրենակիցները: Նրանց հոռմեական կառավարությունն արտոնել էր հարկեր հավաքել, բայց նրանք իրենց շահույթի համար բարձր տոկոսներ էին գանձում, եւ եթե պատահում էր, որ մարդիկ անվճարունակ էին լինում, վերջիններիս նույնիսկ հանձնում էին հոռմեական կառավարության դատին: Այսպիսով՝ մաքսավորները համարվում էին կեղեքողներ եւ անգամ դավաճաններ: Մեր առակի մաքսավորն ամաչում է իր վարքագծից, իր ազահուստյունից ու խաբեությունից, եւ որ ավելի կարեւոր է, ակնածանքով ու վախով խոնարհվում է Տիրոջ առաջ: Փարիսեցու պես հպարտ կանգնելու փոխարեն նա հակում է գլուխը եւ ծեծում կուրծքը՝ ասելով. «Տէր, ողորմիր ինձ՝ մեղավորիս»:

Մեր Տերը պատմում է այս առակն այն մարդկանց առջեւ, որոնք համոզված էին, որ իրենք ամենից արդարամիտներն են, եւ այդ պատճառով՝ չափազանց ինքնագոհ ու վստահ էին: «Առ Եբրայեցիս» թղթի հեղինակը խրատում ու թելադրում է կարեւոր մի պատգամ, որ ունենանք պատշաճ վստահություն ու համարձակություն՝ հիմնված ոչ թե մեր սեփական ձեռքբերումների եւ եսի, այլ Աստծու եւ Նրա խոստումների վրա՝ հարթելով ճանապարհը Նրա հետ մեր անքակտելի միության: Եւ պատգամը հետեւյալն է. «Ուրեմն, համարձակությամբ մոտենանք Նրա շնորհի աթոռին, որպեսզի ողորմություն ստանանք եւ շնորհ գտնենք այն ժամանակ, երբ օգնության կարիք ունենք» (Եբր. Դ. 16):

Եկեք հարց տանք մենք մեզ, սիրելի՛ հավատացյալներ, արդյո՞ք մենք չենք դատում ուրիշներին: Արդյո՞ք մենք նայում ենք ինքներս մեզ հոգեւոր հայելու մեջ, թե՞ շտապում ենք քննել ուրիշների քրիստոնեական սիրո մակարդակը: Արդյո՞ք մենք չենք թաքցնում մեր սեփական սխալներն ու մեղքերը եւ վիրավորում ուրիշներին՝ մատնացույց անելով նրանց սխալ-

ները: Սբ. Պետրոս առաքյալն էլ հորդորում է՝ ասելով, «Խոնարհուեցէ՛ք Աստծու հզօր ձեռքի տակ, որպէսզի ժամանակին Նա ձեզ բարձրացնի» (Ա. Պետրոս Ե. 6): Եւ այսպէս՝ Աստված՝ իբրեւ արդար Դատավոր, Իր անչափելի ողորմությամբ պիտի բարձրացնի մեզ՝ մեր խոնարհությանն ի պատասխան: Այսինքն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս կարդարացնի ու կբարձրացնի մեզ, եթե հետեւենք մաքսավորի լավագույն օրինակին:

Մի ճգնակյաց վանական ասել է. «Խնչ է նշանակում լինել բոլորի սպասավոր: Դա նշանակում է շնայել ուրիշների մեղքերին, այլ միշտ ուշադրություն դարձնել սեփական մեղքերին եւ անդադար աղոթել Աստծուն: Իսկ Նա տեսնում է մեր սրտերը, ուստի, երբ աղոթում ենք, լավ կլինի, որ հնարավորինս ազնիվ լինենք Նրա հետ»: Եւ երբ մենք անկեղծ ենք, թե ով ենք մենք իրականում Նրա աչքերում, արդյոք կկարողանանք տպավորություն թողնել Նրա վրա՝ նշելով մեր ձեռքբերումները՝ պարծենալով, թե որքանով ենք մենք ավելի լավը, քան մյուսները: Թե՛ մենք մաքսավորի պէս համեստաբար կխոնարհվենք մեր Արարչի՝ մեր մեծ Բժշկի առջեւ՝ արտասովախառն կրկնելով «Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Տեր ողորմյա» աղոթք-աղերսանքը:

Թող Տերն օրհնի մեզ՝ բոլորիս, եւ պարգեւի խոնարհ կենցաղավարություն, որ հարգենք իրար եւ սովորենք սիրել ու ներել միմյանց, ինչպէս մեր Տերն է պատվիրել ու վարվել Իր երկրային կյանքի ընթացքում՝ իբրեւ լավագույն օրինակ: Եկեք այս ոգով տոգորվենք ու դիմավորենք գալիք 2024 թվականն ու լուսառատ Սբ. Ծնունդը՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի: Հեռու վանենք կեղծիքը, գոռոզությունն ու ատելությունը եւ լինենք սիրող ու աղոթող միմյանց համար, որ մեր անձնական ու ընկերային կյանքը միահյուսված լինի Տիրոջ Խոսքով ու Կամքով՝ ի պայծառություն մեր ընտանիքների ու մեր սրբազան հայրենիքի՝ միշտ հիշելով ու կենդանի պահելով տերունական անխախտ պատգամը. «Որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացուի»: Ամեն:



Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՔՐԱՅԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ս. ՍԱՐԻԱՍ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 դեկտեմբերի 2023 թ.)

Յանուս Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելիներ, Եկեղեցին այսօր ցնծութեան մեջ է, որովհետեւ տոնն է մեզ համար շատ սիրելի ու ընկալելի մի սրբի՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի, առաջին սարկավագի եւ նահատակի: Սուրբ Ստեփանոսն առաջին վկան էր Քրիստոսի, որը տեսավ եւ վկայեց, որ երկինքը բացվել է իր առջեւ, եւ Տերը նստած է Հոր աջ կողմը. այս վկայությունն է, որ հայհույություն համարեցին հրեաները եւ նրան քարկոծելով՝ սպանեցին, որով եւ նա դարձավ Քրիստոսի առաջին նահատակ վկան: Քրիստոսի անխոնջ վկան՝ Սուրբ Ստեփանոսը, դարեր շարունակ եղել է մեր ժողովրդի համար նշանավոր մի սուրբ, եւ նրա անունով կառուցվել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ:

Եւ այսօր՝ դեկտեմբեր 25-ին, հավաքվել ենք Արմավիրի թեմի Սուրբ Աստվածածին այս եկեղեցում՝ տոնախմբելու հրաշալի սրբի տոնը եւ մեր մեղքերի թողութեան ու մեր հայրենիքի, պետականության զորացման համար խնդրելու նրա բարեխոսությունը: Համաձայն Եկեղեցու ծոցում ձեւավորված ավանդության՝ այսօրը նշվում է նաեւ որպես սարկավագների տոն: Տոնի խորհուրդն ու օրհնությունն ավելի ամբողջական է դարձնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ տնօրինությամբ այստեղ բերված Սուրբ Ստեփանոսի մասունքակիր աջը, որի օրհնաբեր ներկայությամբ պիտի կարողանանք պատշաճ կերպով կատարել այն ամենը, ինչ որ մեր խնդրանքն է Աստծուն, որպեսզի ձեռնադրությունը, որ տրված է որպես շնորհ եպիսկոպոսին, փոխանցվի նորընծա սարկավագներին: Մասունքակիր այս աջն այստեղ է, որպեսզի նաեւ մեր հավատացյալները, դիպչելով նրան, ստա-

նան այն օրհնությունն ու ջերմությունը, որ դարերի խորքից փոխանցվում են մեզ:

Հայ Առաքելական Եկեղեցին ոչ միայն պատշաճորեն տոնախմբում է համաքրիստոնեական նշանակություն ունեցող այս սրբի տոնը, այլև օրվա խորհրդին համահունչ ու ներդաշնակ կերպով տոնին միախառնում է գեղեցիկ մի արարողություն՝ սարկավագական ձեռնադրության հիասթափարկող: Այս գեղեցիկ օրով եւ մեզ ընձեռված առիթով մենք մեր զնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում բոլոր այն անձանց, որոնք պատրաստել եւ կրթել են մեր սաներին, որպեսզի նրանք հասնեն այս հոգեւոր աստիճանին: Այդ երախտավորներն են ճեմարանի տեսուչները, դասախոսները, նաեւ նրանք, ովքեր մշտապես կանգնած են եղել մեր սպասավորների կողքին, որպեսզի նրանք կարողանան ոտք դնել այս քաղցր շեմին եւ այսօր ի հոգեւորս արժանանան աստվածային եւ երկնային շնորհներին: Այն տեսանելի աստիճանները, որոնցով նրանք բարձրացան Սուրբ Սեղան, նրանց համար պետք է դառնան հոգեւոր անտեսանելի աստիճաններ՝ հասնելու համար այս Սուրբ Սեղանին, որտեղից պետք է կերակրեն մեր հավատացյալներին Քրիստոսի Մարմնով ու Արյունով:

Ահա այս կապակցությամբ նախ եւ առաջ շնորհավորում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի տնօրինությամբ եւ օրհնությամբ եւ համապատասխան քննական շրջանը հաղթահարելով՝ մեր սաները հասան այս կարեւոր աստիճանին: Շնորհավորում ենք նաեւ լուսարապետությանը, նաեւ բոլոր նրանց, ովքեր աշխատել եւ ջանքեր են գործադրել այս գործում: Մեր եղբայրական ջերմ ողջույններն ենք փոխանցում նաեւ թեմական առաջնորդին, որի թույլտվությամբ այսօր տեղի ունեցան այս գեղեցիկ պատարագը եւ ձեռնադրության կարգը:


Շնորհավորում եմ ամենքիս, շնորհավորում եմ ծնողներին եւ հարազատներին: Այս զգացումները, որ սարկավագներն ապրեցին այստեղ, նուրբ թելերով կապում են նրանց իրենց ծնողների եւ հարազատների հետ: Եւ սա է, որ կոչվում է հոգեւոր ջերմություն, զավակների եւ ծնողների, զավակների եւ հավատացյալների, սպասավորի եւ հավատացյալ ժողովրդի միջեւ:


Մենք շնորհավորում ենք Դավիթին, Հարությունին, Արսենին, Սերգեյին, Յուրիին, Արամայիսին, Արմանին, մյուս Դավիթին, Սարգսին, Գուրգենին եւ մյուս Արմանին, որ հասան այս հոգեւոր բարձր աստիճանին

եւ ստացան նոր մի անուն՝ բարեշնորհ սարկավագ: Այդ բարի շնորհներն են, որ իջել են նրանց վրա աստվածային եւ երկնային ուժի միջոցով: Այս շնորհներն են, որ մարդուն դարձնում են անվախ, դարձնում են քաջ, դարձնում են նվիրյալ սպասավոր Հայ Եկեղեցու: Եւ անգամ մեր նորագույն պատմության մեջ քիչ չեն այնպիսի սարկավագները, որ նմանվել են Սուրբ Ստեփանոսին, դարձել են նահատակ մեր ազգի եւ Եկեղեցու համար՝ Ռաֆիկ սարկավագը, Արմեն սարկավագը, Նարեկ սարկավագը եւ մյուս սարկավագները, որ իրապես իրենց կյանքը, առանց մտածելու, նվիրեցին մեր հայրենիքին, մեր Եկեղեցուն եւ մինչեւ վերջ հավատարիմ եղան իրենց կոչմանն ու քրիստոնեական արժանապատվությանը:

Ուստի, սիրելիներ, ուզում եմ նախ եւ առաջ բոլորս աղոթք բարձրացնենք մեր նահատակ սարկավագների՝ որպես մեր նորագույն պատմության ստեփանոսների հիշատակի համար, եւ խնդրենք բարեխոսությունը Սուրբ Ստեփանոսի, որ մեր նորընծա սարկավագները նույնպես միեւնույն քաջասրտությամբ, միեւնույն անվախությամբ սպասավորը լինեն Հայ Եկեղեցու եւ մեր ժողովրդի: Այս առումով է, որ մենք գալիս ենք եւս մեկ անգամ շնորհավորելու եւ բարին մաղթելու մեր սարկավագներին, որպեսզի, ինչպես Սուրբ Սեդանի վրա ձեռքերը վերեւ բարձրացրած եւ շարականի ներդաշնակ երգեցողության տակ լսեցին իրենց ուղղված այն խոսքը, թե՛ արժանի են, իրապես արժանանան մեր Եկեղեցու սպասավորները եւ անմնացորդ նվիրյալները լինելու բարձր պատվին:

Թող Տերն օրհնելով օրհնի ամենքիս, մեր երկիրը, մեր պետականությունը եւ մեր Եկեղեցին այժմ եւ միշտ, հավիտյանս հավիտենից, ամեն:





Doi: 10.56737/2953-7843-2023.12-28

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ ԽՆԴՐԻ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ՝

Հայոց Եկեղեցու աստվածաշնորհի ինքնատիպ եւ ուշագրավ դրսեւորումներից է անապակ գինով պատարագելու Սրբազան Ավանդությունը, որով հայերս տարբերվում ենք քրիստոնեական մյուս բոլոր եւ անգամ մեզ դավանակից Եկեղեցիներից²: Ծիսաաստվածաբանական այս հիմնախնդիրը դարերի հոլովույթում քննարկման նյութ եւ կռիվախնձոր է եղել միջեկեղեցական հարաբերությունների, աստվածաբանական երկխոսությունների ժամանակ՝ որոշ դեպքերում փոխարինելով անգամ քրիստոսաբանական քննարկումներին³: Ս. Հաղորդության խորհրդում անխառն գինու գործածումը ժամանակի ընթացքում ստացել է աստվածաբանական, կրոնափիլիսոփայական եւ խորհրդաբանական իր հիմնավորումները, որոնք շարադրված են մեր Եկեղեցու հայրերի, վարդապետների հոգեշահ գրվածքներում եւ ամրագրված են կանոնական որոշում-

¹* Ստացուել է՝ 11.12.2023, գրախօսուել է՝ 25.12.2023:

էլ. հասցէ՝ hayrzakaria@gmail.com:

² Խնդրի մասին տես Ջ. ՎՐԳ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 21–156:

³ Խոսելով ԺԳ. դարում հայ-հոմեական եկեղեցական հարաբերությունների ծիրում քննարկվող հարցերի շրջանակի մասին՝ Եզնիկ արք. Պետրոսյանը (այժմ՝ արքեպիսկոպոս) նկատում է. «Հոռւ արդեն զգացել էր, որ Հայ Եկեղեցու հետ միության մասին խոսել, նրան առաջարկելով ընդունել երկու բնության դավանանքը, անհնար էր: Եւ Հոռւը փոխում է դավանաբանական ամենաէական հարցի ուղղությունը՝ բնությունների հարցից անցնելով բաժակի մեջ ջուր խառնելուն: Սակայն այս արտաքին կողմն էր միայն: Բաժակի մեջ ջուր խառնելու հարցը Հոռւը այնպես էր ներկայացնում Հայ Եկեղեցուն, որի ընդունումը միանգամայն եւ ընդունումն էր երկու բնության վարդապետության» (Մովսէս Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉՄԸ.» դավանաբանական թուղթը. «Էջմիածին», 1974, Թ., էջ 37:

ներով: Անապակ բաժակի թնշուկի մասին մեր մատենագրության մեջ ստեղծված հակաճառական եւ ջատագովական երկերի ուսումնասիրությունը հստակ մատնացույց է անում աստվածաբանական որոշ հարցերի շուրջ Հայոց Եկեղեցու յուրահատուկ կեցվածքն ու մտածողությունը. քրիստոնեական ընդհանրական ծեսի ազգայնացման եւ տեղայնացման մեկ օրինակ, որում հաշվի են առնված նաեւ հայերիս գինի խմելու հազարամյակների սովորությունը եւ հոգեբանությունը⁴:

Մատենագրական սկզբնաղբյուրները վկայում են, որ ծիսապատմական տեսանկյունից Հայոց Եկեղեցում մշտապես գործածվել է անապակ գինի: Զպետք է բացառել, որ տարբեր ժամանակներում, ազդվելով հույներից կամ լատիններից, մեր Եկեղեցում օգտագործել են նաեւ ջրախառն գինի: Բայց նմանօրինակ երեւույթները տեղային բնույթ են կրել եւ ոչ երբեք ընդհանրական՝ կանխվելով ժողովական-կանոնական որոշումներով ու հայրապետական, վարդապետական գրվածքներով: Խնդիրն ավելի է բարդանում եւ նորովի մեկնաբանվում, երբ Զ. դարավերջում, ավելի ճշգրիտ՝ Է.-Ը. դարերում, գործնական ծիսական կյանքն արդեն ստանում է աստվածաբանական իր բացատրություններն ու հիմնավորումները, իսկ հարցը քննարկվում է ավելի լայն համապատկերում: Ամեն Եկեղեցի բնականաբար փորձում է հիմնավորել ծիսական իր սովորության կամ ավանդության ճշմարտացիությունը՝ բացահայտելով գործնական ծիսական կյանքի եւ աստվածաբանական մտածողության տարբերություններն ու մոտեցումները: Ուստի պատահական չէ, որ այս ժամանակաշրջանում մեր մատենագիրները Ս. Պատարագի գինու համար սկսում են կիրառել անապակ եզրույթը՝ ոչ միայն շեշտելով Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդության ճշմարիտ լինելը, այլեւ օտարներին ցույց տալով ծիսական այս սովորության մեր դիրքորոշման ապացույցներն ու հավատարմությունը Ս. Հաղորդության հաստատման ավետարանական պատմությանը:

Անապակ բաժակի հիմնախնդրին է անդրադարձել նաեւ միջնադարի խոշոր մտածող, աստվածաբան եւ մատենագիր Ս. Ներսես Շնորհա-

⁴ Հայոց աշխարհում գինու գործածության մասին տպագրվել են բազում ուսումնասիրություններ եւ հոդվածներ: Այստեղ պարզապես ցանկանում ենք վկայակոչել վերջին շրջանում տպագրված երկու կարեւոր աշխատություն. տե՛ս Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՔԱԼԱՆԹԱՅԱՆ, Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ս. ՀՈՐՈՍՅԱՆ, Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երեւան, 2005, էջ 11–304, Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա. ՆՍՅԱՆ, Ա. ԲՈՐՈՒՅԱՆ, Մ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Ս. ՀՈՐՈՍՅԱՆ, Բ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Հայկական խաղող եւ գինի, Երեւան, 2017, էջ 4–386:

լին († 1173)՝ իր զանազան գործերում պաշտպանելով Հայոց Եկեղեցու տեսակետը եւ հարցը քննարկելով տարբեր դիտանկյուններից: Անխառն կամ խառնյալ գինու ծիսական սովորությունը քննարկվել է նաեւ Ս. Ներսեսի կաթողիկոսության օրոք տեղի ունեցած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժամանակ: Շնորհալի հայրապետն այս եւ մյուս ծիսական տարբերությունները փորձում է բացատրել Եկեղեցիների միջեւ խզված միությունը վերականգնելու վճռականությամբ եւ կամքով՝ անսահման լայնախոհությամբ, եղբայրսիրության ոգով եւ կնճռոտ հարցերը պարզ լեզվով շարադրելու մտությամբ զարմացնելով բոլոր կողմերին: Ուստի նրա աստվածաբանական մտածողությունն ու դավանաբանական, ծիսական եւ այլ հարցերին մոտեցումները պետք է հասկանալ եւ վերլուծել հենց Եկեղեցիների միության շնորհալիական ըմբռնումների տիրույթում: Այս տեսակետից պատմական արժեքով եւ այժմեականությամբ առանձնանում են հատկապես 1165–1173 թթ. գրված նրա նամակները, որոնցում առավել համակարգված ներկայացված են Հայոց Եկեղեցու դիրքորոշումները եւ Եկեղեցու միության մասին մեծ հայրապետի տեսլականը: Շնորհալին նախանձախնդրությամբ, սիրով ու ջանադրաբար պաշտպանում է առաքելական մեր Եկեղեցու դավանական սկզբունքները, ծիսական սովորություններն ու տարբերությունները՝ ամեն անգամ օտարներին ցույց տալով Հայոց Եկեղեցու հավատարմությունն ուղղափառ հավատքի եւ հայրախոսական ժառանգության հանդեպ:

Ըստ Ս. Ներսես Շնորհալուն՝ Հայոց Եկեղեցին Քրիստոսի Եկեղեցու անբաժանելի մասն է եւ ուղղադավան: Բայց դարեր շարունակ մենք ունեցել ենք եւ ունենք նաեւ ծիսական առանձնահատուկ ավանդություններ, բաղադր չենք՝ ի հեճուկս Արեւելքի, բայց միասնաբար լատինների հետ, անապակ գինի՝ հակառակ քրիստոնեական բոլոր Եկեղեցիների եւ այլն: Չնայած այս տարբերություններին՝ Հայոց Եկեղեցին շարունակում է մասկազմել Ընդհանրական Եկեղեցու, իսկ միության հասնելու միակ անհրաժեշտ գլխավոր պայմանը Տիրոջից, առաքյալներից եւ հայրերից փոխանցված անաղարտ հավատքի ճշմարտությունն է⁵: Եթե դավանաբանական,

⁵ Այս մասին տե՛ս ARAM I, Saint Nersēs the Gracious and Church Unity: Armeno-Greek Church Relations (1165–1173), Antelias-Lebanon, 2010, էջ 82–96, ՀԱՅՐ Լ. ԶԵՔԻԵԱՆ, Համամիությունական տրամախոսություն մը ԺԲ. դարուն. Բանակցություններ Ս. Ներսէս Շնորհալիի եւ կայսերական նուիրակ Թէորիանոսի միջեւ հայ եւ բիւզանդական եկեղեցիների միութեան շուրջ,

ծիսական տարբերությունները, աստվածաբանական բանաձևումները, եզրույթների մեկնաբանությունն ուղղափառության սահմաններում են եւ չեն աղճատում բուն հավատքը, ապա դրանք երկրորդական են՝ միշտ ի մտի ունենալով Եկեղեցիների միությունը վերահաստատելու սրտանց եւ իրական ցանկությունը: Հետեւաբար պետք է ճանաչել եւ ըմբռնել տարբեր Եկեղեցիների ծիսական ավանդություններն ու աստվածաբանական մտածողությունը, հարգել դրանք եւ միմյանցից չպահանջել այնպիսի «զիջումներ», որոնք պարտադիր չեն մարդու փրկագործության համար: Շնորհալիւն այս հարցում կարեւորում է խորհուրդների կամ ծեսերի կատարումն ուղղափառ հավատքով եւ մաքրակենցաղությամբ. «Եւ արդ, եթէ փոյթ էր Հոգւոյն՝ միոյն հաճոյ լինել Աստուծոյ, եւ միւսոյն՝ ոչ, ցուցեալ էր եկեղեցւոյ՝ կամ առաքելովն եւ կամ սրբոց վարդապետացն բանիւմ, բայց հաստատեալ գիտեմք, եթէ ոչ այլ ինչ է հաճոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատն եւ մաքուր վարքն»⁶: Ապա սրբակենցաղ հայրապետը հավելում է. «Այլ եթէ պարզ մտամ եւ ոչ հերձուածողական ինչ կարծեամ կատարին այսոքիկ, աւանդութիւնմ են ազգաց եւ ոչ առաքելութիւն կամ նուագութիւն ինչ ի հաւատս: Վասն որոյ յորժամ գլուխն, որ է հաւատն, միանայ եւ յաւիթի ի գլուխն Քրիստոս, յայնժամ եւ անդամն, որ են աւանդութիւնն, ուղղին եւ կամ հաճոյանան միմեանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ»⁷:

Խոսելով բազարչ հացի եւ անապակ բաժակի՝ Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդությունների մասին՝ Ս. Ներսէս Կլայեցին մեջբերում է նաեւ Ս. Հաղորդության խորհրդի հաստատման վերաբերյալ Ս. Պողոս առաքյալի խոսքը (տե՛ս Ա. Կորնթ. ԺԱ. 28–29), որում առաքյալը ոչ թէ խոսում է խմորյալ կամ անխմոր, անապակ կամ խառնյալ բաժակի, այլ Տիրոջ մարմնին եւ արյանն արժանաբար մոտենալու մասին: Հետեւաբար Շնորհալու ընդհանրական եզրակացությունը մեկն է. «Եւ այլ քառոգ աստուածային բանին նոյնպէս ո՛չ զնիւթոյն զանագանութիւն, այլ զարժա-

«Բազմավէպ», թիվ 13, Վենետիկ –Ս. Ղազար, 1978, էջ 32–39, Ա. ՀԱՏԻՏՅԱՆ, Ս. Ներսէս Շնորհալին եւ եկեղեցական միության հարցը, «Էջմիածին», 1973, ԺԲ., էջ 61–71:

⁶ Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., Երեւան, 2022, էջ 343:

⁷ Անդ: Այս թղթի մեկ այլ հատվածում Շնորհալին կրկին նույն միտքն է արտահայտում. «Զնոյն ասացում եւ յաղագս բաժակին, զի թէ ջրով ոք կատարէ եւ եթէ առանց ջրոյ, ոչ եւ ընդ միոյ ի սոցանէ կամ փառս ընդունիցի յԱստուծոյ եւ կամ տանջանս. այլ որք սուրբ սրտի եւ ուղիղ հոգւով մատուցանեն, փառաւորին ի նմանէ: Եւ որք անմաքուր խորհրդով եւ վատքաւ գործովք, տանջանաց ակնկալցին, որով արինակաւ եւ կատարեսցեն, եթէ անապակ եւ եթէ խառնեալ ընդ ջրոյ», անդ, էջ 345–346:

նաւորութիւն քաղաքացի»⁸: Չէ՞ որ Աստված կարող է եւ անապակ գինին, եւ խառնյալը դարձնել Իր ճշմարիտ արյունը: Այլ խոսքով՝ Ս. Հաղորդության խորհրդում գործածվող նյութերի տարբերությունները չեն կարող կասկածի տակ դնել դրանց վավերականությունը: Էկոմենիկ շարժման եւ ծիսական աստվածաբանության հայեցակարգային այս մտածողությանմբ Ս. Ներսէս Շնորհալիւն չի պարփակվում մեր Եկեղեցու սահմաններում, այլ իր մտքի թռիչքով ազատորեն ճախրում է համաշխարհային քրիստոնեական մատենագրության եւ հատկապէս աստվածաբանական մտածողության երկնականմարում՝ իրավամբ դառնալով համաքրիստոնեական հայրերից եւ ժամանակակից մտածողներից մեկը: Հստակ է, որ աստվածաբանական կնճռոտ հարցերի վերաբերյալ շնորհալիական մոտեցումներն այսօր էլ կարող են ուղենիշ լինել միջեկեղեցական հարաբերություններում եւ աստվածաբանական երկխոսությունների ժամանակ: Նույն այս աստվածաբանական մտածողությունն է պաշտպանում նաեւ Գլաձորի համալսարանի հիմնադիր րաբունապետ Եսայի Նչեցին (1260–1338) Թավրիզի առաջնորդ Տէր Մատթեոսին եւ Ատրպատականի հայությունն ուղղված դավանաբանական թղթում. «Զոր թէ կատարեալ հաւատով եւ մաքուր վարով կատարեն, երկոքեանն ընդունելի են եւ հաճոյ Աստուծոյ եւ քաւիչ մարդկան»⁹:

Ծիսաաստվածաբանական այս հիմնախնդրի շնորհալիական տեսությունն է շարունակում եւ փիլիսոփայական տեսանկյունից մեկնաբանում Կիլիկյան Հայաստանի մեկ այլ հսկա մտածող եւ ազգային-եկեղեցական գործիչ Ներսէս արք. Լամբրոնացին (1153–1198)՝ եկեղեցական զանազան ավանդություններում նույնպէս կարեւորելով միմյանց հանդեպ հարգանքը, սերը եւ հավատքը: Նա Ս. Հաղորդության խորհրդի գինու մեջ ջուր խառնելուն կամ չխառնելուն հետաքրքիր պարզաբանում է տալիս իր նշանավոր «Ատենաբանության» մեջ: Քանի որ բոլոր նյութերն ստեղծված են չորս տարրերից, հետեւաբար անապակ գինին էլ զերծ չէ դրանցից: Ուրեմն՝ բոլոր թյուրըմբռնումները կամ տարբերությունները «տղայոց մտաց... կարծիք» են¹⁰: Ս. Հոգու ներգործությունն է, որ հացն

⁸ Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 346:

⁹ «Ճռաքաղ» ամսագիր կրօնական, բանասիրական եւ ազգային գիտելեաց, հրատարակեալ ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց եւ ի Զարմայրայ Մսերեանց, հտ. Բ., տետրակ Ժ., Մոսքուա, 1860, էջ 163:

¹⁰ Ատենաբանութիւն Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ, թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան Անկիւրացւոյ

ու գինին դարձնում են Քրիստոսի իրական մարմինն ու արյունը: Մեզ մնում է տեսանելի նյութերին նայել աղոթքով եւ հավատքի աչքերով¹¹: Հատկապես Ս. Ներսես Շնորհալուց եւ Ներսես Լամբրոնացուց կատարված վերոբերյալ մեջբերումներն ու աստվածաբանական-կրոնափիլիսոփայական մոտեցումները խոսուն վկայություններ են ժամանակաշրջանի էկոմենիկ ոգու եւ եկեղեցական լայնախոհ մտածողության, երբ փորձ էր կատարվում ընդհանուր եզրեր գտնել եկեղեցական միության համար՝ դավանաբանական, ծիսական տարբերությունների մեջ փնտրելով էականն ու միասնականը, իսկ զանազանության մեջ տեսնելով Եկեղեցիների հարստությունն ու արարողակարգային շքեղությունը, որոնք չեն կարող խոչընդոտել այդքան բաղձալի Եկեղեցիների միությունը:

Ս. Ներսես Շնորհալին անկասկած քաջատեղյակ է, որ միայն Հայոց Եկեղեցին է անապակ գինով Ս. Պատարագ մատուցում՝ հավատարիմ մնալով նախնայաց ավանդությանը¹²: Նա շարունակում եւ զարգացնում է խնդրի վերաբերյալ օձնեցիական հստակ մոտեցումը¹³՝ 1165 թ. բյուզանդական Մանուել Ա. Կոմնենոս կայսրին հղած «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ» թղթում շեշտելով, որ անապակ գինով պատարագելու ավանդությունը հաստատել է հենց Ս. Գրիգոր Լուսավորիչը. «Զի ի Լուսաւորչէն մերմէ՛ ի սրբոյն Գրիգորէ ունիմք զայս աւանդութիւն, որպէս ընկալաւ նա ի նախնեաց սրբոց հարցն, որ յառաջ քան զնա»¹⁴: Հաշվի պետք է առնել այն, որ դարերի ընթացքում ընդհանրա-

ի Մխիթարեան միաբանութենէ եւ տպագրեալ ի կրկին բարբառ՝ հանդերձ իտալական ծանօթութեամբք, Վենետիկ, 1812, էջ 130–134:

¹¹ Հմմտ. անդ, էջ 136–138:

¹² Այսօր Հայոց Եկեղեցում գործածում ենք գործարանային կարմիր գինի: Շնորհալին մեզ հանդիպած միակ մատենագիրն է, որ թույլատրելի է համարում նաեւ այլ գույնի գինու գործածությունը Ս. Պատարագի ժամանակ. «Որպէս եւ արեանն Քրիստոսի նիւթ գինին, յորոց եւ իցէ գունոց՝ ընդունելի է, եթէ սեւաւ, եթէ կարմիր եւ եթէ սպիտակ», Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 297:

¹³ 726 թ. Մանագլեբտի ժողովի Ը. կանոնում ասվում է. «Արժան է զհացն անխմոր եւ զգինին անապակ համել ի սուրբ սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի եւ յսոմարեմել յայլ ազգաց բրիստոնէից յաւանդութիւնս, զի սուրբ Լուսաւորիչն յարիմականէն բերեալ զայս առաքելաբար հրաման ետ կատարել իւրոյ վիճակելոցն... եւ մեզ ի նմին պարտ է յարամնալ եւ շրջողսլ եւ ի բաց, եւ շառնել նորանեալ ինչ». Կանոնագիրք հայոց, աշխատ.՝ Վազգեն Հակոբյանի, հտ. Ա., Երեւան, 1964, էջ 519: Կանոնական այս որոշումը հետագայում հզոր կովան է դարձել մեր մատենագիրների, վարդապետների համար անխառն գինով Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդությունը պաշտպանելու:

¹⁴ Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 302, 343: Շնորհալու այս նամակն իր Պատմության մեջ է ներառել նաեւ Կիրակոս Գանձակեցին. տե՛ս

ցած աստվածաբանական մտածողության համաձայն՝ Լուսավորչի հաստատած ավանդություններից շեղումն ընկալվել է որպես հեռացում ուղղափառությունից եւ հայրերի հավատքից¹⁵։ Այստեղ Շնորհալիին անմիջապես վկայակոչում է Ս. Ավետարանը՝ ընդգծելով, որ Քրիստոս Ս. Հաղորդության խորհուրդը հաստատելիս ջրի անուն չի տվել¹⁶։ Զպետք է մոռանալ, որ Վերնատան Ավանդությունն անապակ բաժակի գործածության՝ Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդության հիմքերից գլխավորն է, որը շարունակաբար վկայակոչել են մեր վարդապետներն ու հայրապետները։ Ավետարանական այս ճշմարտությունից դուրս մնացած ամեն ինչ մեկնաբանության ծիրում է։ Ինչպես իր նախորդների, այնպես էլ Շնորհալու համար անհասկանալի է ջրի ավելացումը Ս. Հաղորդության գինու մեջ, որովհետեւ այն այլեւս Տիրոջ անապական արյունը չէ, այլ խառնածին մի բան¹⁷։

Հետաքրքիր է, որ բազմաշնորհ հայրապետն իր խոսքը հաստատելու համար վկայակոչում է նաեւ Ընդհանրական Եկեղեցու հայրերից Ս. Հովհան Ոսկեբերանի (347–407)՝ Մատթեոսի Ավետարանի մեկնության համապատասխան հատվածը։ Ոսկեբերան հայրապետը, մեկնաբանելով Մատթեոսի Ավետարանի ԻԶ. 29 համարը, գրում է. «Եւ ընդէ՞ր ո՛չ ջուր արբ յորժամ յարեամ, այլ զինի, զի եւ զմիւս հերձուածն արմատափի խլեսցէ, զի եմ ոմանմ, որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն, ցուցանէ՞ քէ յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ զինով աւանդեաց. եւ յորժամ յարեամ՝ առանց խորհրդոյ ի լոկ սեղանն զգինին ի կիր արկ. ի ծննդենէ որթոյ ասէ, եւ որթն զինի եւ ո՛չ ջուր ծնանի»¹⁸։ Բանն այն է, որ Ոսկեբերանի այս խոսքը տարբեր կերպ է մեկնաբանվել բյուզանդական, լատինական եւ հայկական մեկնաբանական, հայրաբանական գրականության մեջ¹⁹։ Եթե եկեղեցական մեր

ԿՐԻՍՏՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, Պատմություն Հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 121–147։

¹⁵ Այս մասին տես Զ. ՎՐԳ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 55–79։

¹⁶ Մանրամասն տես անդ, էջ 80–95։

¹⁷ Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 343, հմմտ. Զ. ՎՐԳ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 130–151։

¹⁸ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, էջ 106, Patrologia Graeca 58, col. 740, ed. J. P. Migne, 1–161, Paris, 1857–1886։ Խնդրի մասին տես Տ. ՍՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, Ս. Հովհան Ոսկեբերանի մեկ վկայության մասին. «Էջմիածին», 2007, Ե., էջ 24–30։

¹⁹ Հմմտ. ԳՈՎՏ. Ա. ՔԷՆՅ. ՕՂՈՒԳԵԱՆ, Մատենագրական հետազոտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 86։

մատենագիրներն այն վկայակոչում են հօգուտ անապակ բաժակի՝ Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդության, ապա մյուսները պնդում են, որ այստեղ իրականում Ս. Հովհան Ոսկեբերանը դատապարտում է Ս. Պատարագը միայն ջրով կատարող ժամանակի աղանդավորներին: Խնդիրն այնքան է կարեւորվել, որ հատուկ քննարկվել է 691/692 թթ. Հուստինիանոս Բ. կայսեր օրոք Կոստանդնուպոլսում գումարված Տրուլլոյի Բ. ժողովում: Մասնավորապես այս ժողովի ԼԲ. կանոնն անդրադառնում է անապակ բաժակի հայկական սովորույթին եւ «ուղղափառ» տեսանկյունից մեկնաբանում Ոսկեբերանի խոսքը²⁰: Սա եւս մեկ անգամ փաստում է, որ այդ ժամանակ Հայոց Եկեղեցին անապակ գինի էր գործածում Ս. Պատարագի ընթացքում, իսկ Ս. Հովհան Ոսկեբերանի խոսքի հայկական մեկնաբանությունը լայնորեն տարածված էր հայկական իրականության մեջ: Զարմանալի է, որ չնայած Շնորհալի հայրապետը ծանոթ է Ոսկեբերանի խոսքի տարաբնույթ մեկնաբանություններին, բայց ոչինչ չգիտե ջրամատուցողների²¹ աղանդի մասին. «Եւ մեք զամուսնոցս ոչ երբեք լուսմ, եւ ոչ ի գիրս զամիմաստիցն զայն հերձուած ընթերցամ»²²: Հետ Ս. Ներսեսի՝ եթե ինչ-որ դեպքում կարելի է փորձել հասկանալ ջրախառն գինով պատարագելու Եկեղեցիների ծիսական սովորությունը, ապա ամենեւին անընկալելի է միայն ջրով Ս. Պատարագ մատուցելը, որը հակառակ է հենց Վերնատան Ավանդությանը²³:

Ս. Ներսես Շնորհալու ծիսաստվածաբանական հայեցակարգում անապակ բաժակի խնդիրը մեկնաբանվում է նաեւ մեկ այլ դիտանկյունից: Նա ոչ միայն պաշտպանում է Հայոց Եկեղեցու ծիսական այս սովորույթը, այլեւ վկայակոչում է Ընդհանրական Եկեղեցու հայրերին: Մինչ

²⁰ The Council in Trullo revised, edited by George Nedungatt, Michael Featherstone, Pontificio Instituto Orientale, Rome, 1995, p. 106–108. Այս ժողովի մասին տե՛ս նաեւ ԴՈՒՅ. Ն. ԱԻ. ՔԷՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ, Քաղկեդոնի ժողովի ընթացքը եւ հետապնդած նպատակների քննությունը Թրուլլոյի հինգերորդ-վեցերորդ (SINODUS QUINSEXTA) տիեզերական ժողովներում. «Սիոն», 2022, ապրիլ–հուլիս, էջ 195–211, Գ. ԿԱՅԱՐՅԱՆ, «Армянские» правила Трулльского Собора // Методический. 2022. № 1 (7), էջ 46–73:

²¹ Այսպես էին կոչվում աղանդավորական այն հոսանքները, որոնք տարբեր պատճառներով մերժում էին գինու գործածումը Ս. Պատարագի մեջ՝ այն կատարելով բացառապես ջրով: Դրանցից էին էթիոպականները, մանիքեականները, մարկիոնականները եւ էնկրատիստները. ավելին տե՛ս Encyclopedia of Early Christianity, New York, London, 1998, էջ 1179, Ե. Մ. ՎՐԴ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայրաբանություն, Ա. մաս (Բ.–Գ. դդ.), Ս. էջմիածին, 1996, էջ 235–236:

²² Մատենագիրը հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 344:

²³ Անդ:

քրիստոնեական մյուս եկեղեցիները Տիրոջ կողմից բխած արյունից ու ջրից եզրակացնում են, որ Ս. Հաղորդության բաժակը պետք է ջրախառն լինի²⁴, Շնորհալի հայրապետը շարունակում է ավետարանական տվյալ հատվածի հայրախոսական մեկնաբանությունը՝ ջուրը դիտարկելով որպես Ս. Մկրտության նշանակ, իսկ արյունը՝ Ս. Հաղորդության. «Կրկնավտակ կողմն աղբեօ՛ր եկեղեցի իւր հաստատի. ջրովն մաքրի, զարիւնն ըմպէ»²⁵, «...բղխեալ ի Քէն վտակ կրկին ի նորոգումն կողածնին, բա՛ց գրեւան իմ յարբուցումն Քո արեան կեմարարարին, լուա՛ դարձեալ յաւազանին»²⁶: Իր խոսքերն ավելի արժանահավատ դարձնելու նպատակով Շնորհալին մեջբերում է նաեւ եկեղեցու տասներկու վարդապետներից Ս. Հովհան Ոսկեբերանին, Ս. Գրիգոր Նյուսացուն, Ս. Եփրեմ Ասորուն, ինչպես նաեւ վկայակոչում է «բազումք ի վարդապետաց», որոնք ուղղափառ մեկնաբանությամբ բացատրել են սուրբգրային համապատասխան տեղին²⁷:

Ս. Ներսես Շնորհալու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը փաստում է, որ անապակ բաժակի Սրբազան Ավանդության ջատագովության հարցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավատարիմ է լուսավորչահաստատ ծիսական սովորությանը եւ իրեն նախորդած հայրապետների, վարդապետների տեսակետներին՝ այլոց ի ցույց դնելով Հայոց եկեղեցու հակափաստարկներն ու մեր հստակ դիրքորոշման հիմքերը: Կարելոր է արձանագրել նաեւ, որ լայնախոհ հայրապետը նույնիսկ մեր եկեղեցու ծիսական ավանդությունները պաշտպանելիս չի մոռանում եկեղեցու խաթարված միությունը վերականգնելու իր փափագի մասին՝ այս պարագայում կարելորդելով ոչ թե նյութի անխառն կամ խառնյալ լինելը, այլ «սուրբ սրտիւ եւ ուղիղ հոգւով» խորհրդի կատարումը: Միով բանիվ՝ ի դեմս Ս. Ներսեսի՝ մեր աչքի առաջ հառնում է ծիսական աստվածաբանության առաջամարտիկը, եկեղեցիների միության ջատագովն ու ուղղադավան հայրապետը:

²⁴ Տէս Զ. ՎՐԳ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 96–110:

²⁵ Զայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 196:

²⁶ Անդ, էջ 198: Տէս նաեւ Տեառն Ներսեսի Շնորհալույ Հայոց Կաթողիկոսի Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 13, 227–228:

²⁷ Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ., էջ 344–345:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսես Շնորհալի, Հայոց կաթողիկոս, անապակ բաժակ, պատարագ, գինի:

РЕЗЮМЕ

Одним из интересных литургических обычаев Армянской Церкви является Святое Предание Евхаристии с Неразбавленной чашей, которым мы отличаемся от других Христианских церквей. Этот литургический-богословский вопрос на протяжении веков был предметом обсуждения в межцерковных отношениях и богословских диалогах, в некоторых случаях заменяя даже христологические споры. В армянской церковной библиографии сохранилось много апологетических, полемических трудов по данному вопросу, в которых Предстоятели и архимандриты Армянской Церкви отстаивают нашу позицию, трактуя вопрос с библейской, богословской, философской и мистической точек зрения. Проблему Неразбавленной чаши затрагивает также видный богослов, летописец средневековой Армении Святой Нерсес Шнорали во время армяно-византийских церковных переговоров. Эти и другие литургические различия он пытается объяснить стремлением восстановить разорванное единство Церквей, своим широким кругозором, духом братской любви обосновывая позицию и богословское мышление Армянской Церкви. Согласно автору, главное не различия в материалах, а совершение таинства с православной верой и добродетельным поведением, ибо Всемогущий Бог может в Свою истинную Кровь обратить и разбавленное и неразбавленное вино. В качестве главного доказательства он приводит утверждение Иисусом Христом таинства Евхаристии на Тайной Вечере, где нет какого-либо упоминания о добавлении воды. В то время как другие Христианские церкви объясняют свои литургические обычаи истекшими из пронзенного бока Господа кровью и водой, святой Нерсес продолжает святоотеческое толкование этого евангельского отрывка, воду рассматривая символом Святого Крещения, а кровь — Святого Причастия.

SUMMARY

Using of Unmixed Chalice in the Eucharist is one of the interesting Liturgical practices of the Armenian Church, which distinguishes us from other Christian Churches. This Liturgical-theological issue has been a subject of discussion during inter-church relations and theological dialogues over the centuries, replacing even christological discussions in some cases. There are many discourses and apologetic works on the issue in the Armenian Ecclesiastical Literature, in which the Patriarchs and Fathers of the Armenian Church defend our position, interpreting the problem from Biblical, Theological, Philosophical and Mystical perspectives. The problem of Unmixed Chalice was also reflected by the prominent theologian and chronicler of Medieval Armenia St. Nersēs the Gracious during the Armenian-Byzantine ecclesiastical negotiations. He tries to explain these and other Liturgical differences with the desire to restore the broken Union between the Churches, justifying the position and theological thinking of the Armenian Church with infinite broad-mindedness and the spirit of brotherly love. According to the Author, the importantace is not the differences in materials, but the fulfillment of the Sacrament with orthodox faith and virtuous behavior, because Almighty God can make mixed and unmixed wine into His true blood. As the main evidence, he cites the institution of Holy Communion by Jesus during the Last Supper, where there is no mention of the addition of water. While other Christian Churches explain their Liturgical Tradition by the blood and water came out from the Lord's side, St. Nersēs continues the patristic interpretation of the given Gospel passage, considering water as the symbol of Baptism, and the blood of Holy Communion.



ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

**ՔԱՐՈՉ ԵՐԿՐՈՐԴ ԳԱՆՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ.
«ՁԵՐ ԳՕՏԻՆԵՐԸ ՁԵՐ ՄԷՋՔԻՆ ԱՄՐԱՅՈՒՅԱԾ, ԵՒ ՃՐԱԳՆԵՐԸ ՎԱՌԱԾ
ԹՈՂ ԸԼԼԱՆ»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ**

Այս օրը Երկրորդ Գալուստ կը կոչուի ու Երկրորդ Ծաղկազարդ, այդ պատճառով տօնելի է այժմ:

Գիտելի է, թէ քերթողները բոլոր անունները երեք բաներէ յառաջացած են կ'ըսեն, այսինքն՝ իրէն, ձայնէն ու գործէն: Իրէն՝ ինչպէս սափորը, ձայնէն՝ ինչպէս ճնճողուկը, գործէն՝ ինչպէս սղոցը, այդպէս ալ բոլոր տօները այս երեքէն դրուած կ'ըլլան. իրէն՝ ինչպէս Վարդավառը, որովհետեւ այնտեղ Տէրը իբրեւ վարդ վառեցաւ ու պայծառ կերպով երեւցաւ: Ծննդեան տօնը, քանի որ այդ օր մեր Տէրը Կոյսէն ծնաւ: Իսկ ձայնէն՝ ինչպէս Աւետեաց տօնը: Իսկ Զատիկը «ազատութիւն» կը լսուի: Եւ նոյնը ասիկա գործէն, որովհետեւ այնտեղ մարդկային բնութիւնն ազատեց. իսկ այս տօնը Գալուստ կը կոչուի գործին համար, որովհետեւ մեր Տէրը՝ Բանն Աստուած, մարմինով Հօր աջ կողմը ելաւ:

Դարձեալ, բոլոր տօները երեքի կը բաժնուին:

Տօն կայ, որ Հին Ուխտին մէջ օրինականապէս կար, իսկ Նորին մէջ նոյնը ճշմարտութեան փոխուեցաւ, ինչպէս Զատիկի տօնը, որու ընթացքին գառնուկը կը զենէին, այստեղ փոխուելով՝ ճշմարիտ Գառնուկը՝ Քրիստոս կը զենուի: Տակաւին, ինչպէս Պենտեկոստէի տօնը՝ այնտեղ յիսուն թիւը մարմինին ազատարար էր, որ յոբելեան կը կոչուէր², իսկ այստեղ Սուրբ Հոգիի տօնին փոխուեցաւ, որ անբաւ մեղքերէ ու անգիտութիւններէ [մարդու] հոգիին ազատարարն է:

Երկրորդ՝ տօներ կան, որ առաքեալները Քրիստոսէ ետք սահմանեցին, ինչ որ նախապէս չկային, ինչպէս Ծննդեան եւ Աւետումի տօները, Ծաղկազարդն ու Վարդավառը, Կոյսին փոխումը [վերափոխում], որովհետեւ ասոնք են, որ Բանին տնօրինութիւնը կը ցուցնեն:

Երրորդ՝ տօներ կան, որ աւանդաբար սահմանուած են հայրապետներուն ու մեր նախնի սուրբ հայրերուն կողմէ, ինչպէս Խաչի տօնը, որ

¹ Ղուկ. ԺԲ.35:

² Տէս Ղեւտ. ԻԵ.10:

Սուրբ Կիրեղը սահմանեց³: Նմանապէս, բոլոր սուրբերուն տօները հայրերու աւանդութենէն սորվեցանք: Այդպէս ալ այս տօնը, որ Երկրորդ Ծաղկազարդ կը կոչուի, մեր հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի աւանդութենէն ունինք⁴: Որովհետեւ, մինչ ան վիրապ նետուած էր, այնտեղ՝ իր տառապանքներուն մէջ Աստուծոյ հրեշտակը կը ծառայէր իրեն ու ամէն օր կը մխիթարէր զինք: Իսկ այս օրին [Երկրորդ Ծաղկազարդին] հասնելով՝ Տիրոջ հրեշտակը չի գար, ան կը տրտմի. յաջորդ օրը երբ հրեշտակը կու գայ, ան կը հարցնէ անոր նախորդ օրը չգալուն պատճառը: Հրեշտակը կ'ըսէ, թէ «մեր Տիրոջ մարդեղութենէն վերադարձին ժամանակ, երբ Հօր աջ կողմը կը համբառնար, իւրաքանչիւր դասու [հրեշտակներու] մօտ մէկ օր մնաց, ու այսպիսով հերթով բարձրացաւ Հօր աջ կողմը: Այդ պատճառով, մենք ամէն տարի իւրաքանչիւր դաս [Տիրոջ այցելութեան] օրը անխափանօրէն կը տօնակատարէ Տիրոջ Համբարձման տօնը: Իսկ ես՝ չորրորդ դասէն եմ, այսինքն՝ իշխանութիւններէն, եւ Տիրոջ համբարձման այս չորրորդ օրը [մեր կարգն է], այդ պատճառով չեկայ, քանի որ երկինքի մէջ եղող իմ դասիս համար տօն էր»: Երանելի հայրը, այս լսելով, Տիրոջ փառք կը վերառաքէր, իսկ վիրապէն ելլելէն ետք՝ այս հրաշափառ տօնը սահմանեց:

Արդ՝ Երկրորդ Գալուստ կը կոչուի երեք պատճառով. ըստ կարգի, ըստ պատուի, ըստ ճշմարտութեան:

Ըստ կարգի՝ որովհետեւ առաջին գալուստով երկրաւոր Երուսաղէմ եկաւ, իսկ երկրորդով՝ Վերին Երուսաղէմ պիտի գայ:

Ըստ պատուի՝ քանի որ առաջին գալուստին եբրայեցի մանուկները արմաւենիներու ոստեր ու ովսանաններ կ'ընծայէին ու կ'օրհնէին զինք, սակայն նոյն օրն ալ խաչեցին: Իսկ այսօր, վերին զուարթունքները ընդունելով, կը պատուեն զինք, եւ բիւր բիւրոց կու գային Անոր դիմաց, իսկ յաջորդ օրը Մխիթարիչին՝ Սուրբ Հոգիին ճանապարհ պատրաստեց, որ մեզ մօտ եկաւ:

³ 7 Մայիս 351-ին, Կիրեղ Երուսաղէմացի Հայրապետին օրով, Երուսաղէմի մէջ օր ցերեկով երկինքին վրայ խաչին նշանը կ'երեւի՝ Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռ: Սուրբ խաչին զարմանահրաշ երեւումը յիշատակելու եւ փառաբանելու համար Կիրեղ Հայրապետը «Խաչի Երեւման» տօնը կը սահմանէ (ծանօթագրութիւնը Խաչ քահանայ Ղազարեանինն է):

⁴ Կրկին Ծաղկազարդի կամ Երկրորդ Ծաղկազարդի տօնը Սուրբ Ներսէս Շնորհալին եղբայրը՝ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսը սահմանած է՝ հիմնուելով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին խոր Վիրապի մէջ եղած ընթացքին պատահած աւանդական դէպքին վրայ (ծանօթագրութիւնը Խաչ քահանայ Ղազարեանինն է):

Ըստ ճշմարտութեան, որովհետեւ առաջին գալուստի ժամանակ անբան աւանակի մը վրայ նստաւ: Իսկ այստեղ ճշմարտութեամբ չորեքկերպեան աթոռի վրայ նստած Իր Հօր մօտ վերացաւ:

Իսկ Կրկին Ծաղկազարդ կը կոչուի ըստ նմանութեան եւ ըստ գերազանցութեան:

Ըստ նմանութեան՝ քանի որ եբրայեցի մանուկները առաջին գալուստի ժամանակ ծաղիկներով դիմաւորեցին զԻնք, ինչ բանի պատճառով Յովհաննէսը կ'ըսէ. «Որովհետեւ լսեցին թէ Ղազարոսը մեռելներէն յարուցանեց, այդ պատճառով ժողովուրդէն շատեր զԻնք դիմաւորելու ելան»⁵: Իսկ ասոր նմանութեամբ, վերին զուարթունները լսեցին, թէ մարդկային բնութիւնը մեռելներէն յարութիւն առած է, այդ պատճառով զԻնք դիմաւորելու ելան:

Դարձեալ՝ միաժամանակ Գալուստ եւ Ծաղկազարդ կը կոչուի, որովհետեւ առաջին գալուստին ծերերն ու աշակերտները միասնաբար ուրախացան Տիրոջ գալուստին, այդպէս ալ այսօր, հրեշտակներն ու մարդիկ միասնաբար կ'օրհնեն ու կը փառաւորեն Անոր երկինք երթալը:

Դարձեալ՝ միաժամանակ Գալուստ եւ Ծաղկազարդ կը կոչուի, քանի որ հրեաները առաքեալներէն սորվեցան փառաւորելը, ըստ այնմ. «Աշակերտներուն ամբողջ բազմութիւնը ուրախութեամբ սկսաւ զԱստուած օրհնել»⁶: Իսկ այսօր երկնայինները Եկեղեցիէն սորվեցան բազմապատիկ իմաստութիւնը, որ առաքեալը⁷ Տիրոջ տնօրինութեան համար կ'ըսէ:

Դարձեալ՝ միաժամանակ Գալուստ եւ Ծաղկազարդ, քանի որ այդ օրը Աւետարանէն Տիրոջ [Երուսաղէմ] գալստեան մասին [հատուածը] կը կարդանք, երբ եբրայեցիները ծաղիկներով ելան զԻնք դիմաւորելու: Իսկ այսօր, աւետարանական ընթերցումները նոյն այդ տեղը [Տիրոջ Երուսաղէմ գալուստի հատուածին] կը հասնին, այդ պատճառով Գալուստ եւ Ծաղկազարդ կը կոչուի:

Դարձեալ՝ Ծաղկազարդ կը կոչուի մեծ ուրախութեան պատճառով, որովհետեւ առաջին գալուստին ժամանակ Տէրը քաղաքը տեսնելով՝ «լացաւ անոր վրայ»,– կ'ըսէ Աւետարանը⁸: Իսկ այսօր, վերին Երուսաղէմը տեսնելով, կ'ըսէ. «Ն'ս եմ, որ արդարութեան եւ փրկութեան իրաւունքի

⁵ Յովհ. ժԲ. 17:

⁶ Ղուկ. ժԹ. 37:

⁷ Հմմտ. Յակ. Գ. 17:

⁸ Ղուկ. ժԸ. 41:

մասին կը խօսիմ»⁹, ինչպէս Եսայի մարգարէն կ'ըսէ, թէ երկնայիններու եւ երկրաւորներու միաբանութեամբ ցնծաց:

Դարձեալ՝ Գալուստ կը կոչուի, քանի որ առաջին գալուստին հրեաները կը նախանձէին, թէ՛ «կը տեսնէ՛ք, ոչինչով կ'օգտուինք, ահաւասիկ բոլոր ժողովուրդը Անոր ետեւէն գնաց»¹⁰: Իսկ այսօր երկնայինները կը նախանձէին անառակ որդիին, թէ՛ «մեզի ու միակ շտուիր, իսկ անառակիդ համար պարարտ եզր մորթեցիր»¹¹:

Դարձեալ՝ Գալուստ կը կոչուի ըստ օրերու եւ շաբաթներու թիւին, քանի որ առաջին գալուստին տօնը եօթներորդ Կիրակիին կը տօնենք, այդպէս ալ ասիկա եւս եօթներորդ Կիրակիին է՝ Զատիկի Կիրակիէն հաշուած, եւ ստուգութեամբ է:

Դարձեալ՝ այս օրը երկրորդ գալուստին օրինակ է:

[Նախ]՝ որովհետեւ այսօր փառքով երկինք վերացաւ, «Ան նոյն ձեւով պիտի գայ, — կ'ըսեն հրեշտակները, — ինչպէս ճիմա Անոր երկինք երթալը կը տեսնէք»¹²:

Երկրորդ՝ քանի որ այսօր ամպերու վրայով վերացաւ ըստ այնմ. «Ամպը ծածկեց զինք անոնց տեսողութենէն»¹³, նոյն ձեւով՝ «ամպերուն վրայով զօրութեամբ ու մեծ փառով պիտի գայ», կ'ըսէ Տէրը Աւետարանին մէջ¹⁴:

Երրորդ՝ որովհետեւ այսօր վերին զուարթունքները իրենք զիրենք պատրաստեցին Տիրոջ գալուստին համար, այդպէս ալ մենք պէտք է մենք մեզ պատրաստենք Անոր գալուստին՝ ըստ այնմ. «Ձեր գօտիները ամուր եւ ձեր նրագները վառած թող ըլլան, եւ դուք այն մարդոց նման եղէ՛ք, որոնք իրենց տիրոջ գալուստին կը սպասեն, թէ հարսանիքէն երբ պիտի վերադառնայ»¹⁵, այս մէկը մենք պիտի քննենք:

Չորրորդ՝ քանի որ այս օրուան ընթացքին Իր աշակերտներուն ըսաւ «բոլորին սորվեցուցէ՛ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին»¹⁶, այդպէս ալ երկրորդ գալուստին ժամանակ յայտնապէս պիտի սորվեցնէ մեզի՝ դէմ յանդիման ըլլալով Հօր եւ Սուրբ Հոգիին:

⁹ Ես. ԿԳ. 1:

¹⁰ Հմմտ. Յովհ. ԺԲ. 19:

¹¹ Հմմտ. Ղուկ. ԺԵ. 30:

¹² Հմմտ. Մատթ. ԻԸ. 5, Ղուկ. ԻԴ. 51:

¹³ Գործք. Ա. 9:

¹⁴ Ղուկ. ԻԱ. 27:

¹⁵ Ղուկ. ԺԲ. 35:

¹⁶ Տէս Մատթ. ԻԸ. 19:

Հինգերորդ՝ որովհետեւ այս օրը օրհնեց աշակերտները եւ ապա երկինք վերացաւ, այդպէս ալ երկրորդ գալուստին ժամանակ պիտի օրհնէ արդարները՝ ըստ այնմ. «Ինծի եկե՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ»¹⁷:

Վեցերորդ՝ քանի որ այս օրը աշակերտներուն ըսաւ. «Ես միշտ ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը»¹⁸: Իսկ երկրորդ գալուստին ժամանակ առաքեալը կ'ըսէ՝ «այն ատեն Տիրոջ առջեւ պիտի ըլլանք»¹⁹:

Եօթներորդ՝ որովհետեւ ննջեցեալներէն առաջին պտուղը՝ մեր Տէրը, այսօր Հօր աջ կողմը կը նստի, այդպէս ալ երկրորդ գալուստին ժամանակ սուրբերը իր աջ կողմը պիտի դասէ՝ ըստ այնմ. «Ոչխարները Իր աջ կողմը պիտի կանգնեցնէ»²⁰:

Ութերորդ՝ քանի որ այս օրը Տէրը իմանալի բնակութիւն՝ անմատոյց խորանը մտաւ, այդպէս ալ երկրորդ գալուստին սուրբերը իմանալի կայանները պիտի հանէ՝ ըստ այնմ. «Այն ատեն արդարները արեգակի նման պիտի ծագին արեայութեան մէջ»²¹:

Իններորդ՝ որովհետեւ այսօր վերին դասերը ճանչցան զինք որպէս ճշմարիտ Աստուած, ըստ որում կը գոչէին. «Զօրութիւններու Տէր»²², այդպէս ալ երկրորդ գալուստի ժամանակ Անոր դիմաց ծունկի պիտի գան բոլոր երկնաւորներն ու երկրաւորները, եւ բոլոր լեզուները պիտի խոստովանին, թէ Յիսուս Քրիստոս Տէր է²³:

Տասներորդ՝ քանի որ առաքեալները այսօրուրնէ սկսան տիեզերքին ուսուցանել Կենաց Բանը, այդպէս ալ վերջին օրը մեր անվերջանալի ուսումը, որովհետեւ Ան միշտ պիտի ուսուցանէ մեզի, իսկ մենք միշտ պիտի ուսանինք, քանի որ այն է արքայութիւնը: Այդ պատճառով Տէրը այս օրուան խորհուրդին համար կ'ըսէ. «Ձեր գօտիները ձեր մէջքներէն ամուր կապեցե՛ք, եւ ձեր նրագները վառած թող ըլլան»:

Արդ, այդ օրը Տէրը երեք բան կը թելադրէ ընել, որով կը կարենանք հարսանեկան առաքաստ մտնել:

Նախ՝ բարի գործեր, որ «ամրացած գօտիներ» կ'ըսէ:

Երկրորդ՝ ճշմարիտ հաւատք, որ «վառուած նրագ» կ'ըսէ:

¹⁷ Մատթ. ԻԵ. 34:

¹⁸ Մատթ. ԻԸ. 20:

¹⁹ Տէս Ա. Թեսաղ. Դ. 16–17:

²⁰ Մատթ. ԻԵ. 33:

²¹ Մատթ. ԺԳ. 43:

²² Տէս Ես. 2. 5:

²³ Տէս Փլպ. Բ. 9–11:

Երրորդ՝ պատրաստ ըլլալ գալուստին, ինչպէս կ'ըսէ, թէ՝ «ան մարդոց նման եղիք, որոնք իրենց տիրոջ գալուստին կը սպասեն, թէ երբ պիտի վերադառնայ»²⁴։

Եկէք տեսնենք, թէ ինչու համար բարի գործերը «գօտի ամրացնել»ուն կը նմանցնէ։

Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով։

Նախ՝ որովհետեւ գօտին մէջտեղը կ'ամրացուի, ո՛չ շատ բարձր՝ գլուխին մօտիկ, եւ ո՛չ ալ շատ ցած՝ ոտքերուն մօտիկ, այլ՝ մէջքին։ Կը սորվեցնէ ո՛չ դէպի աջ եւ ոչ ալ դէպի ձախ խոտորիլ, այլ՝ արդարութեան ճամբուն մէջտեղէն երթալ։

Երկրորդ՝ քանի որ գօտին երիկամներուն վրայ կը կապուի, կը սորվեցնէ, թէ ցանկութիւնը իրենց ներսիդին կապուած է, ուրկէ դուրս կու գան ամէն տեսակի պղծութիւնները՝ ըստ այնմ. «Ցանկութիւններ յղանալով մեղքին ծնունդ կու տան»²⁵, եւ այլն։

Երրորդ՝ որովհետեւ մարդիկ եթէ գօտի չկապեն, չեն կրնար ոչինչ գործել, քանի որ մէջքը առանց գօտիի թոյլ է, այդպէս ալ եթէ մենք մեզ առաքինութեամբ ու պարկեշտութեամբ չփակենք, չենք կրնար Երկինքի Արքայութիւնը տեսնել։

Չորրորդ՝ որովհետեւ գօտին բոլոր հագուստներուն վրայ կարելի է կրել, այդպէս ալ մենք պէտք է մեր մարմիններուն վրայ սրբութիւնը (մաքրութիւնը) ստանանք, եւ նախ ասիկա՝ մարմինը պահենք ամէն տեսակի պղծութիւններէ՝ կամայ թէ ակամայ, քանի որ եթէ մարմինը չպղծուի, հոգին չի՛ պղծուիր։

Հինգերորդ՝ քանի որ գօտին ամբողջ մարմինը կը շրջապատէ, այդպէս ալ մաքրութիւնը ամբողջ մարդուն պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մէկ մասին կամ հոգիին, կամ մարմինին։

Վեցերորդ՝ որովհետեւ գօտին ամուր կը կապուի եւ ո՛չ թէ թոյլ, այդպէս ալ խստակրօն առաքինութիւն պէտք է եւ ոչ թէ տկար, քանի որ ով որ թուլութեամբ ու թերի կամքով պահք կը պահէ, Արքայութեան մէջ իր բաժինը թերի կը ստանայ։

Եօթներորդ՝ որովհետեւ գօտին ամրութիւնը ոչ ոք կ'իմանայ, բացի անորմէ, որու մէջքին ամրացուած է, այդպէս ալ ոչ ոք պարտաւոր է

²⁴ Դուկ. ԺԲ. 36։

²⁵ Տէս Յակ. Ա. 15։

սրբութեան մասին իմանայ, բացի անորմէ, ով կը գործէ, եւ ան, ով կը տեսնէ, ըստ այնմ. «Ուր գաղտնի կատարածդ կը տեսնէ, քեզ յայտնապէս պիտի վարձատրէ»²⁶:

Ութերորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք ինքն իր գօտին կը կապէ եւ ո՛չ թէ ուրիշ մը, այդպէս ալ իւրաքանչիւր ոք պարտաւոր է ինքն իր անձին մասին հոգալ, որովհետեւ ուրիշներուն պահեցողութիւնն ու աղօթքը քեզի օգուտ չեն, այլ՝ դո՛ւն ըրէ, որպէսզի դուն ուտես, ըստ այնմ. «Այն ձեռքը, որ շաշխատիր, թող չուտէ»²⁷:

Իններորդ՝ քանի որ մէկը ոսկէ գօտի կը կապէ, ուրիշ մը՝ շուանէ, իսկ ուրիշներ՝ կտաւէ, բայց բոլորն ալ նոյն ձեւով կ'ամրացնեն, այդպէս ալ մէկը, եթէ պահք պահէ, ատիկա ոսկէ գօտի կ'ըլլայ, իսկ ով որ աղօթէ, ատիկա կտաւէ կ'ըլլայ, որովհետեւ աղօթքը մաքուր է, իսկ միւսները՝ ողորմութեամբ, ատիկա շուանէ կ'ըլլայ ու փոկ է, քանի որ ասոնք մէջքը շատ ամուր կը դարձնեն, ու ասոնք բոլորը նոյն ձեւով Երկինքի Արքայութիւն կը տանին:

Տասներորդ՝ որովհետեւ ով որ գօտի չի՛ կապեր, կին է, այդպէս ալ՝ ով որ բարի պտուղ չի՛ տար, այդպիսին կնաբարոններու նման է, որոնք թոյլ խորհուրդներով իրենք զիրենք յաւիտենապէս կորուստի կը մատնեն, այդ պատճառով կ'ըսէ. «Ձեր գօտիները ձեր մէջքին ամրացուցած, եւ ճրագները վառած թող ըլլան»:

Հիմա երկրորդը տեսնենք, թէ ինչու համար «ճրագ»ը որպէս հաւատքի օրինակ կը դնէ: Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ ճրագներ կ'ըսէ, որով հաւատքի բոլոր աստիճանները կ'ուսուցանէ, ինչպէս նաեւ անամարմին բնութիւնը եւ մարդեղութիւնը:

Երկրորդ՝ թէեւ ճրագները առանձնապէս ուրիշ են, սակայն մէկ լոյս եւ մէկ տեսութիւն ունին, այդպէս ալ հաւատքը, որ մարդեղութենէն է, թէեւ ուրիշ կերպարանք է, սակայն միեւնոյն հաւատքն է այս եւ այն:

Երրորդ՝ որովհետեւ ճրագն ընթանալու ժամանակ միշտ վեր կը պահուի, այդպէս ալ հաւատքը պէտք է միշտ երկինքի մասին խորհի, ուր Քրիստոս Հօր աջ կողմը կը նստի:

Չորրորդ՝ քանի որ ճրագին երեք բան պէտք է, որպէսզի միշտ վառած ըլլայ. ձէթը, պատրոյգը եւ կրակը. այդպէս ալ իւրաքանչիւր մար-

²⁶ Տէս Մատթ. 2. 4, 6, 18:

²⁷ Հմմտ. Բ. Թեապ. Գ. 10:

դու երեք բան պէտք է, որպէսզի իր հաւատքը վառ ըլլայ: Նախ՝ սուրբ գործեր՝ որպէս ձէթ, ժուժկալ մարմին՝ որպէս պատրոյզ, իմաստութիւն՝ որպէս կրակ. ասոնց առկայութեան պարագային հնարաւոր չէ, որ մարդ անհաւատութեան խաւարին մէջ մնայ:

Հինգերորդ՝ որովհետեւ ճրագին մէկ մասը վառած եթէ ըլլայ, այդքանն ալ բաւարար է. այդպէս ալ մարդու միտքին մէջ պէտք է պայծառ հաւատք ըլլայ, եւ ատիկա բաւարար է միւս ամբողջը լուսաւորութեան մէջ պահելու:

Վեցերորդ՝ ձէթին կամ պատրոյզին, կամ՝ կրակին, պակսելուն պարագային հնարաւոր չէ, որ ճրագը վառի. այդպէս ալ եթէ մարդուն մէջ իմաստութիւն չկայ, հետեւաբար հաւատք չունի, իսկ եթէ առաքինութիւն չունի, հաւատքը չի՝ մնար, իսկ եթէ համբերութիւն չունի, հետեւաբար ժուժկալութիւն ալ չունի փորձութիւններուն դէմ:

Եօթներորդ՝ քանի որ ճրագը գիշերը կը վառի տան մէջ. այդպէս ալ մարդուն հաւատքը դժուար ժամանակներուն պէտք է արտայայտուի, որովհետեւ եթէ խաղաղ եղած ժամանակ ըսես, թէ՝ հաւատացեալ եմ, ճշմարտութիւնը չերեւիր, իսկ եթէ նեղութեան օրերուն հաւատքն ամուր պահես, ապա այնտեղ քաջութիւնդ կ'երեւի:

Ութերորդ՝ քանի որ շատ բաներ ճրագին հակառակ են, ինչպէս՝ քամին, մարդը, մարմինը, ինչ ալ ըլլայ, այդ պատճառով բոլոր պատուհանները կը փակեն, որպէսզի չմարի. այդպէս ալ հաւատացեալները բազմաթիւ թշնամիներ ունին՝ այլազգները, մարմինը, աշխարհը եւ ուրիշ շատ բաներ, այդ պատճառով պէտք է աչքերն ու զգայարանքները փակել (զսպել), որպէսզի դուրսէն կորուստի ո՛չ մէկ պատճառ ըլլայ:

Իններորդ՝ քանի որ եթէ ճրագը լոյս չունի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ աղտոտ ու սեւ բան մը. այդպէս ալ, եթէ [մարդ] պայծառ հաւատք չունի, բոլորն ալ ատելի են Աստուծոյ՝ «եւ գործերը առանց հաւատքի մեռած են»²⁸:

Տասներորդ՝ որովհետեւ եթէ ճրագը մարի տան մէջ, ոչ ոք կրնայ գիտնալ՝ ուր երթալ. այդպէս ալ երբ մարդ հաւատքը կ'ուրանայ, հոգիով կ'ուրնալով՝ խաւարին մէջ կը մնայ, այդ պատճառով կ'ըսէ՝ «Ճրագները վառած»²⁹:

Քննենք նաեւ այն, թէ ինչու համար կ'ըսէ, թէ՝ «ան մարդոց նման եղի, որոնք իրենց տիրոջ կը սպասեն, թէ երբ պիտի վերադառնայ»³⁰: Հրեշտակ-

²⁸ Յակ. Բ. 26:

²⁹ Ղուկ. ԺԲ. 35:

³⁰ Տէս Ղուկ ԺԲ. 36:

ներուն «մառդիկ» կ'ըսէ, որպէսզի մեզի ծանօթ օրինակով ուսուցանէ մեզ, եւ որովհետեւ անոնք իրենց անձերուն մէջ պատրաստակամութիւն ունին, զորս մենք եւս պէտք է ունենանք:

Նախ՝ Տիրոջմէ կ'ամշնան ու իրենց դէմքերը կը ծածկեն ըստ Եսայի³¹, այդպէս ալ մենք եւս հիմա պէտք է Տիրոջմէ ամշնանք, որպէսզի յաւիտենական պապանձու մը չկրենք՝ ըստ այնմ. «Ո՛չ ոք կրցաւ թագաւորին պատասխան տալ»³²:

Երկրորդ՝ որովհետեւ միշտ Տիրոջմէ կը վախնան, այդպէս ալ մենք պէտք է միշտ Աստուծմէ վախնանք՝ ըստ այնմ. «Տիրոջ երկիւղով բոլորը չար բաներէ կը խորշին»³³:

Երրորդ՝ քանի որ միշտ Աստուծոյ կը նային, ըստ այնմ. «Անոնց հրեշտակները ամէն օր [Հօրս երեսը կը տեսնեն]»³⁴, այդպէս ալ մենք պէտք է Տէրը միշտ մեր աչքին առջեւ ունենանք, տեսնենք, ըստ մարգարէին. «Մշտապէս Տէրը կը տեսնեն»³⁵:

Չորրորդ՝ որովհետեւ ոչ ոք իր սպասաւորութեան գործը չի՛ ձգեր, այդպէս ալ մենք, պէտք է չձգենք այն կարգը, որու կանչուեցանք, այլ զայն պէտք է սրբութեամբ պահենք ու արդիւնագործենք, որպէսզի փոխարէնը կրկնակի վարձք ստանանք՝ ըստ կրկնաշահ քանքարներուն³⁶:

Հինգերորդ՝ քանի որ դժուարաշարժ են կամ ընդհանրապէս անշարժ են դէպի չարը, այդպէս ալ մենք պէտք է անշարժ ըլլանք դէպի չարը, ըստ այնմ. «Ձեզ տեսանք թէ երկիւղեմք մէջ եւ թէ ա՛լ երկրի վրայ»³⁷:

Վեցերորդ՝ որովհետեւ ոչ ոք կը պատուհասեն առանց Աստուծոյ հրամանին, այդպէս ալ մենք պէտք է ոչ ոք դատենք, քանի որ Տիրոջմէ հրաման չունինք, ըստ այնմ. «Մի՛ դատէ՛ք, որպէսզի չդատուիք»³⁸:

Եօթներորդ՝ որովհետեւ երբեք չեն անտեսեր Աստուծոյ պատուիրանները, այդպէս ալ մենք, եթէ հնարաւոր է, Անոր պատուիրաններէն ո՛չ մէկը պէտք է անտեսենք, որպէսզի սիրելի ըլլանք Հօր եւ Սուրբ Հոգիին:

³¹ Ես. 2. 2:

³² Հմմտ. Երեմ. 1. 27:

³³ Տէս Առաւ. ԺԵ. 27:

³⁴ Մատթ. ԺԸ. 10:

³⁵ Մատթ. ԺԸ. 10:

³⁶ Տէս Մատթ. ԻԵ. 15–28:

³⁷ Հմմտ. Սղմ. ԺԺԲ. 6:

³⁸ Մատթ. Է. 1: Ղուկ. 2. 37:

Ութերորդ՝ քանի որ կը նեղուին չարութեան համար, ըստ այնմ. «Տէր, կ'ուզե՞ս երթանք եւ որովք հանենք ցորենին մէջէն»³⁹. այդպէս ալ մենք, երբ չարութիւն մը տեսնենք, պէտք է հրապարակենք ու գործենք, վրէժխնդիր ըլլալով եւ ո՛չ թէ պատժելով, որպէսզի ի սպառ կորուստի չմատնուի չար [մարդը]:

Իններորդ՝ որովհետեւ միշտ կ'օրհնաբանեն զինք եւ երբեք չեն դադրիր. այդպէս ալ մենք, պէտք է միշտ գոհութեամբ փառք մատուցենք մեր շահուն համար, ըստ այնմ. «Որ կ'օրհնես զանոնք, որոնք Քեզ կ'օրհնեն, Տէր»⁴⁰:

Տասներորդ՝ քանի որ զԱստուած ատողները կ'ատեն եւ բարկութեամբ կը մաշեն զանոնք, ինչպէս Սողոմի եւ այլ վայրերու պարագան էր. այդպէս ալ մենք հաւատքի թշնամիները պէտք է ընկղմելով կորուստի մատնենք, ինչպէս Եղիան Բահաղի մարգարէներուն ըրաւ⁴¹, բայց ո՛չ թէ սուրով, այլ Աստուծոյ խօսքով, որ երկսայրի սուրէն ալ աւելի սուր է:

Իսկ թէ ինչո՞ւ մեր Տէրը «փեսայի», իսկ մեր բնութիւնը «հարսի» կը նմանցնէ, ուրիշ տեղ մը գրուած կը գտնես այդ մասին: Այսքանը այս խօսքին ու խորհուրդին մասին:

Եւ մարդասէր Քրիստոսին փառք յաւիտեանս: [Ամէն]:


Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆ Դ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ



³⁹ Մատթ. ԺԳ. 28:

⁴⁰ Տէս Յովհաննէս Արճիշեցի, Մեկնութիւն Պատարագի, էջմիածին, 1999, էջ 100:

⁴¹ Գ. Թադ. Գ. 20–40:



Doi: 10.56737/2953-7843-2023.12-49

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ ԺԱ.

Քրիստոնեությունը (նաեւ, ըստ էության, բոլոր կրոնները) իր ընդհանրության մեջ ունի ներքին բազմաձեւություն: Այն հիմնականում պայմանավորված է դավանաբանության մեկնաբանման առանձնահատկություններով: Վերջիններիս առարկայական գոյությունն իր հերթին բխում է այն կրող տարբեր համակեցությունների յուրօրինակությունից: Մենք արդեն փաստել ենք հայ համակեցության տարածքային, ծագումնաբանական եւ լեզվամտածողական ինքնատիպության հանգամանքները: Հետեւաբար այս պարագայում անհրաժեշտ խնդիր է դառնում նաեւ հավատքի ծագումնաբանության եւ դավանաբանության մանրամասն դիտարկումը՝ պարզելու դրանց ինքնուրույնության եւ ինքնության աստիճանը:

Ըստ էության՝ Եկեղեցու ծագումնաբանական խնդիրը կարելու է թե՛ նրա ինքնուրույնության եւ թե՛ դավանաբանաբանական առանձնահատկությունների ձեւավորման տեսանկյունից: Առաքելականության ինքնատիպության ընդունումը հնարավորություն կտա ոչ միայն փաստարկելու հայկական քաղաքակրթության ուսումնասիրման, այլեւ դրա շրջանակներում՝ հավատքային ինքնատիպության բացառիկության ապացուցելիության հիմնախնդիրը՝ հաստատելու համար Քրիստոսի՝ Եկեղեցու երկնավոր Հիմնադրի հետ միավորված ու կապակցված լինելը: Հայոց Եկեղեցու ծագման հարցում պետք է հիմնվել նրա նախնական եւ հաստատուն ավանդության վրա, որն իբրեւ հիմնադիրներ է ճանաչում Սբ. Թադեոս եւ Սբ. Բար-

դուզիմեոս առաքյալներին: Վերջիններիս գերեզմանները, որ պատմական Հայաստանի հարավարեւելյան կողմերում գտնվող Արտազի (Մակու) եւ Աղբակի (Պաշալե) վանքերում են, նվիրական սրբավայրեր էին հայ հավատացյալների համար: Ընդ որում՝ Հայկական Եկեղեցու ավանդության վավերականությունն ընդունում են քրիստոնյա բոլոր Եկեղեցիները՝ ըստ այդմ հաստատելով նրա սկզբնավորման ինքնուրույնությունը¹:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո սկսվում են հայ ինքնության քրիստոնեական հարացույցի գործառման ու զարգացման գործընթացները. «Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների՝ թարգմանիչների բեղմնավոր գործունեության հետեւանքով հայ ժողովուրդն իսկապես քրիստոնյա դարձավ, հայ ազգն ինքնագիտակցության եկավ, ճանաչեց ու ջերմորեն սիրեց իր անցյալն ու հայրենիքը»²: Այս ամենի անհրաժեշտությունը մենք դիտարկում ենք հայկական քաղաքակրթական առաքելականության բնաշրջման տրամաբանության մեջ, երբ կայսերապաշտության դիրքերից քրիստոնեությամբ սկզբնավորվեց տեղային եւ համընդհանուր քաղաքակրթությունների զուգամիտման՝ կրոնական հիմքի վրա միասնական կայսերական ինքնատիպության ստեղծման խնդիրը: Այսինքն՝ միայն քրիստոնեության հայկականացումը հնարավորություն կտար հայկական քաղաքակրթությանն ինքնուրույնաբար շարժվել:

Դադարանք չէ, որ Հայ Եկեղեցու դավանաբանական հիմքի համակարգումը տեղի է ունեցել Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.), Եփեսոսի (431 թ.) տիեզերական ժողովներից հետո: Ժողովներում ամբողջացվել են քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները: Փաստ է, որ Հայոց Եկեղեցին արդեն Ե. դարից սկսել է ամբողջապես ինքնուրույն հանդես գալ: Խնդիրն այն է, որ Ե. դարավերջին կամ Զ. դարասկզբին Զենոն կայսեր՝ «Հեմոտիկոնի» ընդունումն անհրաժեշտ դարձրեց մեկնաբանել դավանական այն բոլոր խնդիրները, որոնք առկա էին քրիստոնեության մեջ՝ Նիկիայի (325 թ.) եւ Քաղկեդոնի (451 թ.) ժողովներից սկսած: Դա առավել սուր ընդգծվեց 506 թ. Դվինի առաջին եւ դրան հաջորդող Եկեղեցական ժողովներում³: Ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ ժողովի գումարման պատճառներ

¹ Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հայոց Եկեղեցին: Ուսումնական օժանդակ ձեռնարկ, հրատարակության պատրաստեց Գեորգ ԵՊՍ. ՍԱՐՈՅԱՆԸ, Ս. Էջմիածին, 2014, էջ 27–28:

² Անդ, էջ 57:

³ Ե. Տեր-Մինասյան, պատմա-բանասիրական հետազոտություններ, խմբագրությամբ Գ. Սարգսյանի, Երեւան, 1971, էջ 44:

կարող էին լինել ներքին խնդիրները՝ մի կողմից, մյուս կողմից՝ Զենոնի «Հենոտիկոնի» (Միության ակտ) ընդունումն ու դրանով Քաղկեդոնի որոշումների լուեյայն մերժումը⁴։ Դրա վառ ապացույցն է հակաքաղկեդոնական հայտնի աստվածաբան Սիմեոն Բեթ-Արշամացու նամակը Մծբինի եպիսկոպոս Բարծումային, որտեղ նշվում է, որ այդ ժողովի ժամանակ են հայերն իրենց 32 եպիսկոպոսի եւ մարզպանի հետ ընդունել Զենոնի «Հենոտիկոնը»⁵։ Դվինի 506 թ. ժողովը երեւույթ էր Հայոց Եկեղեցու դավանական կողմնորոշման հստակեցման եւ զարգացման, նրա հականեստորական ու հակաքաղկեդոնական ուղեգծի ամրակայման գործում։ Որպես Հայոց Եկեղեցու հեղինակության եւ ինքնուրույնության ապացույց՝ 506 թ. Դվինի ժողովը դրեց հայոց ազգային ինքնուրույն Եկեղեցու հաստատուն հիմքը⁶։

Եւ այստեղ խնդիրը միայն ինքնուրույնության եւ ինքնատիպության հավակնությունները բավարարելու ձգտումը չէ։ Մենք խնդիրը դիտարկում ենք քաղաքակրթական տեսության շարակարգում։ Հայոց Եկեղեցին դարերի հոլովույթում դիտարկվել եւ այսօր նույնպես դիտարկվում է որպես քրիստոնեական քաղաքակրթության ինքնուրույն եւ յուրօրինակ բաղադրիչ։ Այն արդի խառնաշփոթության եւ անորոշության պայմաններում սեփական կարգավիճակով ապացուցում է իր ինքնուրույն առաքելական բովանդակությունը՝ կաթոլիկ եւ ուղղափառ հատվածների նկատմամբ։ Քրիստոնեական քաղաքակրթության հետագա զարգացման մեջ անհրաժեշտ է ՀԱԵ-ն դիտարկել որպես կենսաքաղաքականության հումանիզացման գործառույթի կրող եւ արարող։ Նմանօրինակ մոտեցումը փաստարկում ենք քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության, օրինականացման) եւ մեքենայական նոր տեսակի ազատամտության հաղթահարման նկատառումներով։ Համոզված ենք, որ միայն այդպես է հնարավոր ամբողջական իմաստով հիմնավորել մարդու գոյաբանության եւ տեղային քաղաքակրթությունների մարդասիրական արժեքանության եւ դավանաբանության բնականոն արդիականացման գործընթացը։ Միայն այդպես կարելի է ապահովել ծայրամաս-կենտրոն, հեռու-հակահեռու, ավանդական մոդեռն-պոստմոդեռն,

⁴ Տե՛ս անդ, էջ 41, 358։

⁵ Կ. ՄԵԼԻՔՅԱՆ, Հայոց Եկեղեցու դիրքն Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու համակարգում IV–VI դարի I կեսին, Երեւան, 2016, էջ 185։

⁶ Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ, Դվինի առաջին (506 թ.) եւ երկրորդ (554/555 թ.) եկեղեցական ժողովներն ու դրանց ընդունած որոշումները, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 2017, 3, էջ 151–161։

ազատականություն–պահպանողականություն բազմամակարդակ վերարժեւորումները՝ բացառելով անպատասխանատու ազատությունը եւ չհիմնավորված նկրտումներով իշխանության իրականացման մշակույթը:

Հավելենք նաեւ, որ հայ քաղաքակրթական միավորի հավատքային բաղադրիչի բնաշրջական բյուրեղացումը շարունակվել է գրեթե առանց ընդհատումների, երբ նույնիսկ այն բախվել է տարբեր կայսրությունների վարած հայատյաց քաղաքականությանը: Այսպես, օրինակ, Դ. դարից սկսած՝ բյուրեղացվում են ինքնության քրիստոնեական հարացույցի խորհրդանշանները, կանոնակարգվում են արարողությունները, հստակեցվում է տոնացույցը: Ամենակարեւորը, բացի «հայկականացված» քրիստոնեական դավանաբանական-ծիսական ավանդույթից, հայոց ինքնության քրիստոնեական հարացույցում աստիճանաբար հայտնվում են այլ խորհրդանշաններ ու փաստեր, աստվածաշնչյան եղելությունների մեկնություններ, Աստծուց՝ հայ ազգին տրված, այսպես կոչված, առանձնական պարգեւների կամ բարությունների մասին մտքեր: Այդ իմաստով Ս. Զաքարյանը համակարգային կերպով վերլուծել է Գրիգոր Տաթևացու (1346–1409) եւ հայոց կաթողիկոս (1731–1751) աստվածաբան Ղազար Զահկեցու տեսակետները⁷:

Ուշագրավ է Ս. Զաքարյանի այն փաստարկը, որ հայ ողջ գիտական՝ հատկապես փիլիսոփայական միտքը դարձավ հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի կարեւոր բաղադրատարր, եւ գրեթե միշտ այն կատարել է պահպանիչ գործառույթներ՝ փիլիսոփայական հասկացություններով ու փաստարկներով հիմնավորելով Հայոց Եկեղեցու ինքնուրույնությունը, նրա դավանաբանության սկզբունքները, ավանդույթներն ու ծեսերը, արծարծել հավատացյալների գործնական-երկրային պահանջմունքներից բխող կենսական հարցեր: Այդ միտումը հատկապես ցայտուն է դրսևորվել ԺԴ. դարում, երբ խիստ սրվում են իշխանություն–Եկեղեցի հարաբերությունները, երբ օրակարգում հայտնվում է Եկեղեցիների միության խնդիրը: Եթե ձեւավորման փուլում քրիստոնեական տեսության մշակողները (Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորյուն, Մաշտոց, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի եւ այլք) առաջնորդվում էին «Մենք՝ հայերս, քրիստոնյա ենք, Կաթողիկե (Ընդհանրական) Եկեղեցու անդամ, եւ ոչ ոք չի

⁷ Տե՛ս Ս. ԶԱԳԱՐՅԱՆ, Հայոց ինքնության հիմնահարցերը, Երեւան, 2020, էջ 103:

կարող մեզ այդ հավատքից ու Եկեղեցուց զատել» նշանաբանով, ապա երկրորդ փուլի կարգախոսն էր՝ «Մենք քրիստոնյա ենք՝ Հայաստանյայց Եկեղեցու, նրա դավանաբանության ու ավանդույթների հետևորդը»։ Այդ ավանդույթները, ըստ Հովհան Որոտնեցու, «մեք ունիմք գրեալ ի սիրտս եւ ի ճակատս հաւատոյ՝ անշարժ հաստատութեամբ», եւ ըստ Ստ. Օրբելյանի՝ «պատրաստ ենք տանջանքների, աքսորի, բանտի եւ մեռնելու՝ հանուն սուրբ եւ առաքելական հայրերի ավանդների»⁸։ Հայ Եկեղեցու դերի բացառիկ կարեւորությունը Ն. Ադոնցն ընդգծել է Գարեգին արք. Հովսեփյանի «Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը» աշխատությանը նվիրված հոդվածում, որտեղ ներկայացվում է, թե ինչպես են Առաջավոր Ասիա եւ Հայաստան ներխուժում Ասիայի հեռուներից եկած բարբարոս ցեղերը, որոնք, սակայն, ի զորու չէին սպանել հայ հոգեւոր կյանքը. «Հայ հեզ աշխատասիրությունը, շինարար ոգին եւ արթուն միտքը շարունակել են փայլփլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, եւ հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով եւ ստեղծագործությամբ»⁹։

Սակայն, ի հավաստումն այդ բացառիկ դերի արժեւորման, անհրաժեշտ է հանրային գիտակցության մեջ այն բնականոն ճանապարհով վերափոխմաստվորել՝ որպես սեփական «ես»-ի գոյաբանության հիմք։ Այլապես տարակուսելի է, երբ համընդհանուր կառավարման մակընթացությունների եւ տեղատվությունների ծնած անորոշ փոխակերպումների ժամանակաշրջանում ձգտում են լուծարել ժամանակի փորձությունների բովով անցած եկեղեցական սոցիալ-մշակութային կառուցակարգերը՝ դա պայմանավորելով աշխարհիկության անհիմն դրսեւորումներով։ Դեռ հեռավոր 1910-ին էդինբուրգի համաժողովում Քենթերբերիի արքեպիսկոպոսն զգուշավորությամբ ասել է. «...վտանգավոր է, թերեւս՝ հանդուգն, չափազանց վճռականորեն դոգմատիզացնել մի սերնդի կամ դարաշրջանի որոշակի հնարավորությունները մյուսների համեմատությամբ»¹⁰։ Ավելին. համընդհանուր կառավարման հիմնախնդիրներով զբաղվող

⁸ Տէս Ս. ԶԱՔԱՐՅԱՆ, XIV–XV դարերի հայ փիլիսոփայությունը հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի համադրստում, տես <http://ysu.am/files/01S>։

⁹ Ն. ԱԳՈՆՑ, Երկեր, հտ. Բ., Երեւան, 2006, էջ 495։

¹⁰ Տէս J. RAMACHANDRAN, Christian Communities in Contemporary Context Edinburgh Conference, 1910, էջ 3, տես https://www.academia.edu/4492566/CHRISTIAN_COMMUNITIES_IN_CONTEMPORARY_CONTEXT։

մասնագետները պնդում են, որ «վերջին երկու դարերի մեծ մասի ընթացքում հատկապես Բրիտանական հաստատություններն էին (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.), որ լավագույն հնարավորություններն ունեին ազդելու համընդհանուր կառավարման զարգացող ձևերի վրա (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.)՝ անկախ նրանից՝ դա անդրազգային քաղաքացիական հասարակությունն էր, միջազգային համաձայնագրեր էին, թե՛ Ազգերի լիգայի նման կազմակերպություններ»¹¹։ Ասվածից երեւում է, որ Քրիստոնեական եկեղեցիների (հատկապես՝ Հայ Առաքելական եկեղեցու) նկատմամբ ձեւավորված «ապաքաղաքական» աշխարհիկացնելու ակնկալիքները ոչ միայն զուրկ են մարդկային քաղաքակրթության զարգացման կենսափորձից, այլեւ սահմանափակում եւ վտանգում են արժեքների վերակերտման, պահպանման ու գալիք սերունդներին փոխանցելու գործընթացները։ Ընդ որում՝ հայության դեպքում դա կունենա նաեւ ազգի տարբեր հատվածների՝ պետություն—սփյուռք միասնության ցանցային հնարավորությունները թերզարգացածության կամ ձեւականացման հանգեցնելու հետեւանք։ Համընդհանուր կառավարման հիմնախնդիրների պատմականորեն նշանակալից լուծումներին եկեղեցիների մասնակցությունը եւ բերած նպաստը նույնպես վերահաստատում են Հայ Առաքելական եկեղեցու դերի եւ ցանցային, եւ աստիճանակազային բյուրեղացվածության տրամաբանական լինելու իրողությունը։ Այսպես՝ փաստված է, որ, չնայած իր մեծ կշռին, «այնուամենայնիվ, Հռոմեական Կաթոլիկ (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.) եկեղեցին միակ Քրիստոնեական եկեղեցին չէր, որն իր ազդեցությունն ունեցավ համաշխարհային կառավարման (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.) վրա։ Շատ մեծ նշանակություն ուներ նաեւ էկումենիկ շարժումը՝ մեծ մասամբ բողոքական խմբավորումների լայն ցանցը, որը ձգտում էր քրիստոնյաների, եկեղեցիների եւ քարոզչական ջանքերի ընդհանրական միասնության։ Հետեւելով oycoumena-ի գաղափարին (հուն․՝ «բնակեցված երկրագունդ»)՝ շարժումը հիմնեց կազմակերպչական կառույցներ եւ կրոնական գործիչների միջեւ փոխգործակցության կաղապարներ։ Չնայած այն հանգամանքին, որ բողոք-

¹¹ SÉA E. ENGEL, J. KENNEDY, J. REYNOLDS, Editorial – the theory and practice of ecumenism: Christian global governance and the search for world order, 1900–80, Journal of Global History (2018), 13, էջ 158, Cambridge University Press 2018 doi:10.1017/S1740022818000025, տե՛ս https://www.academia.edu/47071400/Editorial_of_JGH_Special_Issue_The_Theory_and_Practice_of_Ecumenism_Christian_Global_Governance_and_the_Search_for_World_Order_1900_80;

փականները գերակշռում էին էկումենիկ հաստատություններում (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.), նրանք նաեւ ներգրավեցին հյուսիսատլանտյան եւ ասիական շատ ուղղափառ քրիստոնյաների, որոնք համաշխարհային քրիստոնեական եղբայրության շարժման տեսլականում հնարավորություններ գտան պայքարելու ընդհանուր մրցակիցների՝ աշխարհիկության, ազգայնականության, կոմունիզմի եւ, որոշ ժամանակ, կաթոլիկության դեմ»¹²։ Այսօր էլ միջեկեղեցական հարաբերությունները բազմաբնույթ են, իսկ համաշխարհային կառավարման հիմնարկներն ու հիմնախնդիրները՝ նույնատեսակ։

Ինչպե՞ս կարող է Հայ Առաքելական Եկեղեցին, ունենալով եւ պատմամշակութային իմնության դարավոր պաշար, եւ ցանցային հնարավորություններ, եւ համակարգային կարողություններ, հայ իրականության մեջ դուրս մնալ հանրային եւ համընդհանուր հարցերի ֆննարկման փաղափական ու ապափաղափական ձեռնապիերից։ Ոչ միայն Եկեղեցիների՝ պատմության մրցակցությամբ մշտաներկա գործառույթը, այլեւ արդի անհատապաշտ մարդու մշակութախեղված կեցությունը՝ սպառողական հասարակության ճիրաններում, հիմնավորում են համընդհանուր եւ տեղային կառավարման մեջ հոգեկենտրոն ունենալու անհրաժեշտությունը՝ ի հեճուկս Եկեղեցու եւ եկեղեցական մասնակցությունը զուտ կրոնական հատվածակողմով դատող քննադատների։ Այս ենթիմաստում ընդգծվում են ոչ միայն համընդհանուր կառավարման եւ Եկեղեցու դերի առնչությունների հարցը, այլեւ Եկեղեցու՝ որպես ազգային-քրիստոնեական արժեքների կրող, ստեղծող, փոխանցող, վերակենդանացնող լուսավորչական հաստատության պետականակերտիչ գործառույթը։

Այդպիսի ընդլայնված օրակարգ ունեն նաեւ այլ քաղաքակրթություններում գործառնող Քրիստոնեական Եկեղեցիները։ Դիցուք՝ «Հարավային Հնդկաստանում Եկեղեցին՝ որպես որոշակի թվով կրթական եւ առողջապահական հաստատությունների սեփականատեր եւ կառավարիչ, դարձել է լուսավորիչ եւ գործատու»¹³։ Այսպես՝ քանի որ Հնդկաստանում «Եկե-

¹² Անդ.

¹³ Տե՛ս H. M. ANDERSON, Jeremiah, "Fragments and The Whole: An Insight Into The Deliberations Of Missionary Organizations In South India And Their Impact" in A ADOGAME, J. MCLEAN, A. JEREMIAH (eds.), Engaging the World: Christian Communities in Contemporary Global Societies, Regnum Edinburgh Centenary Series, Volume 21, Oxford Center for Mission Studies, 2014, էջ 106, տե՛ս <https://scholar.csl.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1004&context=edinburghcentenary>։

ղեցին հողի եւ գույքի ամենամեծ սեփականատերերից մեկն է (ընդգծումը մերն է.— Մ. Գ., Հ. Պ.), վերահսկողության եւ հեղինակություն ունենալու համար պայքարն անխուսափելիորեն հանգեցնում է տարատեսակ խմբավորումների մեջ ներքին ու արտաքին դաժան (bitter) հարաբերությունների¹⁴։ Քննարկվող դրական ու բացասական գործընթացների վրա լույս սփռելու ծանրաբեռնումից խուսափելու նպատակով բերենք նաեւ քաղաքակրթության փորձից վերցված այլ օրինակներ։ Հատկանշական է, որ մարդու իրավունքները, որքան էլ ազատական աշխարհակարգի հիմնական դերակատարները փորձեն դրանք ներկայացնել սոսկ ազատականության հաղթարշավի տիրույթում, նաեւ եկեղեցական արժեհամակարգային կիրառման արդյունք են։ Այսպես՝ «Եկեղեցին դեմ էր Հարավային Աֆրիկայում «ապարտեիդի»¹⁵ չարիքին, Եկեղեցին պայքարում էր Ուգանդայում Իդի Ամինի վարչակարգի դեմ։ Նիգերիայում Եկեղեցին բարձրաձայն ընդդիմանում էր գեներալ Սանի Աբաչայի բռնապետությանը։ Բազմաթիվ նմանատիպ օրինակներ կան, թե ինչպես Աֆրիկայում Եկեղեցին լուծություն չի պահպանել»¹⁶։ Այստեղից էլ առաջ է գալիս մեր այն համոզմունքը, որ Եկեղեցու դերի սահմանափակումն ունի երկակի վտանգավոր նշանակություն։

¹⁴ Անդ, էջ 107։

¹⁵ Ապարտեիդ – տարանջատ կենսավորում (անգլ.՝ Apartheid) – ռասայական խտրականության քաղաքականություն, որ մինչեւ ԺԹ. դարի 90-ական թվականները Հարավաֆրիկյան Հանրապետության վարչախումբն իրականացնում էր բնիկ աֆրիկացիների եւ ոչ եւրոպացի այլ բնակչության նկատմամբ։ Հարավային Աֆրիկայում ռասայական խտրականության համակարգն սկսել էր ձեւավորվել դեռեւս ԺԸ. դարի վերջերից՝ Հոլանդական կայսրության գաղութատերերի օրոք։ 1987–1993 թթ. ընթացքում իշխող Ազգային կուսակցությունը բանակցություններ էր վարում հակաապարտեիդյան քաղաքական պայքարն առաջնորդող Աֆրիկյան ազգային կոնգրես կուսակցության հետ։ 1990 թ. ընդդիմադիր կուսակցության ականավոր առաջնորդ Նելսոն Մանդելան (1918–2013) բանտից ազատ արձակվեց։ 1991 թ. հունիսի 17-ին Հարավաֆրիկյան Հանրապետությունում օրենսդրորեն վերջ դրվեց ապարտեիդի քաղաքականությանը, պայմաններ ստեղծվեցին 1994 թ. ապրիլին ամբողջովին ժողովրդավարական համընդհանուր ընտրություններ անցկացնելու համար։ Նոբելյան մրցանակի դափնեկիր (1993), մարդու իրավունքների համար պայքարի ամենահայտնի ջատագով Նելսոն Մանդելան դարձավ Հարավաֆրիկյան Հանրապետության առաջին սեւամորթ նախագահը։ Մինչ այդ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը դատապարտել է ապարտեիդը, իսկ 1973 թ. համաձայնագիրն այն որակել է իբրեւ հանցագործություն մարդկության դեմ (MORRIS MICHAEL, Apartheid: An illustrated history, Johannesburg and Cape Town, 2012)։

¹⁶ SÉU D. NDUKWE, "Tomorrow in Trauma: Children in a Bleeding World" in A. Adogame, J. McLean, A. Jeremian (eds.), Engaging the World: Christian Communities in Contemporary Global Societies, Regnum Edinburgh Centenary Series, Volume 21, Oxford Center for Mission Studies, 2014, էջ 118, տե՛ս <https://scholar.csl.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1004&context=edinburghcentenary>։

Առաջին. այն հնարավորությունն է տալիս պակաս քաղաքակրթական փորձառություն ունեցող, արտաքին ազդեցությունների ենթարկվող կամ ուղղակիորեն արտերկրից ուղղորդվող հասարակական կազմակերպություններին ստանձնել հանրային հարաբերություններում առաջամարտիկի դեր: Դրա վտանգն այն է, որ ստեղծում է ոչ միայն հանրային շահերը ներկայացնելու պատրանքային եւ անպատասխանատու ազատությամբ հրապուրվելու գայթակղություն, այլեւ խորացվում է ինֆնության ճգնաժամը:

Երկրորդ. սեփական մշակութային տարածության մեջ օտարված մարդը կամ փնտրում է այլընտրանքային ինֆնություն առաջարկող քաղաքակրթական ենթահամակարգերի անդամակցության հնարավորություն (աղանդավորական շարժումներ, ենթամշակույթ, լուսանցային քաղաքական խմբեր եւ այլն), կամ ձգտում է արտագաղթի: Վստահ ենք, որ անձնական ու հասարակական անվտանգությունը ոչ միայն ներառում է բարեկեցիկ կյանքը, այլեւ հոգեւոր անվտանգությունը¹⁷: Այս շարակարգում Հայ Առաքելական եկեղեցին անհրաժեշտ է դիտարկել որպես Հայաստանի հոգեւոր անվտանգության ապահովման եւ հայկական Սփյուռքի համախմբման գերակա գործոն: Ուստի առաջարկում ենք ՀՀ հոգեւոր անվտանգության ապահովման հիմքում դնել նոր տեսակի մարդասիրությունը եւ ժողովրդավարական համախմբումը, համաձայն որի՝ հոգեւոր անվտանգությունը պետք է իրականացվի համագործակցության մշակույթի զարգացման, գերշահույթի եւ մենաշնորհի մերժման միջոցով: Այս դիտանկյունից անհրաժեշտ է առարկայականորեն վերլուծել ՀՀ-ում հոգեւոր անվտանգության հիմնախնդիրները, քանի որ այն՝ որպես ազգային անվտանգության կարեւոր բաղադրիչ, ներառում է ազգային ինքնագիտակցությունը՝ արտացոլելով հասարակության կենսագործունեության ավանդույթները, նրա մշակույթը եւ պատմությունը, ինչպես նաեւ հասարակության բարոյաքաղաքական միասնությունը: Հոգեւոր անվտանգության հիմքում ազգային անվտանգությունն ապահովող բոլոր այն բարոյահոգեբանական եւ հայրենասիրական կանոնակարգված արժեքներն են, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է ոչ միայն իր վստահությունն ու աջակցությունը հոգեւոր եւ աշխարհիկ կառավարող վերնախավի քաղաքականությանը, այլեւ պատրաստակամությունը՝

¹⁷ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգեւոր անվտանգություն, «Հայկական բանակ», 3 (97), 2018, էջ 66–79:

պաշտպանելու իրեն, իր հավատքը, պետությունն ու պետականությունը: Քաղաքակրթության փորձը վկայում է, որ ազգերի եւ պետությունների դժբախտությունն սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է պատմության հոլովույթում ձեւավորված նրանց մշակութաչափորոշ (մշակութանորմատիվային) եւ բարոյահոգեբանական համակարգի քաղաքական ինքնությունը, երբ իշխանության իրականացման մշակույթի օրինականության ցածր մակարդակն օտարում եւ լուսանցային է դարձնում հասարակությանը, քաղաքացուն եւ հատկապես երիտասարդությանը՝ տրոհելով (փոշիացնելով) ազգի ոգին եւ ազգի իշխանությունը: Այս դիտանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինքնությունը մարդու վարքահոգեբանական ունակությունն է՝ խտացված ձեւով արտահայտելու իր պատկանելությունը, քանի որ «...մինչ մարդիկ հարաբերվում են շրջապատի մարդկանց հետ, նրանք այլ ելք չունեն, քան իրենց սահմանելու մյուսների հետ հարաբերությունների միջոցով եւ հիմնվելու նմանությունների ու տարբերությունների վրա: Ինքնությունը կարելի է, քանի որ թելադրում է մարդու վարքը»¹⁸: Հետեւաբար մարդն անվտանգ է միայն այն դեպքում, երբ վտանգված չեն պատմության հոլովույթում ձեւավորված եւ իր գոյաբանական կենսունակությունը հաստատած ազգային, միջանձնային, ներլնտամեկան, ներհամայնֆային համակեցություն ապահովող արժեքները: Այդպիսիք վստահաբար ունեն ոչ միայն ձեւական բնույթ, այլեւ սովորութային, ինչն էլ արտոնում է մշակութային բնագրի քաղաքագիտական, հասարակագիտական, մարդաբանական ուսումնասիրություն՝ հասարակական-մշակութային իրողությունների բանաձեւման, դրանց հարատեւությունն ապահովող կրթամշակութային կառուցակարգերի ստեղծման համար: Համընդհանուր կառավարման ներկայիս փուլում քաղաքակրթությունն ընթանում է այլակարծության (pluralism) ճանապարհով: Քննարկումներ են ծավալվում այլակարծիք քրիստոնեության, ադիականացման (modernity), անգամ այլակարծիք ճգնաժամերի մասին (policrisis): Այդ մոտեցման հետեւանքով ի հայտ են եկել բազմակի անորոշություններ: Անգամ տեղային քաղաքակրթություններն այսօր ի վիճակի չեն ապահովելու հասարակական-մշակութային միատարրությունը, ուստի ցանցային հնարավորությունների

¹⁸ Տե՛ս Ս. ХАНТИНГТОН, Кто мы?: Вызовы американской национальной идентичности, пер. с англ. А. Башкирова, Москва, 2004. էջ 51:

ընդլայնմամբ փորձում են բաց հասարակությանը բնորոշ արտաքին ներթափանցումներին հակազդել սեփական մշակութային ինքնությունն ու արժեքներն «արտահանելով», որն իրագործվում է «փափուկ ուժի» լայն գործիքակազմով: Այս պայմաններում ՀԱԵ-ն՝ որպես ավանդական արժեհամակարգի համակարգային խորհրդանիշների կրող-պահպանող-փոխանցող, միաժամանակ դառնում է նաեւ համընդհանուր կառավարման կերպափոխման գործընթացի լիարժեք մասնակից: Առկա է գիտական մոտեցում, ըստ որի՝ «Համընդհանուր հարավի բազմաձեւ ֆրիստոնենթյամ (global south Christianities) (ընդգծումը մերն է.՝ Մ. Գ., Հ. Պ.) վերջին վերածնունդը, ի թիվս այլ բաների, մարտահրավեր է քրիստոնեության ու քրիստոնեական աստվածաբանության եւրակենտրոն ինքնաճանաչմանը՝ հերքելով (defying), ի մասնավորի, քրիստոնեությունը՝ որպես արեւմտյան կրոն դիտարկելու թյուրըմբռնումը, չնայած այն հանգամանքին, որ եւրոպական բոլոր ժամանակակից կայսրությունները նույնականացվում էին որպես քրիստոնյա: Համընդհանուր հարավի բազմաձեւ քրիստոնեության վերելքը նաեւ ցույց է տալիս, որ ամբողջ աշխարհում քրիստոնեական միասնության հասնելու ջանքերը պետք է հաշվի առնեն բազմաթիվ տարբերություններ՝ ոչ միայն դավանաբանական, այլեւ հասարակական, տնտեսական եւ մշակութային»¹⁹: Տարակուսելի է, որ քրիստոնեական տիեզերաճանաչողության տնտեսական ու հասարակական-մշակութային դերի մասին համապարփակ փոխհամաձայնության պայմաններում գտնվում են աշխարհիկության աղավաղված, նաեւ կեղծ ընկալումներով առաջնորդվող անձինք, խմբեր, շարժումներ, որոնք միտում են իրականացնել Հայաստանի Հանրապետության եւ համայն սփյուռքահայության կյանքում ՀԱԵ դերը սահմանափակելու քաղաքականություն: Այդպիսի կողմնորոշումը ոչ միայն խեղաթյուրում է հայ հանրության ինքնության արժեքանությունը եւ խզում հասարակություն-պետություն փոխհարաբերությունները, այլեւ փաստում է, որ համընդհանուր կառավարման իրողություններին ու ակադեմիական, համաշխարհային ֆաղափական մոտեցումներին նրանք հաղորդակից չեն: Այսպիսով՝ հանգում ենք կրթության ու փոխադարձ հարգանքի միջոցով քաղաքակրթական սահմանների որոշակիացման անհրաժեշտությունը, ինչը հաշվի

¹⁹ SÉU R. C. BARRETO JR., How World Christianity Saved The Ecumenical Movement, Protestantismo em Revista é licenciada sob uma Licença Creative Commons, էջ 225, տե՛ս <http://dx.doi.org/10.22351/nepp.v46i2>.

կառնեն եւ համընդհանուր կառավարման պատմական փորձը, եւ քաղաքակրթությունների ինքնաճանաչողության անհրաժեշտությունը՝ անցյալ-ներկա-ապագա եռաչափության խորապատկերում: Կրթության այսպիսի խորքային ընկալումը համահունչ է նաեւ կրթության մասին արդի պատկերացումներին: Այսպես՝ «...որակյալ կրթության հասանելիությունը (ընդգծումը մերն է.՝ Մ. Գ., Հ. Պ.) էական նշանակություն ունի լուսանցայնացված եւ խոցելի բնակչությանը, հատկապես սերնդային աղքատության մեջ ապրողներին ուժեղացնելու, նրանց ներուժը մեծացնելու ու արտադրողական աշխատուժ ստեղծելու համար: Բացի աշխատաշուկայի վրա անմիջական ազդեցությունից, կրթական ծրագրերը կարող են պատրաստել երիտասարդներին եւ մեծահասակներին՝ դառնալու կայուն հասարակություն կերտողներ, որոնք կապեն բնության հետ ներդաշնակ»²⁰: Ասվածից հետեւում է, որ աշխատանքային առաջիադացում ունեցող հզոր անհատների մրցունակությունն ու բնականոն արդիականացող հասարակություն կերտելու հնարավորությունները անհրաժեշտ է զարգացնել: Այդ գործընթացը, մեր կարծիքով, չի կարող դիտարկվել սոսկ սպառողական հնարավորությունների ընդլայնման իմաստով, այն անհրաժեշտաբար բովանդակում է ազգային, մշակութային, քաղաքական ինքնության, արժեքանական ու քաղաքակրթական կրթածեւեր: Հետեւապես պետք է նկատի ունենալ, որ «Յուրաքանչյուր երկրի պատմությունը եզակի է. հաստատությունները, հասարակությունները եւ սովորությունները ձեւավորվել են տասնամյակներ ու դարեր շարունակ (ընդգծում մերն է.՝ Մ. Գ., Հ. Պ.): Հետեւաբար նախապես հաստատված կառավարման կաղապարների ընդօրինակումը մեծ զգուշություն է պահանջում: Ավելի ճիշտ, ուշադրության կենտրոնում պետք է լինի փառաբանական եւ արտադրական տեխնոլոգիաների (ընդգծում մերն է.՝ Մ. Գ., Հ. Պ.) փոխանակումը, ինչպես նաեւ ողջամիտ տնտեսական ու հասարակական քաղաքականությունը»²¹:

Հանրագումարի բերելով շարադրվածը՝ նշենք, որ համընդհանուր կառավարման զարգացման փորձը ցույց է տալիս, որ տեղային քաղաքակրթությունները նոր իրողությունների պայմաններում ունեն կենսու-

²⁰ SՆՍ Towards a Renewed Social Contract NGO CSocD Civil Society Declaration, էջ 2, տե՛ս <https://www.un.org/development/desa/dspd/wp-content/uploads/sites/22/2023/01/CSD-2023.pdf>:

²¹ R. GHIASY, “It’s time for a new model of international development” in A. Bodet, I. Krivaite, Z. McGuinness and A. Pauly (eds.), Rethinking Global Governance, Friends of Europe, 2020, p. 34.

նակության ընկալման իրենց ե՛լ օրինաչափությունները, ե՛լ դրանց հիմնավորման ներքին կառուցվածքները: Այդ իմաստով ուշագրավ է համապարփակ բանաձևումները կարեւորող այն միտքը, որ «արեւելյան իմաստությունն ընդունում է սկզբնական դատարկությունը կամ քառսը որպէս բարձրագույն իրականություն եւ, հարակարծական կերպով (paradoxical) հենց այդ պատճառով է նախընտրում օրգանական հասարակական կարգը, որի յուրաքանչյուր տարր իր տեղում է»²²: Այսպիսով՝ հասարակական կարգի, ինքնության ճգնաժամի հաղթահարման եւ հոգեւոր անվտանգության ապահովման նպատակադրումով հնարավոր է դառնում քաղաքակրթությունների երկխոսությունը՝ հանուն համընդհանուր կառավարման բնականոն արդիականացման, ինչը կարող է ընդհանուր առաջընթացի մեջ արեւելյան քրիստոնեական քաղաքակրթական արժեքների նորովի ներառման օրինակ դիտարկվել: Փոխներթափանցող քաղաքակրթությունների, «բաց հասարակությունների» կայացման (կերտման) արդի ժամանակաշրջանում անհատ–հասարակություն–պետություն մշակութաբանական խզումները հաղթահարելու միջոցով հնարավոր է մարդկության քաղաքակրթական բնագրից փոխառել այն չափորոշիչները, որոնք համադրելի են տեղային եւ համամարդկային քաղաքակրթության մշակութային բնագրի հետ: Անհատի, հանրության կամարտահայտության, ազատության գերազնահատված իրողություններում, երբ ազատության անպատասխանատու ընկալումն ու քաղաքացիական ինքնորոշման պակասը տարօրինակ կերպով զուգահեռ գոյատեւում են, առաջարկում ենք մարդու ազատության ընկալումները որոշակիացնել՝ հիմնվելով ազգային ինքնության արժեհամակարգի վրա: Որպէս օրինակ կարելոր ենք համարում Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարդապետության ծիրում առկա ազատ մարդու կանխագաղափարը: Աներկբայելի է, որ պատմության հոլովույթում իր գործառական կենսունակությունն ապացուցած Հայ Առաքելական Եկեղեցին, գիտավերլուծական հարացույցի սկզբունքների կիրառմամբ համագործակցելով ազգային այլ հաստատությունների՝ կրթական համակարգի եւ զինված ուժերի հետ, կարող է հանդես գալ որպէս բնականոն արդիականացման գերակա դերակատար:

Շարունակությունը՝ հաջորդիվ

²² S. ŽIZEK, Living in the End Times, Verso, 2010, p.116.

ԳԱՌՆԻԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ, ԵՊՀ, ԳՀՃ

ՅՈՒՆԱՆԵՍ ԿԱՐՆԵՅՈՒՂԱԶԱՐ ԲԱԲԵՐԴՅԻ († 1809) ՆԱԿԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՏԻՊ ՉԱՓԱԾՈՎԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՏԱՂԸ¹

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1903 թվականին՝ ուղիղ 120 տարի առաջ, երիտասարդ հայագետներ, այն ժամանակ Գեորգյան ճեմարանի դասախոսներ պատմաբան Հակոբ Մանանդյանը եւ լեզվաբան Հրաչյա Աճառյանը լույս ընծայեցին «Հայոց նոր վկաները» խորագրով ժողովածուի «գիտական» հրատարակությունը²: Գաղափարի հղացումն առնչվում է հայագիտության մեկ այլ վաստակավորի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի (հայտնի նաեւ «Միաբան» մականունով)³ անվան հետ: Դրանից մեկ տարի առաջ՝ 1902-ին, երկու հատորով լույս էր տեսել ժողովածուի «ժողովրդական» հրատարակությունը (առանց բնագրային տարւթերցումների, ծանոթագրությունների, համապատասխան ցանկերի եւ այլն)՝ «Քրիստոնէութեան եւ Սբ. Էջմիածնի հաստատութեան 16-րդ եւ գրերի գիւտի 15-րդ դարդարձի առթիւ»⁴: 1903 թ. հրատարակության մեջ աշխատասիրողները հրատարակեցին 140 վկայաբանություն, որոնցից

¹* Ստացվել է՝ 18.07.2023, գրախոսվել է՝ 25.07.2023:

էլ. հասցե՝ garnik.haroutiounian@gmail.com: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (թեմայի ծածկագիր՝ 22YR-6D018):

² Տե՛ս Հայոց նոր վկաները (1155–1843), գիտական հրատ., բազմաթիւ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ տեղեկութիւններով եւ ծանօթագրութիւններով, ձեռագրերի, նահատակների, յատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով եւ ցանկերով, աշխատ.՝ Յ.Մանանդեանի եւ Հր. Աճառեանի, Վաղարշապատ, 1903 (այսուհետ՝ ՀՆՎ, 1903):

³ Հենց վերջինի խորհրդով երիտասարդ, բայց արդէն խոստումնալից գիտնականները ձեռնամուխ եղան նոր վկաներին նվիրված ժողովածուի կազմման աշխատանքներին: Այդ հանգամանքների մասին մանրամասները տե՛ս ՀՆՎ, 1903, Յառաջաբան, էջ I–II, նաեւ՝ Պ. ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ, Հայ մարտիրոսագրության ուղիներում, Հայոց նոր վկաները (1155–1843), գրաբարից թարգմ.՝ Գ.Թոսունյանի, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2015, էջ 5–7:

⁴ Տե՛ս Հայոց նոր վկաները (ժողովրդական հրատ.), հտ. Ա. (1155–1485), հտ. Բ. (1486–1843), կազմեցին Յ. Մանանդեան եւ Հր. Աճառեան, Վաղարշապատ, 1902:

45-ը մինչ այդ անտիպ էր. 26 արձակ վկայաբանություն, 17 վկայաբանական տաղ եւ 2 տապանագիր⁵:

Վկայաբանություններն ընդհանրապես արժեքավոր եւ հետաքրքիր են տարբեր գիտակարգերի հետազոտողների համար, եւ Հ. Մանանդյանի գնահատմամբ՝ «Նախ եւ առաջ վկայաբանական այս հատուածները խիստ թանկագին նիւթ են Հայոց եկեղեցական պատմութեան համար եւ միանգամայն վստահելի աղբիւր են, որովհետեւ ժամանակակիցների ձեռքով են գրուած...»⁶: Աշխատասիրողների սպասումները, սակայն, վկայաբանական նոր նյութերի հայտնաբերման ծավալի իմաստով, ավելին էին, քան արդյունքում դրանք ստացվեցին. «Իմ գլխաւոր նպատակն է եղել ծանօթանալ այնպիսի պատմական աղբիւրների, որոնց միջոցով հնարաւոր լինէր վաւերական փաստեր ունենալ Հայոց ներքին կեանքի մասին մահմետականների տիրապետութեան շրջանում: Պէտք է խոստովանիլ, որ մեր յոյսերն այդ տեսակէտից աւելի մեծ էին, եւ արդիւնքներն այնքան էլ գոհացուցիչ չեղան»⁷: Այնուամենայնիւ, նրանք իրավացիորեն ենթադրում էին, որ իրենց չհրատարակած բնագրերի պակասը մեծ մասամբ ԺԸ. եւ հաջորդ դարերից է լինելու⁸: Մեր սույն հրապարակումը փորձ է՝ լրացնելու այդ պակասը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ ՏԱՂԵՐԳՈՒԻ

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԺԸ.–ԺԹ. դարերի նշանավոր հեղինակներից է Հովհաննես (անունը հանդիպում է նաեւ Հաննա, Հեննե ձեւերով) Կարնեցին (մոտ 1750–1820-ական թթ.)՝ տաղերգու, մանկավարժ, «նոտար», գրիչ, նաեւ՝ տիրացու, մահտեսի: Մինչեւ 1960-ական թվականները Հովհաննես Կարնեցու կյանքը, գործը եւ երկերը մանրամասն ուսումնասիրության առարկա չեն դարձել, երկերի մեծ մասն էլ անտիպ է եղել, թեեւ մի քանի հետազոտողներ՝ մասնավորապես Հր. Աճառյանը, ծանոթ են եղել այս հեղինակին եւ անդրադարձել նրա երկերին⁹: Առաջին անգամ Շուշանիկ Նա-

⁵ Տէս Պ. Հովհաննես ՅԱՆ, նշ. աշխ., էջ 7:

⁶ ՀնՎ, 1903, Յառաջաբան, էջ 1:

⁷ Անդ:

⁸ Տէս անդ, էջ XI:

⁹ Տէս Հովհաննես ԿԱՐՆԵՑԻ, Տաղարան, աշխատ.՝ Շ. Նազարյանի, Երեւան, 1962, էջ 5–6 (այսուհետ՝ Տաղարան):

զարյանն է մանրամասն անդրադարձ կատարել Հովհաննես Կարնեցու՝ «միջնադարյան հայ վերջին տաղերգուներից մեկի» կենսագրությանը, գրական ժառանգությանը եւ հրատարակել հեղինակի տաղերից ավելի քան երեք տասնյակը: Ակնհայտորեն նրա համար առաջնային էին Հովհաննես Կարնեցու աշխարհիկ բնույթի տաղերի հրատարակումը եւ ուսումնասիրությունը¹⁰, մինչդեռ հեղինակի հոգեւոր-կրոնական թեմաներով տաղերի մասին նա գրում է. «Անկյանք գաղափարներ ունենալու հետ մեկտեղ, տաղտուկ են, ծանրաշունչ եւ զուրկ սիրո երգերի համից ու հոտից»¹¹: Սա է թերեւս պատճառը, որ մեկ տարի անց՝ 1963 թվականին, Վիեննայի Մխիթարյան հայրերից Համազասպ Ոսկյանը «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում հրատարակեց Հովհաննես Կարնեցու կյանքին ու երկերին նվիրված մի ծավալուն հոգված (որը Կարնեցու կենսագրությանը նոր փաստեր գրեթե չէր ավելացնում, սակայն ներառում էր մինչ այդ անտիպ բնագրեր)¹²: Նույն հոգվածը 1966-ին վերահրատարակվեց չորս հայ տաղասացներին նվիրված նրա գրքում¹³: Հայր Հ. Ոսկյանն իր աշխատանքում, հիմնվելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրական հավաքածուի վրա, հրատարակել է մինչ այդ անտիպ՝ կրոնական բնույթի հինգ տաղ, սիրո մեկ տաղ, «ուրախութեան» մեկ տաղ, ինչպես նաեւ եւս 5 հինգ տաղ՝ նվիրված Ավետյաց երկրի սրբավայրերին (Սրբոց Հակոբյանց վանքին, Սբ. Հարություն տաճարին, Բեթղեհեմի Սբ. Ծննդյան տաճարին եւ այլն)¹⁴: Վերջինները գրական արժեքով գուցե իրոք զիջում են աշխարհիկ (սիրո) երգերին, սակայն առնվազն Երուսաղեմի սրբավայրերի տեղադրության կամ պատկանելության իմաստով, կարծում ենք, բավական մեծ կարեւորություն ունեն:

Հովհաննես Կարնեցու թողած գրական ժառանգությունը տպավորիչ է. հայտնի է նրա գրչին պատկանող շուրջ 130 տաղ (մեծ մասը՝ աշ-

¹⁰ Բնականաբար, դա կարող էր լինել խորհրդային շրջանի գաղափարական սահմանափակումներով պայմանավորված, չենք բացառում նաեւ՝ անձնական նախընտրություն պատճառով:

¹¹ Տաղարան, էջ 38:

¹² ՀԱՅՐ Հ. ՈՍԿԵԱՆ, Յովհաննէս Կարնեցի, ՀԱ, 1963, թիւ 7–9, էջ 339–358, թիւ 10–12, էջ 489–506:

¹³ Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը. Յովհաննէս Կարնեցի, Գրիգոր արքեպ. Օշականցի, Մովսէս դպիր Կարնեցի եւ Մարտիրոս վ. Ղրիմեցի, գրեց եւ հրատ.՝ դկտ. հայր Համազասպ Ոսկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1966, էջ 1–57: Մենք օգտվել ենք այս հրատարակությունից:

¹⁴ Տէս անդ, էջ 13–53:

խարհիկ բնույթի), ինչպես նաև՝ հինգ պոեմ կամ վիպերգ, որոնցից չորսը՝ վկայաբանական¹⁵, մեկը՝ պատմական: Վերջինը, որը նվիրված է Կարին քաղաքը եւ շրջակայքը 1813 թ. պատուհասած սարսափելի սովին, հրատարակվել է (սակայն թերի) դեռևս 1884 թ.¹⁶:

Շ. Նազարյանի բնորոշմամբ՝ «Հովհ. Կարնեցին միջնադարյան հայ վկայաբանական գրականության վերջին դեմքերից մեկն է. այդ առումով նրա այդ պոեմները կարծես թե եզրափակում են վկայաբանական գրականության պատմությունը»¹⁷: Հ. Մանանդյանը եւ Հր. Աճառյանը «Հայոց նոր վկաները» ժողովածուում հրատարակել են հեղինակի հիշյալ չորս վկայաբանական պոեմներից երեքը¹⁸: Սրանցից բացի՝ Շ. Նազարյանը Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ Մատենադարան կամ ՄՄ) ձեռագրական հավաքածուում հայտնաբերել է Հովհաննես Կարնեցու հեղինակած եւս մեկ անտիպ «տաղ»՝ նվիրված Ղազար Բաբերդցի անունով մի երիտասարդ նահատակի: Նա նշել է այն ձեռագրերը, որոնցում ինքը գտել էր այս երկը, սակայն բնագիրը չի հրատարակել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑՈՒ՝ ՂԱԶԱՐ ԲԱԲԵՐԴՅԻ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՏԻՊ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Կարնեցու վկայաբանական բնույթի երկերի մասին Շ. Նազարյանն ավելի մեղմ է արտահայտվել, քան հոգեւոր տաղերի մասին՝ նշելով, որ դրանք «ուշագրավ են նաեւ որպես գեղարվեստական ստեղծագործություններ», որոնք «գաղափար են տալիս նաեւ այս մարդկանց անցած կյանքի առօրյայի, ծեսերի, զբաղմունքի, մտավոր

¹⁵ Չափածո (կամ տաղաչափված) վկայաբանությունների բնորոշման համար Շ. Նազարյանն իր նշյալ աշխատանքում տարբեր եզրեր է գործածել. «էպիկական պոեմ» (էջ 11) կամ ուղղակի «պոեմ», «վկայաբանական երգ» (էջ 11), «էպիկական երգ» (էջ 11) կամ ուղղակի «երգ», «վիպերգ» (էջ 11), «վկայաբանական տաղ» (էջ 14), «վկայաբանական պոեմ» (էջ 18): Նախընտրելի ենք համարում վերջինը՝ բնորոշելու համար Հովհաննես Կարնեցու՝ նոր վկաներին նվիրված ընդարձակ երգերը, որոնք անվանում ենք նաեւ պարզապես «չափածո վկայաբանություններ», իսկ «վկայաբանական տաղ»-ը կիրառել ենք հիմնականում այդ ընդարձակ երգերին հաջորդող, վկաներին փառաբանող ավելի փոքրածավալ երգ(եր)ի համար:

¹⁶ Պատմություն սովուն Կարնոյ (1813), Բազմավէպ հանդիսարան, հտ. ԽԲ., պր. Բ., ապրիլ-յունիս, 1884, էջ 118–122, տե՛ս նաեւ Տաղարան, էջ 16–17:

¹⁷ Անդ, էջ 21:

¹⁸ ՀնՎ, 1903, էջ 572–602, 620–674: Ի դեպ՝ Սահակ Մսրը Կարնեցու վկայաբանության առաջաբանում Հովհաննես Կարնեցին հիշատակել է եւս մեկ նոր վկայի՝ Պալի Կարնեցուն, ինչը եւս, որպես միակ աղբյուր նրա մասին, Հ. Մանանդյանը եւ Հր. Աճառյանը զետեղել են իրենց ժողովածուում. տե՛ս անդ, էջ 603–604:

զարգացման, մշակույթի վիճակի եւ այլ հարցերի մասին»¹⁹։ Ապա հավելում է. «Հովհ. Կարնեցու վկայաբանական վերոհիշյալ շորս պոեմներից իրենց բովանդակությամբ եւ արվեստով առավել ուշագրավ են Սահակ մանկանը եւ Վառվառ աղջկանը նվիրվածները։ Այս պատճառով էլ մենք անհրաժեշտ ենք համարում... փոքր-ինչ կանգ առնել այդ երկու պոեմների վրա»²⁰։ Թերեւս այս պատճառով էլ ուսումնասիրողը նպատահարմար չի համարել հրատարակել Ղազար Բաբերդցուն նվիրված վկայաբանական պոեմը, այլ մանրամասն անդրադարձել է հիշյալ երկու վկայաբանության դիպաշարին։

Կարծում ենք, սակայն, որ մի կողմից՝ Հովհաննես Կարնեցու վկայաբանական ժառանգության ամբողջացման, մյուս կողմից՝ Հ. Մանանդյանի ու Հր. Աճառյանի սկսած Հայոց նոր վկաներին նվիրված սկզբնաղբյուրների հավաքագրման, հրատարակման եւ ուսումնասիրության համատեքստում կարելու է նաեւ այս նահատակի վկայաբանության՝ գիտական շրջանառության մեջ դնելը²¹։ Ուստի հիմնվելով երկի՝ ՄՄ Հ^ր 9958, ինչպես նաեւ ՄՄ Հ^ր 8735 ձեռագրերում պահպանված բնագրերի վրա²²՝ որոշեցինք կազմել Ղազար Բաբերդցու վկայաբանության բնագիրը։ Այս անտիպ վկայաբանության մասին խոսելով՝ Նազարյանը հավելում է. «Պոեմի վերջում կցված է Հովհ. Կարնեցու նույն նահատակին նվիրված մի այլ տաղ (16 տող), որը նույնպես անտիպ է...»²³։ Նշյալ տաղը, որը եւս երկու ձեռագրերում էլ պահպանվել է, նույնպես հրատարակում ենք՝ դնելով վկայաբանական պոեմից անմիջապես հետո (հետեւելով ձեռագրային կառուցվածքին)։

Ի տարբերություն Սահակ Մըսր մանկան († 1778), Հարություն Կարնեցու († 1806), Գասպար Դվնիկցու (Կարնեցու), նրա քույր Վառվառի եւ Մարիամ Կարնեցու († 1810), որոնք ծագումով Կարինից (էրզրում) կամ հարակից գյուղերից էին, Ղազարը († 1809), ամենայն

¹⁹ Տաղարան, էջ 20–21։

²⁰ Անդ, էջ 21։

²¹ Կարինում ու շրջակայքում եւ առահասարակ Օսմանյան կայսրության տարածքում ԺԸ.–ԺԹ. դարերում նահատակություններին, դրանց պատճառներին ու լայն իմաստով պատմական համապատկեր, ինչպես նաեւ Հովհաննես Կարնեցու վկայաբանական երկերի առանձնահատկություններին առաջիկայում մանրամասն անդրադառնալու ենք առանձին հոդվածով։

²² Այս ձեռագրերում է Շ. Նազարյանը հայտնաբերել խնդրո առարկա երկը. տես անդ, էջ 13–14։

²³ Նույն տեղում, էջ 14։

հավանականությունը, Բաբերդ քաղաքից էր: Այն շուրջ 125 կմ է հեռու Կարինից, այստեղով էր անցնում մեծ կարեւորություն ունեցող՝ Տրապիզոնը Կարինին կապող ճանապարհը²⁴: Թեեւ Բաբերդ քաղաքի բնակչության կազմի մասին վիճակագրական ստույգ տվյալներ մեզ չեն հասել, սակայն 1800–1830-ական թվականների համար բերվում են հետեւյալ թվերը. 14 000 բնակիչ, որից 10 000-ը՝ հայ, հայերից բացի՝ քաղաքում ապրում էին նաեւ թուրքեր (որոնք մեծ մասամբ հայվրացական ծագում ունեին եւ աչքի էին ընկնում կոպիտ բարքերով ու խիստ թշնամական էին հատկապես հայերի նկատմամբ) եւ փոքր թվով հույներ, իսկ մինչեւ 1915 թ. քաղաքում կար հայկական հինգ եկեղեցի²⁵: Ցավոք, Ղազարի մասին, անգամ նրա նահատակության նույն տարում (1809 թ.) ժամանակակցի ստեղծած վկայաբանության առկայության պարագայում, կենսագրական տեղեկություններ գրեթե չունենք: Հովհաննես Կարնեցին երկի խորագրում նշում է, որ Ղազարի նահատակության մասին լուրը հասել է Կարին (այսինքն՝ ինքն անձամբ ականատես չի եղել այդ իրադարձությանը), եւ «յոմանց նահատակասէր անձանց» կողմից «հարկադրված»՝ ինքը ստեղծել է նրան նվիրված չափածո վկայաբանությունը²⁶: Սա, ի թիվս այլ հանգամանքների, ցույց է տալիս ժԹ. դարասկզբին հայկական միջավայրում՝ մասնավորապես Կարինում, վկայաբանությունների հանդեպ հետաքրքրությունը («պատվիրատուների» առկայությունը), ինչպես նաեւ հմուտ անձի (որպիսին էր վստահաբար «արդար վարժապետ» Հովհաննես Նոտարն այդ ժամանակ)՝ այդ գրական տեսակի երկերի շարադրումը, ձեւավորումը (նաեւ տաղի երաժշտության հորինումը կամ մշակումը²⁷): Ավելին. Հովհաննեսին դիմող «նահատակասէր» անձինք, ըստ ամենայնի, ակնկալել են հենց չափածո վկայաբանության ստեղծում, քանի որ մինչ այդ նա այդպիսի առնվազն երկու չափածո վկայաբանություն արդեն հեղինակել էր՝ Սահակ Կարնեցունը (ուղեկցող տաղով) եւ Հարություն Կարնեցունը:

²⁴ Տէս Թ. Խ. ՀԱՅՈՐՑԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Ա-Դ, Երեւան, 1986, էջ 527:

²⁵ Տէս նույն տեղում:

²⁶ Տէս ՄՄ 9958, 2ա:

²⁷ Խոսքը հատկապես չափածո վկայաբանությանը հաջորդող վկայաբանական տաղերի մասին է, որոնց դեպքում Կարնեցին հիմնականում նշել է, թե ըստ ինչ «գոյն»-ի, այսինքն՝ արդեն գոյություն ունեցող որ երգի եղանակով պետք է երգվեին:

Ղազար Բաբերդցուն նվիրված վկայաբանությունը (100 տող) ծավալի առումով Հովհաննեսի պոեմներից ամենափոքրն է ու թերեւս համեմատելի է Հարություն Կարնեցու վկայաբանության (172 տող) հետ, որը Հովհաննես Կարնեցին գրել էր նրանից երեք տարի առաջ: Մյուս երկու վկայաբանական պոեմները ծավալուն վիպերգեր են՝ բաժանված առանձին մասերի՝ համապատասխան ենթախորագրերով եւ այլն²⁸: Ի տարբերություն, սակայն, Հարություն Կարնեցու, որի մասին մեզ տեղեկություններ են հասել նաեւ այլ աղբյուրներից, Ղազարի մասին այդպիսիք մեզ հայտնի չեն, իսկ Հովհաննես Կարնեցին, ի տարբերություն Հարություն Կարնեցուն նվիրված երկի, բնավ չի խոսում Ղազարի ծագման, մասնագիտության կամ կյանքին վերաբերող հանգամանքների մասին, անգամ մանրամասն չի խոսում Ղազարի նահատակության հանգամանքների մասին: Սա հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ Ղազարն ուրիշ քաղաքից էր, եւ նրա մասին տեղեկությունները սահմանափակվում էին վկայաբանության պատվիրատուների բանավոր հաղորդումով:

Հովհաննես Կարնեցին Ղազար Բաբերդցուն նվիրված իր վկայաբանությունն սկսում է նահատակների (մարտիրոսների կամ վկաների) սխրանքի, դրա դրդապատճառների, նրանց տանջանքների մասին խոսելով, որոնք սկիզբ են առել դեռեւս Ստեփանոսից (իմա՝ Նախավկա) եւ հասել մինչեւ իր «դարը»: Եւ, ըստ Կարնեցու, հենց նրանց շավիղներին հետեւելով՝ իր օրերում եւս բազմաթիվ վկաներ եղան, որոնցից շատերի մասին Կարնեցին ինքը տեղյակ չէ: Ապա պատմում է, որ հավատարիմ մարդիկ լուր են տարածել Բաբերդ քաղաքում ունեցող Ղազարի նահատակության մասին: Վերջինս «ընտիր ազգէ» էր ծագում, աստվածասեր ծնողների զավակ էր, արի, բարի վարք ու համբավ ուներ: Ապա Ղազարը, տեսակին հատուկ ոճով ու սկզբունքներով, համեմատվում է այլ սրբերի (կամ աստվածաշնչյան կերպարների)՝ հինկտակարանյան Հոբի հետ, որի դեմ եւս սատանան թակարդ էր լարել (վկայաբանական տաղում արդեն Ղազարը համեմատվում է նորկտակարանյան Ղազարոսի²⁹ հետ, որի անվանակիցն էր նոր վկան): Հովհաննես Կարնեցին չի

²⁸ Դրանց դիպաշարին ու գրական առանձնահատկություններին մանրամասն անդրադարձել է Շ. Նազարյանը. տես Տաղարան, էջ 24–35:

²⁹ «Էր Ղազարոս Տեառն Յիսուսի սիրելի», ՄՄ 9958, Ցա: Ավետարաններում երկու Ղազարոսի մասին է հիշատակվում: Այստեղ խոսքը Հիսուսի «բարեկամ» Ղազարոսի մասին է,

հաղորդում Ղազարի զբաղմունքի կամ մասնագիտության մասին, նրան ուղղակի երիտասարդ է կոչում: Այնուհետև պատմվում է Ղազարի դեմ հյուսված զրպարտանքի բուն առիթի մասին, որի շատ հանգամանքներ այդպես անհայտ են մնում ընթերցողի համար. մի վավաշոտ մոլլա³⁰, շնանալով ոմն կնոջ հետ, բռնվում է ոստիկանների կողմից եւ սպասվող տանջանքների սպառնալիքի տակ զրպարտում է Ղազարին սուտ մատնությանմբ, թե միասին են կատարել արարքը: Արդյունքում Ղազարին եւս ձերբակալում են ու տանում ատյան՝ խոստանալով շտանջել, պահպանել կյանքը, ավելին՝ խոստանալով հարստություն, եթե ուրանա իր կրոնը: Պատումից պարզ չէ, թե որտեղից է մոլլան ճանաչել Ղազարին, եւ մատնությունն առհասարակ հանգամանալից չի ներկայացված, ինչը թերեւս պետք է վերագրել Հովհաննես Կարնեցուն՝ բոլոր մանրամասներին չտիրապետելուն: Երանելին, սակայն, չկարողանալով լռել, հայտարարում է, որ ամուր է իր հավատքի մեջ եւ պատրաստ տանջվելու, քանի որ չի վախենում տանջանքներից: Այդ լսելով՝ հավաքված ամբոխն սկսում է գանահարել Ղազարին, եւ նույն պահին վճիռ է կայացվում կախել նրան կամրջից: Հաջորդած հորդորները՝ հրաժարվել քրիստոնեությունից, եւս չեն ազդում երիտասարդի որոշման վրա, որը, «ի սէր Փրկչին գոլով վառեալ»³¹, նախընտրում է բարի անունն ու նահատակությունը: Նահատակությանը հաջորդում է հրաշք՝ գիշերը լույս է իջնում եւ շրջապատում վկայի մարմինը, որը տեսնում են «գիշերապահ»-ները: Լուրը տարածվում է, ծնողները եւ հավատացյալները (քրիստոնյաները) ուրախանում են լուրից, հիվանդները գալով բժշկվում են ախտերից: Իսկ տեղի «իշխանները» (իմա՝ հայ մեծամեծները) միաբանվելով գնում են ոստիկանների մոտ եւ թույլտվություն ստանում իջեցնելու վկայի մարմինը կախաղանից: Քահանաները, ըստ պատշաճի, հուղարկավորում են նահատակի մարմինը, եւ «Սուրբ Շիրիմի» վրա դրանից հետո եւս լույս է իջնում, «եւ զայլ բազում հրաշս ցուցեալ»³²: Ապա Հովհաննես Կարնեցին գովերգում է Բաբերդը, ապա՝ «տոհմ Հայկեան»՝ Ղազարի պես ընտիր այր ծնվելու համար, նաեւ երանելի ծնողներին, որոնց նահատակված որդին

որը հետագայում հարություն առավ Հիսուս Քրիստոսի շնորհիվ. մանրամասն տե՛ս Հովհ. ԺԱ. 1–34:

³⁰ Բնագրում՝ «Այր ոմն մոլի վավաշոտեալ, / ընդ կնոջ միոյ շնութին անկեալ... իսկոյն մոլին այն ուրացեալ, / եւ զըժոխոց բաժին եղեալ». ՄՄ 9958, 4ա:

³¹ Անդ, 5ա:

³² Անդ:

այնուհետ առ Աստված բարեխոս էր դարձել: Հովհաննեսը վերջում նաեւ նշում է, թե ինչպես է տեղեկացել Ղազարի նահատակության մասին.

«Կարնեցի արք ոմանք անդ լեալ,
զկատարումն Սրբոյս տեսեալ,
եւ եկեալ աստ զորպէսն պատմեալ,
զբանս յօրինել ըզմեզ հարկեալ»³³:

Պոեմին հաջորդող վկայաբանական տաղը (16 տող), որում Ղազարն անվանվում է «նոր նահատակ վերջին դարոյս»³⁴, փաստական որեւէ նոր տվյալ չի հաղորդում վերջինի կամ նրա նահատակության հանգամանքների մասին, այլ բանաստեղծորեն վերապատմում է պոեմում հիշված կարեւոր անցքերը:

ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, խնդրո առարկա բնագրի կազմման համար հիմք են ծառայել Մատենադարանի վերոնշյալ երկու գրչագրերը.

ՄՄ Հ^{մր} 9958, 2ա–8ա (=Ա): Յովհաննէս Կարնեցի, Նահատակութիւն Ղազար երիտասարդին ի Բաբերդ: 1809 թ.: Կարին: Գրիչ՝ հեղինակը: Թերթ՝ 8: Թուղթ: 15,6×10,8: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 16: Կազմ՝ լս: Հշտկրն գրչի՝ 2ա³⁵:

ՄՄ Հ^{մր} 8735, 53ա–58ա (=Բ): Ժողովածու: ԺԹ. դ. (1809-ից հետո): Թերթ՝ 76: Թուղթ: 15×9,9: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 16–25: Կազմ՝ ստվա-րաթուղթ: Հշտկրն հեղինակի՝ 58ա եւ այլուր³⁶:

Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի կազմողները ՄՄ Հ^{մր} 9958 գրչագիրը, որը բովանդակում է միայն խնդրո առարկա երկը, ի թիվս մի քանի տասնյակ այլ ձեռագրերի, համարում են Հովհաննես Կարնեցու ինքնագիրը³⁷՝ հեղինակված Կարինում 1809 թ.: Ուստի Ղազար

³³ Անդ, 6բ:

³⁴ Անդ, 7բ:

³⁵ Տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, ցանկերը եւ համեմ. տախտակները՝ Օ. Եգանյան, խմբ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երեւան, 1970, էջ 1021:

³⁶ Ձեռագրի նկարագրությունը տես անդ, էջ 803–804:

³⁷ Ակնհայտ որեւէ փաստ չունենալով հանդերձ, կարծում ենք, հաշվի առնելով դրանց մեծ քանակը, Հովհաննես Կարնեցու ինքնագիրը համարվող բազմաթիվ ձեռագրերի շարքում կարող են լինել նաեւ ոչ այդպիսիք. մասնավորապես երբ ուրիշ գրիչը կարող էր չթողնել իր հիշատակարանը, այլ արտագրել միայն Հովհաննեսինը (այս պատկերն է նաեւ խնդրո

Բաբերդցուն նվիրված չափածո վկայաբանության բնագիրը կազմել ենք՝ հիմք ընդունելով այս ձեռագիրը, համեմատելով նաեւ ՄՄ Հ^մ 8735 ձեռագրի (ընդօրինակված ժԹ. դարում՝ 1809-ից հետո) հետ: Տառասխալների, վրիպակների եւ նման դեպքերում նախընտրելի ենք համարել բնագրում արտացոլել Բ. ձեռագրի տարբերակը:

Տարընթերցումները, ինչպես նաեւ տոմարական ծածկագրված տվյալները եւ բնագրերում գործածված «օտարագրի» մի քանի բառերի բացատրությունը տվել ենք տողատակում³⁸. վերջինի համար օգտվել ենք «Հայոց նոր վկաները»-ի համապատասխան բառարանից³⁹ (քանի որ խնդրո առարկա բոլոր բառերն այնտեղ արդեն ընդգրկված էին): Պոեմի եւ տաղի բնագրում հեղինակի՝ կարմիրով գրված խորագրերը, սկզբնատողերը եւ սկզբնատառերը կամ բառերը նշել ենք շեղով՝ ընթերցողի համար ավելի ակնառու դարձնելու նրա կազմած ծայրակապերը: Բացի այդ՝ հեղինակի (գրչի)՝ մեծատառով գրված բառերը եւս հիմնականում թողել ենք անփոփոխ, որոշ բառեր էլ մեծատառ դարձնելով՝ ըստ հարկի, ինչպես նաեւ միօրինակ ենք դարձրել նույն բառի՝ առանձին կամ միասին գրելաձևեր:

Ինչպես նկատել են նախորդ ուսումնասիրողները, Հովհաննես Կարնեցին ծայրակապով իր անունը «ծածկագրելու» սովորություն է ունեցել՝ հիմնականում իր ստեղծագործությունների տների սկզբնատառերով: Ծավալուն երկերի դեպքում նա անգամ ամբողջ նախադասություններ է ձեւակերպել: Այս հանգամանքն իհարկե նպաստում է ստեղծագործության հեղինակի հեշտ նույնականացմանը՝ անգամ նրա հիշատակարանի կամ խորագրում նրա անվան բացակայության պարագայում: Գասպար Բաբերդցի նահատակի՝ 100 տողից բաղկացած վկայաբանության դեպքում էլ տների սկզբնատառերը, ըստ Շ. Նազարյանի, հոգում են՝ «Ի Հաննէ Նօտարէ ասացեալ է բանս ի պատիւ նոր նահատակիս»⁴⁰: Սակայն ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ծայրակապը հետեւյալն է. «Ի Հէննէ Նօտարէ ասացեալ է բանս ի պատիւ սուրբ նահատա-

առարկա գրչագրում): Դրանցից յուրաքանչյուրի՝ նրա ձեռքով գրված լինելը հաստատելը ձեռագրագիտական առանձին ծավալուն ուսումնասիրություն է ենթադրում, ինչը դուրս է սույն աշխատանքի նպատակներից:

³⁸ Հոգվածի «Բնագրեր» բաժնում բնագրի տարընթերցում չհանդիսացող մեր ծանոթությունները նշել ենք շեղատառ:

³⁹ Տե՛ս ՀՆՎ, 1903, էջ 781–795:

⁴⁰ Տաղարան, էջ 14:

կիս»⁴¹։ Համոզված ենք՝ ճիշտ է մեր առաջարկած ընթերցումը։ 16 տողից (4 քառատող) կազմված վկայաբանական տաղի տների առաջին եւ երրորդ տողերի սկզբնատառերը եւս հոդում են հեղինակի անունը՝ «Ի Հէննէէս»⁴² կամ «Ի Հաննէէս»⁴³։ Ինչպես իր մյուս երկերում, այստեղ էլ Հովհաննեսը ծածկագրել է պոեմի եւ տաղի գրման թվականը՝ համապատասխանաբար «մեծ բառ» եւ «էպանծ» բառերի տառերի թվային համարժեքների կիրառմամբ⁴⁴։

ԲՆԱԳՐԵՐ

Ստորեւ ներկայացնում ենք Ղազար Բաբերդցուն նվիրված չափածո վկայաբանությունը (պոեմը) եւ տաղը՝ ըստ Մատենադարանի վերոնշյալ ձեռագրերի բնագրերի։

|Ձա| Ի Բաբերթ փաղափոջ Ղազար անուն ոմն երիտասարդ նահատակեալ 1258⁴⁵ թուջ, լուրն հասեալ աստ՝ ի Կարին, եւ յովանց նահատակասէր անձանց հարկադրեցեալ եւ ըստ այնմ լոյ յարմարեալ եղեւ բանս յովեմնէ Նօտարէ.

Ի յաստուածուստ՝ յերկիր արկեալ,
հուր իւր սիրոյն գերազանցեալ,
որով վկայքն սիրավառեալ,
ի սէր Փրկչին՝ տիր բորբոքեալ։

Հըզօրաբար արիացեալ,
եւ ի մրցմունս մենամարտեալ,
զաշխարհային փառսըն⁴⁶ ատեալ,
անանց փառացըն փափաքեալ։
|Զբ| Եին զպատուէրն առնկալեալ,
զիւր անցայինսըն յետ թողեալ,
զխաչն յուս ինքեանց սիրով բարձեալ,
զկնի նորուն առհետեւեալ։

⁴¹ Տէս ՄՄ 9958, 2ա-7ա։

⁴² Տէս անդ, 7բ-8ա։

⁴³ Տէս ՄՄ 8735, 58ա։

⁴⁴ Հաշվարկը ներկայացրել ենք բնագրի համապատասխան տեղում։

⁴⁵ Բ.-ում՝ ՌՄԳ. (= ՌՄԾԸ°, Գ-ն՝ ԾԸ°.-ի վրա հետագայում սեւով ավելացրած)։

⁴⁶ Բ.-ում՝ փառսն։

Նախատանաց ընդդիմացեալ,
 ողորճանաց ոչինչ լուեալ,
 բռնակալաց հանդէպ կացեալ,
 յըսպառնալեաց նոցին չերկեալ⁴⁷:

Նոցունց զպարգեւան ոչինչ վարկեալ,
 խոստացելոցն ոչ հաւանեալ,
 զպէս պէս տանջանսն յանձն առեալ,
 զանձինս ի մահ տալ յօժարեալ:

Է յայտնապէս եւ ճիշդ⁴⁸ գըրեալ⁴⁹,
 խստամբեր վիշտս որ այնք կրեալ,
 յՍտեփաննոսէ⁵⁰ մինչ զայս հասեալ,
 զորպիսութիւն տանջմանցն պատմեալ:

|Յա| Նոցունց շաւղացըն հետեւեալ,
 նոր վկայքն որ դարուս եղեալ,
 բազմացն որ չեմք վերահասեալ,
 այլ այնց, որ եմք տեղեկացեալ:

Օժանդակ ինձ օգնիչ առեալ,
 զմաղթանք Սրբոցն հաճոյացեալ,
 'ւ⁵¹ ի Սուրբ Հոգին ապաւինեալ⁵²,
 որ ի ձիրսն է առատացեալ⁵³:

Տաւաճական լուր իմն հնչեալ,
 հաւատարմաց այն իսկ պատմեալ,
 զի ի քաղաքն Բաբերթ կոչեալ,
 Ղազար ոմն անդ նահատակեալ:

⁴⁷ Ա.-ում՝ չերկալ:

⁴⁸ Բ.-ում՝ ճիշտ:

⁴⁹ Բ.-ում՝ գրեալ:

⁵⁰ Բ.-ում՝ յՍտեփաննոսի:

⁵¹ Բ.-ում՝ եւ:

⁵² Ա.-ում՝ պաւինեալ:

⁵³ Բ.-ում՝ ապա վիպել վստահացեալ չի/ս որ ի ձիրսն է առատացեալ:

Այն իսկ ընտիր⁵⁴ ազգէ սերեալ,
յաստուածասէր ծնողաց ծնեալ,
բարի վարուք նա զարգացեալ,
արիութեամբ տիր քաջացեալ:

|Յբ| Ռամից մանկանց ազնիւ ցուցեալ,
համբաւ բարի առ ըստացեալ,
համայնից աչքն⁵⁵ ի նա հայեալ,
կէսք [հ]մանցեալք⁵⁶ եւ այլք՝ սիրեալ:

Էին շնորհիւնն փայլեցեալ⁵⁷,
տեսլեամբ պայծառ գեղեցկացեալ,
հանճարունակ ճարտար գտեալ,
մեծահաւատ բարեպաշտեալ:

Առ որ սատանն թակարթ արկեալ,
եւ իբր Յոբայ ցանցըս եդեալ,
փորձութիւն իմն վեր յարուցեալ,
ըզնա գթել⁵⁸ տիր ջանացեալ:

Սակայն Տէր մեր զնա ոչ թողեալ,
յօգնել նմա նախախնամեալ,
շնորհիւն ըզնա զօրացուցեալ,
արիութեամբ քաջացուցեալ:

|4ա| Այր ոմն մոլի վավաշոտեալ,
ընդ կնոջ միոյ շնութիւն անկեալ,
որ եւ զապիթք⁵⁹ ըզնա կալեալ,
եւ ի տանջել առ պատրաստեալ:

⁵⁴ Ա.-ում՝ ընտի:

⁵⁵ Բ.-ում՝ աչք:

⁵⁶ Բ.-ում՝ մանացեալքն:

⁵⁷ Ա.-ում՝ փայլեցեալ:

⁵⁸ Բ.-ում՝ գթէք:

⁵⁹ Արաբ.՝ ոստիկան, ոստիկանություն:

Ցասմամբ ի նա ըսպառնացեալ,
 եւ ըսպանման վճիռ հատեալ,
 իսկոյն մոլին այն ուրացեալ,
 եւ դըժոխոց⁶⁰ բաժին եղեալ:

Եւ յետ այնք⁶¹ չարէն դրդեալ,
 եւ մատնութեամբ զըրաբանեալ⁶²,
 թէ՛ Ղազարն ինձ էր ընկերացեալ,
 ի միասին եմք զայն գործեալ:

Առ ժամայն փոյթ զնա եւս կալեալ,
 եւ գանելով յատեան տարեալ,
 զխիստ չարչարանս տալ ասացեալ՝
 Թէ ուրանաս՝ լինիս զերծեալ:

|4բ| Լուր մեզ, ասեն, դու հնազանդեալ,
 փառօք⁶³ մեծութիւն լեր ըստացեալ,
 գանձիւք բազմօք հարըստացեալ,
 եւ մի զկեանսդ⁶⁴ կորուստ վատնեալ:

Էրանելին⁶⁵ արին ընտրեալ,
 այնք⁶⁶ լըռել⁶⁷ ոչ կարացեալ՝
 Չեմ ես, ասէ, զոր դուք կարծեալ,
 այլ յիմ⁶⁸ հաւատս եմ⁶⁹ ամրացեալ:

⁶⁰ Բ.-ում՝ դժոխոց:

⁶¹ Բ.-ում՝ այնր:

⁶² Բ.-ում՝ զրաբանեալ:

⁶³ Բ.-ում՝ փառօք:

⁶⁴ Բ.-ում՝ ըզկեանսդ:

⁶⁵ Բ.-ում՝ էրանելի:

⁶⁶ Բ.-ում՝ յայնմ:

⁶⁷ Բ.-ում՝ լռել:

⁶⁸ Բ.-ում՝ իմ:

⁶⁹ Բ.-ում՝ իմ:

Բիւր տանջանք թէ ունիք ինձ տալ,
 թէ փառք, պատիւ խազնայ⁷⁰ եւ մալ⁷¹,
 ի տանջանաց չունիմ վախնալ,
 'ւ⁷² ոչ մեծութեան պատուոյ ցանկալ:

Անդամօր որք լեալ են բազմեալ,
 բորբոքեալ են, ցասմամբ⁷³ լըցեալ,
 գանիւ հարմամբ խուռն արձակեալ,
 բրօք բռամբ կռփահակեալ⁷⁴:

|5ա| Նոյնում ժամու վճիռ հատեալ,
 ի կարմունջէն կախել տարեալ,
 եւ անդ եւըս զնա յորդորեալ⁷⁵,
 թողուլ զհաւատն՝ լինիլ փըրկեալ⁷⁶:

Սակայն արին՝ յոյժ քաջացեալ,
 զի ի սէր Փրկչին գոլով վառեալ,
 կամաւ զանձն իւր ի մահ տըլեալ⁷⁷,
 բարի անուամբ⁷⁸ նահատակեալ:

Իսկ ծնօղքն եւ ազգքն⁷⁹ հեռուստ կացեալ,
 զուարճախառն ողբով լացեալ,
 աղօթելով անդ գոհացեալ,
 նահատակմանն ուրախացեալ:

Պայծառ դիմօք գեղեցկացեալ,
 կախարանին նա փայլեցեալ,

⁷⁰ Արաբ.՝ զանձ:

⁷¹ Արաբ.՝ ապրանք, ինչք:

⁷² Բ.-ում՝ եւ:

⁷³ Բ.-ում՝ ցայսմամբ:

⁷⁴ Ա.-ում՝ կռփահակեալ:

⁷⁵ Ա.-ում՝ յորդորեալ:

⁷⁶ Բ.-ում՝ փրկեալ:

⁷⁷ Բ.-ում՝ տըլեալ:

⁷⁸ Բ.-ում՝ անվամբ:

⁷⁹ Բ.-ում՝ ազգն:

ի գիշերին լոյս մեծ իջեալ,
շուրջ զմարմնովն շրջապատեալ:

|5բ| Առ որ գիշերապահք հասեալ,
յայտնի հրաշն այն աչօք տեսեալ,
ընթացեալ առ ծնօղսն պատմեալ,
եւ համայնից հրատարակեալ⁸⁰:

Տրամայրզգեաց ծնօղքն լուեալ,
ազգ եւ երամք զայս իմացեալ,
հաւատացեալք վերահասեալ,
համայնքն եղեն յոյժ բերկրեցեալ:

Ի բերանոց բազմաց ելեալ,
փառք, գոհութիւն առ Տէր հանեալ,
որ զվկայն⁸¹ իւր պանծացուցեալ,
լուսով երկնից զնա պսակեալ:

Իիւծեալ հիւանդք որք են անդ լեալ,
եւ ախտաժէտք բազում դիպեալ,
առ այն յուսով իսկ փութացեալ,
յախտից ցաւոց են բուժեցեալ:

|6ա| Սուրբ վկայիս սիրովն լըցեալ,
իշխանք տեղւոյն⁸² միաբանեալ,
ի զապիթէն հրաման առեալ,
ըզՍուրբ Մարմինն վար⁸³ իջուցեալ:

⁸⁰ Բ.-ում՝ հրապարակեալ:

⁸¹ Բ.-ում՝ վկայն:

⁸² Բ.-ում՝ տեղոյն:

⁸³ Բ.-ում՝ վար:

Նոր ցնծութեամբ զուարճացեալ,
Քահանայքըն⁸⁴ մաքրապարեալ,
ուխտի մանկամբ⁸⁵ զգեստաւորեալ,
պայծառազարդ յառաջ անկեալ:

Անուշահոտ խնկաւորեալ,
մոմեղինօք ջահաւորեալ,
սաղմոսանըւզ⁸⁶ երգաբանեալ,
Սուրբ շարականս քաղցրաձայնեալ:

Հըրաշափառ⁸⁷ թաղումն առեալ,
զմարմինն Սուրբ Շիրմի եղեալ,
հետըզհետէ⁸⁸ եւս լոյս իջեալ,
եւ զայլ բազում հրաշս ցուցեալ:

|6բ| Արդ դու՝ Բաբերթ բարեհուշակեալ⁸⁹,
արքայաշէնդ⁹⁰ լեր ցնծացեալ,
զի ի⁹¹ Ղազարն որ ի քեզ ծընեալ,
քաջութեամբ արդ նահատակեալ:

Տոհմ Հայկեան⁹², որք անդ կայք բնակեալ,
ընդ ձեզ եւ⁹³ մեք լիցուք հրճուեալ,
զի այրն ընտիր, բարեպաշտեալ,
վասն հաւատոյ մարտիրոսեալ:

⁸⁴ Բ.-ում՝ Փահանայքն:

⁸⁵ Ա.-ում՝ մանկանք:

⁸⁶ Բ.-ում՝ սաղմոսանըւզ:

⁸⁷ Բ.-ում՝ Հրաշափառ:

⁸⁸ Բ.-ում՝ հետզհետէ:

⁸⁹ Բ.-ում՝ բարի հոշակեալ:

⁹⁰ Ա.-ում՝ արքայշէնդ:

⁹¹ Բ.-ում՝ չիք ի:

⁹² Բ.-ում՝ Հայկիան:

⁹³ Բ.-ում՝ եւ ձեզ փխ ձեզ եւ:

Այլ եւ ծնողքն են երանեալ,
ի յԱստուծոյ յոյժ սիրեցեալ,
զի որդին իւրեանց նահատակեալ,
եւ առ Աստուած բարեխօս լեալ:

Կարնեցի արք ոմանք անդ լեալ,
զկատարումն Սրբոյս⁹⁴ տեսեալ,
եւ եկեալ աստ զորպէսն պատմեալ,
զբանս յօրինել ըզմեզ⁹⁵ հարկեալ:

|7ա| Իսկ մեք սիրոյ Սրբոյս ստիպեալ,
ըստ հարկեցմանն զվէպս⁹⁶ յարմարեալ,
եւ զինչ ինչ բանս առ զարդ յօղեալ,
զոնէ հայցմանցն լինիմ օգտեալ:

Սոյնոյ բանիս շարօղն յետնեալ,
նախատառից լինի յայտնեալ,
(մեծ բառ⁹⁷) թւոյս բանս այս եղեալ,
յընթերցողացդ յիշել խնդրեալ:

7բ Տաղ ողբաձայն (ի գոյն⁹⁸ «Իշիթտիմ⁹⁹ քի նազլի եարւմ քէֆսիգաւը»¹⁰⁰)
յարմարեալ ի վերայ նոր նախատակին Ղազարու, որ ի Բաբերթ փաղաֆն
կատարեցաւ

Ի սէր Փրկչին բորբոքեցար՝ վառելով. (կրկ.)¹⁰¹
զսէր կենցաղոյս մերժեալ ի բաց մոռացար,

⁹⁴ Բ.-ում՝ Սրբոյն:

⁹⁵ Բ.-ում՝ զմեզ:

⁹⁶ Բ.-ում՝ զվիպս:

⁹⁷ «Մեծ բառ»-ի թվային համարժեքը՝ $200+5+50+2+1+1000=1258+551=1809$:

⁹⁸ Բ.-ում՝ + որ ասէ:

⁹⁹ Բ.-ում՝ Իշիթտիմ:

¹⁰⁰ Թրգմ.՝ «Ես լսեցի, որ նազելի սիրելիս տխուր է»: Շնորհակալ ենք Մատենադարանի ավագ գիտաշխատող Աննա Օհանջանյանին՝ հաշատառ թուրքերեն երգի/տաղի խորագրի թարգմանություն, ինչպես նաեւ բնագրի կազմման հետ կապված օգտակար խորհուրդների ու դիտարկումների համար. վերջինի համար՝ նաեւ Մատենադարանի գիտաշխատող Օվսաննա Խաչատրյանին:

¹⁰¹ Ձեռագրում՝ առանց փակագծի:

Հաւատով իսկ հաստատագոյն զինելով, (կրկ.)
ի յաշխարհի անուն բարի ըստացար:

Խոջանկացեալ¹⁰² զմահն ոչինչ վարկելով,
կեանքդ անցաւոր անանց կենաց փոխելով,
Նոր նահատակ վերջին դարոյս լինելով,
Ներ Բաբերթու վարդի նման դու բացար¹⁰³:

Նշուպիայլ¹⁰⁴ յերկնից պսակ¹⁰⁵ ցուացեալ,
կախարան քոյ¹⁰⁶ լուսով եղեւ զարդարեալ,
Էկօլֆն ի քեզ ցաւոց բուժումն ընկալեալ,
հրաշագործ սքանչելեօքդ¹⁰⁷ որ¹⁰⁸ ցուցար:

|8ա| Էր Ղազարոս Տեառն Յիսուսի սիրելի,
եւ դու նմա անուանակիր¹⁰⁹ բաղձալի,
Սոյն թիւս (էպանծ¹¹⁰)¹¹¹ երգս ի սէր քո յարմարի,
արիդ Ղազար նահատակեալ պանծացար¹¹²:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ Հովհաննէս Կարնեցուն՝ մինչ այժմ անտիպ չափածո եւս մեկ վկայաբանության հրատարակությունը, հուսով ենք, կնպաստի ԺՀ.-ԺԹ. դարերի վկայաբանական գրականության մասին ավելի լավ պատկերացում կազմելուն եւ նրա հետագա հետազոտությանը: Սրա-

¹⁰² Բ.-ում՝ Արիացեալ:

¹⁰³ Բ.-ում՝ Մէջ այդ Բաբերթ ֆաղաֆոջ դու վարդ բուսեալ փիս Ներ Բաբերթու վարդի նման դու բացար:

¹⁰⁴ Բ.-ում՝ Նշուպշոյ:

¹⁰⁵ Ա.-ում՝ յերկնից պսակ: Ձեռագրում՝ պսակ յերկնից՝ գրչի ձեռքով բառերի վերելում համապատասխանաբար ավելացված՝ 2, 1: Բ.-ում՝ պսակ յերկնից:

¹⁰⁶ Բ.-ում՝ քո:

¹⁰⁷ Ա.-ում՝ հրաշագործ սքանչելեօքդ: Ձեռագրում՝ սքանչելեօք հրաշագործ՝ գրչի ձեռքով բառերի վերելում համապատասխանաբար ավելացված՝ 2, 1: Բ.-ում՝ սքանչելիօք հրաշագործ:

¹⁰⁸ Բ.-ում՝ որ:

¹⁰⁹ Ա.-ում՝ անուանակիր:

¹¹⁰ «Էպանծ»-ի թվային համարժեքը՝ $7+800+1+400+50=1258+551=1809$:

¹¹¹ Բ չիք թիւս (էպանծ)

¹¹² Բ վերջին փառատողն ավելացված 58ա էջի ստորին լուսանցում, հետագայի ձեռնով շղագրով: Թ. 58–9ի միջև ձեռագրում ամենայն հավանականությամբ էջ(եր) են պակասում:

նով ամբողջացվում է նաեւ Հովհաննես Կարնեցու վկայաբանական գործերի հրատարակությունը: Ղազար Բաբերդցի նոր նահատակին նվիրված այս վկայաբանությունը եւ տաղը, կարծում ենք, կարող են հետաքրքրել ինչպես աստվածաբաններին, կրոնագետներին ու պատմաբաններին, այնպես էլ բանասերներին՝ ավելի լավ պատկերացում տալով ԺԸ. դարի վերջերի եւ ԺԹ. դարակսզբի լեզվի, գրականության առանձնահատկությունների մասին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հովհաննես Կարնեցի, Նոտար, Ղազար Բաբերդցի, Բաբերդ, նոր վկա, նահատակ, վկայաբանություն, չափածո, պոեմ, տաղ:

РЕЗЮМЕ

В литературном наследии известного армянского поэта, педагога и писца Ованнеса Карнеци (ок. 1750—1820) отдельную группу составляют его мартирологические сочинения, посвященные армянским мученикам Османской империи своего времени. Три из них были опубликованы еще в 1902 и 1903 гг. в монументальном сборнике “Новые армянские мученики”, составленном Акобом Манандяном и Грачьею Ачаряном. В своей монографии, посвященной Ованнесу Карнеци, литературовед Шушаник Назарян, упоминая еще об одной такой стихотворной мартирологии, посвященной мученику Казару (Лазарь) Бабердци († 1809), к сожалению, не опубликовала этот текст.

Целью данной публикации прежде всего является завершение издания мартирологического наследия Ованнеса Карнеци, тем самым представляя вниманию научного сообщества эту стихотворную мартирологию. К тому же это и небольшой шаг в деле продолжения работы, начатой А. Манандяном и Г. Ачаряном по изданию и исследованию неопубликованных мартирологий. Текст мартирологии Казара Бабердци мы составили на основе автографической рукописи Матенадарана 9958 (Карин, 1809 г.), которая нами была сопоставлена с дошедшим до нас текстом рукописи Матенадарана 8735 (XIX в., после 1809 г.).

К сожалению, сообщаемые автором биографические данные о Казаре Бабердци скудны. В мартирологии также ничего не говорится о некоторых обстоятельствах мученичества этого «нового страстотерпца». Известно лишь время событий – 1809 г., место – город Баберд, откуда и Казар был родом. Ованнес Карнеци воспевает его мученический подвиг также в посвященному ему акафисту, которая размещена после поэмы.

SUMMARY

In the literary heritage of the prominent Armenian hymnographer, pedagogue, and scribe of the 18th – 19th cc., Hovhannes Karnetsi (of Karin, c. 1750–1820), martyrological works dedicated to the Armenians martyred in the Ottoman Empire during his lifetime form a separate group. Three of these were published in 1902 and 1903 in the monumental collection “Armenian New Martyrs” compiled by Hakob Manandyan and Hrachya Acharyan. In her book dedicated to Hovhannes Karnetsi, philologist Shushanik Nazaryan mentioned another martyrological poem dedicated to the martyr Ghazar of Baberd or Baberdtsi († 1809), but did not publish its text.

The current publication first aims to complete the publication of the martyrological heritage of Hovhannes Karnetsi, introducing this versified martyrology to academic circles. This is also a little step towards the continuation of the initiative started by H. Manandyan and H. Acharyan, aiming publication and study of unpublished martyrological texts. The text of the martyrology of Ghazar of Baberd was prepared based on the text preserved in the MS 9958 (written in Karin in 1809) of the Matenadaran, considered to be an autograph. We have compared this text with the one in the MS 8735 (XIX c., after 1809) of the Matenadaran.

Unfortunately, Hovhannes Karnetsi has not provided many biographical details about Ghazar of Baberd. In the versified martyrology, some circumstances concerning the martyrdom of this “new martyr” remain unclear. We know the date of the events – 1809, the place – city of Baberd, from where Ghazar originated. The act of bravery of this martyr was praised by Hovhannes Karnetsi also in the martyrological hymn that follows the poem.





ՄԱՅՐ ԱԹՈՈ Ա. ԷՋՄԻԱՍՏԻ ՀՈՒՐՋ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1720-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ՝

Նայ պատմագիտության մեջ տարբեր ժամանակահատվածներում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք նվիրված են ԺՀ. դարի ազգային-ազատագրական պայքարի պատմության հիմնախնդիրների լուսաբանմանը: Դրանց մի մասում, սակայն, բացակայում են համակողմանի վերլուծությունները, փաստերի համադրումները: Բացի դրանից՝ որոշ հետազոտություններ կրում են խորհրդային ժամանակների գաղափարախոսության կնիքը: Այդ է պատճառը, որ արդի պատմագիտության մեջ հարկ է կարեւորել տվյալ ժամանակաշրջանի ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրությունը²:

Սույն հոդվածում քննարկելու ենք ԺՀ. դարի առաջին կեսին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջ կատարվող դեպքերը՝ մասնավորապես կաթողիկոսական ընտրությունները, կաթողիկոսների գործունեությունը եւ հատկապես որդեգրած դիրքորոշումն Արցախ եւ Սյունիք աշխարհներում գոլգահեռ ծավալվող 1720-ական թթ. ազատագրական կռիվների վերաբերյալ:

Նշված քաղաքական դժվարին պայմաններում, երբ Հայաստանն Օսմանյան կայսրությունն ու Պարսկաստանը վերածել էին կռվախնձորի, Մայր Աթոռն ստիպված էր գործել՝ փորձելով ավելի մեծ արհավիրքներից հեռու պահել հայության երկու հատվածները: Այս շրջանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման

^{1*} Ստացվել է՝ 28.10.2023, գրախոսվել է՝ 3.11.2023: Էլ. հասցե՝ shahbazyan9494@gmail.com:

² Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Արցախահայության ազգային-ազատագրական պայքարը XVIII դարի առաջին տասնամյակներին, Երեւան, 2012, էջ 4:

գործում կարելու նշանակություն են ձեռք բերում Արցախի եւ Սյունիքի մելիքությունները, ինչպես նաեւ այդ պայքարում առաջնորդի դեր ստանձնած Հայ Առաքելական Եկեղեցին, որն իր արեւելյան թեմերի առաջնորդ Գանձասարի կաթողիկոսության միջոցով իրականացնում էր արտաքին հարաբերություններ, քանի որ Արցախի շատ իշխանական տներ պահպանել էին իրենց ռազմական հնարավորությունները եւ ունեին հարուստ փորձ Հայաստանի արտաքին կապերի իրականացման գործում³:

Մայր Աթոռը եղել է հայ ժողովրդին համախմբող կառույց, ազատագրական պայքարի կողմնակից, քաջալերող ուժ, պարզապես ժամանակի քաղաքական պայմաններն ստիպել են դրսևորել որոշակի զգուշավորություն⁴: Եւ որքան էլ հայոց կաթողիկոսները՝ մասնավորապես ազատագրական պայքարի ընթացքում կաթողիկոսներ ընտրված Աստվածատուր Ա. Համադանցին, Կարապետ Բ. Ուլենցին եւ Եսայի Հասան-Ջալալյանը, Դավիթ Բեկը, Մխիթար Սպարապետը ձգտել են գաղտնի պահել ամուր կապը, միեւնույն է, դրանք այնքան մեծ ծավալ էն ընդունել, որ ի վերջո հայտնի են դարձել ինչպես օսմանյան, այնպես էլ պարսկական հետախուզությանը⁵:

Չնայած այն հանգամանքին, որ Աստվածատուր եւ Կարապետ կաթողիկոսների անունները չեն հիշվում հայ ազատագրական շարժման գործիչների շարքում, պահպանվել են նրանց քաղաքական գործունեությունը լուսաբանող համապատասխան տեղեկություններ:

1700-ական թթ. Մայր Աթոռի միաբանությունն ինքն էր իրականացնում կաթողիկոսի ընտրությունը, եւ քննարկվեց Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսի թեկնածությունը: Ըստ Մ. արք. Օրմանյանի՝ «Մովսէս Զուղայեցին⁶, որուն արդէն Աղեքսանդր չմեռած հրաւէր ուղղուած էր, կրկին կոչուեցաւ գալ Էջմիածին եւ կաթողիկոսական աթոռը գրաւել, բայց նա յանձն չառաւ զայն ստանձնել: Մովսէսը, որչափ մենք կարող ենք դատել, թերեւս միակն էր, որ պաշտօնապէս հրաւիրուելով կաթողիկոսական աթոռն զբաղեցնելու՝ հրաժարուեց ստանձնել այդ

³ Անդ:

⁴ Անդ, էջ 5:

⁵ Անդ, էջ 16–17:

⁶ 1714 թ. հոկտեմբերի 19-ին Մովսէսը հրավիրվել է կաթողիկոսական աթոռին նստելու: Մանրամասն տե՛ս Մ. Ա. Բ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ., Կ. Պոլիս, 1914, սյունակ 2800:

պաշտօնը⁷»։ Ճիշտ է՝ կաթողիկոսությունից հրաժարվելու դեպքեր եղել էին, սակայն դրանք պայմանավորված էին թեկնածուների հիվանդությունամբ կամ որեւէ այլ խնդրով⁸։

Մովսեսի վճռական հրաժարումից հետո Մայր Աթոռի միաբաններն սկսեցին նոր թեկնածուի որոնումները, եւ Սբ. Ամենափրկչի միաբան երկու եպիսկոպոսների առաջարկով, անգամ կարող ենք ասել հենց իր՝ Մովսեսի առաջարկությամբ, քննարկվեց Աստվածատուրի թեկնածությունը։ Նրանք պաշտոնական հրավերով դիմեցին Աստվածատուրին, որը, գալով էջմիածին, 1715 թ. մայիսի 7-ին՝ Կարմիր կիրակիի օրը, օծվեց կաթողիկոս։ Կաթողիկոսը «իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ՝ գրաւած աթոռին անարժան չգտնուեցաւ»⁹։ Ըստ Սիմեոն Երեւանցու՝ «զայն իբր այր հեզաբարոյ եւ հոգելի, շնորհաշատ եւ գեղեցկատես, ջերմեռանդ եւ արտասուիչ, որ արար զբաղում բարերարութիւնս սրբոյ Աթոռոյս եւ երկրիս, կրեաց եւ զբազում նեղութիւնս եւ զտառապանս»¹⁰։ Նրա կաթողիկոսության հինգ տարիները նշանավորվեցին շինարարական գործունեության իրականացումով, իսկ հետո՝ 1720 թ., սկսվեցին պատերազմական գործողություններ, որից տուժեց նաեւ էջմիածինը¹¹։

Արեւելյան Հայաստանում տեղի ունեցող շարժումների մասին խոսելիս մի պահ հայացք ձգենք 1710-ական թթ., երբ Իսրայել Օրու մահվանը նախորդող շրջանում հետագայում աչքի ընկած գործիչ Մինաս վրդ. Տիգրանյանը, դեգերելով Ռուսաստանում, փորձում էր լուծել Հայաստանի ապահովության հարցը։ Պետրոս Մեծի պահանջով Մինաս վարդապետին հանձնարարվել էր գնալ Հայաստան՝ տեղեկություններ հավաքելու եւ հայերի դիրքորոշումը հասկանալու նպատակով։ 1716 թ. հուլիսին Մինասը, գալով էջմիածին, ներկայանում է Աստվածատուր կաթողիկոսին. «Մինաս վրդ.-ի ընդունելութիւնը նախորդ պատուիրակներու ընդունելութիւններէն տարբեր չըլլար. սիրով կընդունուի Յարին պատգամաւորը,

⁷ Մովսեսի դժկամության ներքին պատճառը դժվար է ասել, բայց «զի ապիկար եւ գործէ փախչող մէկը չէր եւ բազմաշխատ եւ բազմարդին անձ մը եղած էր Պարսկաստանի աթոռին վրայ»։ Մանրամասն տես Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյուն 2800։

⁸ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Աստվածատուր Ա. Համադանցի (1715–1725), Քրիստոնյա Հայաստան, 30.03.2012, Աստվածատուր Ա. Համադանցի (1715–1725) | Քրիստոնյա Հայաստան (wordpress.com) (22.09.2023 11:17)։

⁹ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյունակ 2801։

¹⁰ ՍԻՄԵՐՈՆ ԵՐԵՒԱՆՅԻ, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 27։

¹¹ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյունակ 2802։

բայց Մեծն Պետրոսի ծրագրին օժանդակելու դրական խոստում չի տար Կաթողիկոսը, նկատի ունենալով միշտ պարսիկ տէրութեան կողմէ ըլլալիք հակազդեցութիւնը, որով հեռու կուզէ մնալ գործօն մասնակցութիւն բերելէ ազատագրական շարժումին»¹²: Աստվածատուր Համադանցին նաեւ հավելում է, որ եթէ Նորին Ցարական Մեծությունը ցանկանա Պարսկաստանի դեմ պատերազմ մղել, ապա թող իրեն լուր ուղարկեն, թե ինչ է իրենից ակնկալվում, իսկ ինք)ը, իր բոլոր հավատարիմների հետ միջոցներ գտնելով, այդ գործում հավատարմորեն եւ հնարավորութեան չափով օգնութիւն կցուցաբերի¹³: Այն, որ Մինաս վարդապետը խնդրել էր այդ ամենը գրավոր ներկայացնել, Կաթողիկոսը առարկել եւ ասել էր. «Գրավոր այս բանը շարադրելը եւ ցարին հավատարմութիւն հայտնելն անհնար է, քանզի այս գործը պետք է հույժ գաղտնի պահել՝ պարսիկներից եւ որոշ հայերից: Փոխարենը՝ կտա վարդապետին քողարկված իմաստով մի նամակ, ուր կասվի, թե նա եղել է պատրիարքի մոտ եւ զեկուցել նրան ամեն տեսակ գործերից, որոնք ընդունվել են սիրով եւ հաճութեամբ»¹⁴: Իհարկէ հետո կտեսնենք, որ Մինաս վարդապետի արտահայտած մտահոգութիւնը Կաթողիկոսի նկատմամբ չափազանցված էր, եւ հավանական է, որ Մինասը ռուսներին դիտմամբ է հետ պահել Կաթողիկոսի հետ աշխույժ կապեր հաստատելու մտքից՝ նպատակ ու նաեւ առաջադրանք ունենալով ապահովել էջմիածնի անվտանգութիւնը¹⁵:

Մինաս վարդապետն էջմիածնից մեկնում է Գանձասար՝ հանդիպելու Եսայի Հասան-Ջալալյան Կաթողիկոսին, որը «գրկաբաց ընդունեց զայն եւ անոր արքեպիսկոպոսական աստիճան տուաւ ու համայն Ռուսիոյ առաջնորդ նշանակեց թէ մեր նահանգին մեղիքներով, մեծամեծներով մենք պատրաստ ենք, մեր կարողութեան չափով, ընդ առաջ գալ, երբ հզօր եւ մեծ թագաւորութիւնը փափաքի արշաւել դէպի այս կողմերը»¹⁶: Երկու Կաթողիկոսների հետ հանդիպումներն ունեցան տարբեր

¹² Հ. ՍԱՄՈՒԷԼ ՎՐԳ. ԱՐԱՄԵԱՆ, Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», Վենետիկ – Ս. Ղազար, 1978, էջ 38:

¹³ *Сѣи* Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, Т. II, часть I, Ереван, 1964, док. 154, էջ 368:

¹⁴ Անդ:

¹⁵ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, Աստվածատուր Ա. Համադանցի Կաթողիկոսը (կթղ. 1715–1725 թթ.) եւ հայ ազատագրական շարժումը, «էջմիածին», 2002, Զ.-է., էջ 70:

¹⁶ Ա. ԱԼՊՅԱՆՅԱՆ, Պատմութիւն հայ ազատագրական շարժման, դասախօսութիւններու շարք, Գահիրէ, 2019, էջ 90:

ընթացք. «Աղեքսանդր կաթողիկոս Եսային պաշտպանած էր Աղուանից հակաթոռ կաթողիկոս Ներսէսի դէմ, այլ եւ յատուկ կոնդակով Շամախին ու Շիրվանը շրջանակներով Եսայիի թեմ տուած էր մինչ Աստուածատուր թէպէտ Ներսէսի մերժումը պահած էր, բայց Եսայիի իրեն դէմ բռնած արհամարհական ձեւերէն ցաւած, նոր կոնդակով մը Շամախին ու Շիրվանն ու Շաքին տէրունի հռչակելով հանած էր Աղուանից աթոռին իրաւասութենէն»¹⁷:

Մայր Աթոռի շուրջ ծավալվող դեպքերի մասին խոսելիս շատ կարեւոր է անդրադարձ կատարել հայկական հողի վրա ծավալվող երեք տերութիւնների պատերազմներին. «Հայեր՝ որ ամեն կողմէ յարձակումներու ենթարկուած էին, շփոթ եւ վարանոտ դիրք մը ունէին, չկարենալով երկու մահմետական տէրութեանց ալ գործակցիլ, եւ չստանալով երրորդ քրիստոնեայ տէրութեան ազդու ձեռնտուութիւնը: Օրիի ձեռքով ցանուած ազգային ապահովութեան հետապնդութիւնը անպատու չէր մնացած, եւ անոր սերմերը բողբոջած էին, եւ հայ խումբեր կազմուած էին զէնքի դիմելու եւ պատերազմներ մղելու հրոսակներու դէմ»¹⁸: 1722 թ. լեզգիների՝ Գանձակի վրա կատարած արշավանքը, ավերածութիւններն ու կոտորածները արթնացրին հայ ժողովրդի պայքարի ոգին, ինչպէս նաեւ հույսեր՝ կապված Պետրոս Մեծ կայսրից սպասվող օգնության հետ. «Յարձակեցան անտի եւ ի կողմանս Գանձակայ՝ որ է Կէնճէ. եւ գերեցին զմանկունս եւ գաղջկունս. եւ աւերեցին զերկիրն՝ մինչեւ ի ծովն Գեղամայ»¹⁹: Պետրոս Մեծը, որ Հյուսիսային պատերազմի ընթացքում ցանկանում էր տիրել Կասպից ծովի ափերին, նախ կարեւոր համարեց ունենալ հայ-վրացական զինվորական ուժի աջակցությունը, բայց հետագայում քաղաքական իրադրության փոփոխման պայմաններում պարզ դարձավ, որ կայսրը Կասպից ծովի կողմերը նվաճելուց հետո վերադարձել է, եւ նրան Չոլակի վայրում սպասող վրացական զորքի առաջնորդ Վախթանգ VI թագավորին եւ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին հայտնի դարձավ, որ անարդյունք էր սպասելը: Ամեն դեպքում դա չի կոտրում սյունեցիների եւ արցախցիների մարտական ոգին, ինչը հետագայում անհրաժեշտութիւն է առաջ բերում ընտրել պայքարի նոր առաջնորդ: Սյունիքում Ստեփանոս Շահու-

¹⁷ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյունակ 2816–2817:

¹⁸ Անդ, սյուն 2837–2838:

¹⁹ Մ. ՉԱՄՁԵԱՆՑ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Երեւան, 1984, էջ 784:

մյանի դիմում-խնդրանքից հետո Վախթանգ VI-ը Դավիթ Բեկին ուղարկում է Հայաստան՝ գլխավորելու ազատագրական պայքարը²⁰։ Ինչպես Մ. արք. Օրմանյանն է ներկայացնում. «Ամենուն հոգին ու հրամանատարը եւ ձեռնարկները կարգադրողը Դավիթն էր, իր հեռատեսութեամբը, արթնութեամբը ու ժողովեամբը եւ մանաւանդ հեղինակութեամբը ու կարգապահութեամբը նշանաւոր գլուխ մը»²¹։ Ահա ինչպես է անդրադառնում Դավիթ Բեկին Ա. Գյուլամիրյանցը. «Եւ ինքն Դավիթ էր ազնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանօթ Գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք եւ գործովք եւ վրէժխնդիր թշնամեաց ազգին մերոյ, ինքն եւ ամենայն հետեւողք իւր»²²։ Պատերազմական գործողությունների ընթացքում Դավիթ Բեկը ցուցաբերում էր այլ հատկություններ եւս՝ «հեռատես, իր հեղինակութեամբ պարտադրող, հզօր կամքով, պէտք եղած տեղը՝ պահանջկոտ, վարձատրող քաջերը եւ պատժող չարագործներն ու վախկոտները, անյաջողութեան մէջ չլքանող, իսկ յաջողութեան ժամանակ՝ չշլացող»²³։

Այս ամենի հակիրճ նկարագրությունը շատ կարելու է, որպեսզի ամբողջ հստակ պատկերացվի Մայր Աթոռի կացությունը տվյալ ժամանակաշրջանում։ Մինչ Սյունիքը եւ Արցախը բռնված էին ապստամբություն, անհանգիստ էր նաեւ Մայր Աթոռը։ Վատ էր, որ ապստամբները գործում էին անջատ-անջատ։

Պարսկական կողմին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Աստվածատուր կաթողիկոսը ռուսների հետ լավ հարաբերությունների էր ստեղծվել, ինչի մասին վկայող մի նամակ էր գտնվել. «Մեր կաթողիկոսին մին գիրն կը բռնուի։ Էս գիրն կը բերեն կը տան յարեւանայ նայիպին։ Էս նայիպն կաթողիկոսին կանչել էր տարել՝ թէ դու էլ աս մեզնէ դոնմիշելէլ. էս քոյ գիրն այ՝ որ Հայոց ասկարին գրել աս։ Ասացել այ՝ թէ էտ գիրն ես չեմ գրել. էտ թշնամու շինած գիր այ եւ կաթողիկոսին էլ շատ խաֆայաթ (նեղություն) կը տայ եւ ԴԻ. (4000) ոսկի ջառիմայ յինք կառու, քանի օր կը պախի, յետոյ մարդ մէլ կը ընկանի, բաց կը թողու»²⁴։

²⁰ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, նշ. աշխ., սյունակ 2838։

²¹ Անդ։

²² Ա. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆՑ, Հնտիր պատմություն Դավիթ Բեկին, եւ պատերազմաց հայոցն իտափանու որք ընդդէմ թուրքաց ի մերուն ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ հայոց 1171, Վաղարշապատ, 1871, էջ 6։

²³ Հ. ՍԱՄՈՒԷԼ ՎՐԳ. ԱՐԱՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 57։

²⁴ «Կռունկ հայոց աշխարհին», թիվ Գ., Թիֆլիս, 1863, էջ 196։

Պարսիկներն ստիպեցին կաթողիկոսին հորդորել Դավիթ Բեկին կռվել օտարների դեմ, իսկ տեղացիներին ու պարսիկներին չվնասել: «Նայիպն կաթողիկոսին կսէ թէ ձեր Հայոց ասկարն շատ թուրք ա ջառթում, որ ուզեն՝ գոն Յարեւանայ վերայ, դու մին գիր գրէ ձեր ասկարին վերայ՝ որ էս երկիրն չը գոն եւ մեր մարդին դէկմիշ չընեն» (ձեռք չտան)²⁵: Աստվածատուրին ստիպել են անգամ, որ այդ նպատակով ուղևորվի Արցախ ու Վրաստան, եւ նա, կատարելով պահանջը, գնացել է, բայց հայերին իրենց շարժումից հետ կանգնելու կոչեր չի արել²⁶: Պարսկական կողմը, շատ լավ հասկանալով այն, որ հայերը կաթողիկոսին լսելու փոխարեն շարունակելու են պայքարել եւ ավելի են ընդլայնում իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները, կաթողիկոսին դարձյալ կանչում եւ հանդիմանում է. «Քոյ խայէրն թուրք ջառթելն իվելայցուցել ան, քոյ գրած գիրն մախիլայ էր գրած, մենք էլ քեզ հավատման չենք, եւ էստոնք քեզ թողման չենք»²⁷:

Ինչ վերաբերում է թուրքական կողմին, ապա Աստվածատուր կաթողիկոսի նկատմամբ անվստահությունն ավելի մեծ էր: 1723 թ. ապրիլի 2-ին էջմիածին այցելած թուրք դեսպանը Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսին մեղադրում էր. «Թե դու էլ մեծ սուլի (հանցանքի) տէր աս, որ Հռուստին խետ մին աս դառցել, էսչանք խայ աս կանգընացուցել՝ որ ասում ան՝ թէ ԿԻ. (60 000) խայ եարաղով հազիր ան՝ որ քոյ խօսկօվն ան խայէրն վեր ան կացել, դու էլ շատ նեղութիւն կը քաշես, էս պատճառով որ ուզես Հռուստն էս ձեր երկրօվն բերէս մեր երկիրն»²⁸: Այդ է պատճառը, որ արգելվեց հայերին մյուռոնօրհնքի առթիվ գնալ էջմիածին²⁹: 1723 թ. նույն ժամանակահատվածում մի պաշտոնյա, գալով էջմիածին, հանդիմանել է Աստվածատուրին, որ օգնական բանակ է կազմում ռուսական կողմին օգնելու համար, եւ մի շարք սպառնալիքներ է ուղղել: 1723 թ. Երեւանի նահանգում սկսած պատերազմների պատճառով «Աստվածատուր իր հանգիստը կորսնցուցած էր, եւ թափառական կը շրջէր նուազ վտանգաւոր կողմերը երթալով, կամ քաջալերութեան

²⁵ Անդ, էջ 197:

²⁶ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Աստվածատուր Ա Համադանցի (1715–1725), Քրիստոնյա Հայաստան, 30.05.2012, Աստվածատուր Ա Համադանցի (1715–1725) | Քրիստոնյա Հայաստան (wordpress.com) (22.09.2023 11:33):

²⁷ «Կռունկ հայոց աշխարհին», էջ 197:

²⁸ Անդ, էջ 196:

²⁹ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյուն 2840:

պէտք եղած տեղեր երեւնալով: Երեւանի եւ էջմիածնի օսմանցիներէ գրաւումը տեղի ունեցաւ 1724 տարւոյն երկրորդ կէսին սկիզբները, եւ ասով աւելի եւս վտանգուեցաւ Աստուածատուրի դիրքը, որ հազիւ տարի մը եւս ապրեցաւ, միշտ երերեալ եւ տատանեալ կացութեան մէջ, ստէպ խուսափելով Մայրաթոռէն, տիրապետողներու կեղեքումներէն ազատելու համար, եւ մերթ հոն հանդիպելով անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու համար»³⁰: Այսպիսով՝ ազատագրական պայքարի գործիչների հետ կապն առաջացնում էր Պարսկական եւ Օսմանյան տերությունների անվտանգությունը Մայր Աթոռի նկատմամբ:

Ս. Արամյանը, անդրադառնալով թուրքական զորքերի արշավանքին, հայտնում է, որ Աբդուլլահ փաշան ամեն կերպ փորձում էր սիրաշահել հայերին, բայց հայերն իրենց դիրքերը չէին ցանկանում զիջել, այլ շարունակում էին մարտնչել: Այս ամենից վիրավորված փաշան իր բարկությունը հայտնում է կաթողիկոս Աստվածատուրին՝ ասելով. «Հայերն են որ Կովկաս բերած են ռուսերը եւ պատրաստած 60 000 զօրք՝ դէմ դնելու համար թուրք բանակին, ու նոյնիսկ գրաւելու թրքական Հայաստանը, բայց ատիկա աժան պիտի չնստի հայերուն»³¹:

1724 թ.՝ Երեւանի գրավումից հետո, թուրքերը նաեւ ցանկություն ունեին Արցախին տիրելու, բայց դա անելու էին ոչ թե բռնությամբ, այլ խաղաղ ճանապարհով: Դա պետք է կատարվեր Աստվածատուր կաթողիկոսի միջնորդությամբ, որը պետք է ազատագրական պայքար մղողներին կոչ աներ հպատակվել բանակին: Կաթողիկոսը Գանձասարի Եսայի կաթողիկոսին խորհուրդ է տվել՝ ասելով. «Եթէ գան եւ ընծաներով փաշային յայտնեն իրենց հպատակութիւնը՝ ամեն բան խաղաղ կը վերջանայ, ու իրենք ալ պատիւ կունենան թուրքերու մօտ, ապա թէ ոչ իրենց կը սպասէ կոտորած ու գերութիւն»: Այս առաջարկն անորոշության առջեւ է կանգնեցնում ազատագրական կռիվների մասնակիցներին, որոց մի մասը պայքարի ուղին նախընտրեց՝ հուսալով, որ ռուսական զորքը կհասնի օգնության՝ տեղյակ չլինելով, որ 1724 թ. հունիսի 12-ին արդեն կնքվել էր ռուս-թուրքական դաշինքը: Մի մասն էլ կողմ էր հպատակվելու՝ համարելով, որ անիմաստ է պայքարը շարունակելը»³²: Աստվածատուր կաթողիկոսը, հաշվի առնելով այս պայմանագիրը եւ 1724 թ. սեպտեմբերին

³⁰ Անդ:

³¹ Հ. ՍԱՄՈՒԷԼ ՎՐԳ. ԱՐԱՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 46:

³² Հ. ՍԱՄՈՒԷԼ ՎՐԳ. ԱՐԱՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 47–48:

շահ Թահմասպ Բ.-ի մոտից վերադառնալով, կատարում է օսմանցիների առաջադրանք-պահանջը՝ կատարել միջնորդական առաքելություններ երեւանի բերդի անձնատուր լինելու բանակցություններում՝ այդ կերպ փորձելով շահել օսմանցիների վստահությունը եւ պաշտպանել հայերին: Սակայն կաթողիկոսի մահը փոխում է դեպքերի ընթացքը³³:

Աստվածատուր կաթողիկոսի մահը վրա է հասնում պատահականորեն, 1725 թ. հոկտեմբերի 10-ին Օշականում լուսնի խավարումը դիտելու համար բարձրանալով եկեղեցու տանիքի վրա՝ հանկարծ գլխիվայր ընկնում է եւ ժամեր անց մահանում³⁴: Ըստ Չամչյանի՝ «Ասի յոմանց, թէ մի ոմն լընտանի թշնամեաց մղեալ իցէ զԱստուածատուր ի տանեաց անտի. ալլ այս թուի լինել անստոյգ լուր ի համբաւոյ առեալ»³⁵: Աստվածատուր կաթողիկոսը թաղվել է Սբ. Հռիփսիմեի վկայարանի գավթում³⁶:

Աստվածատուր կաթողիկոսի մահից հետո Մայր Աթոռը գտնվում էր դժվարին կացության մեջ: Հայկական զորքերն ամեն կողմից պայքարի մեջ էին պարսկական եւ օսմանյան զորքերի հետ: Հայերն ամեն կերպ դիմադրում էին թշնամիներին եւ փորձում կանխել նրանց ծավալապաշտական նկրտումները, եւ այս իրավիճակում քննարկել, որ Մայր Աթոռում կարող են անցկացվել նոր կաթողիկոսի օրինական ընտրություններ, անհնարին էր: Պետք է ասել, որ «հարկաւ Աստուածատուր, իբրեւ խոհական եւ հոգածու անձ, նախատեսած պիտի ըլլար այդ վիճակը, սակայն ուզելով ալ չէր կրնար ազդու դարման մը գտնել, եւ իրմէ ետքը կաթողիկոսական ընտրութեան մասին միտք յայտնել եւ հրահանգ տալ: Կ'երեւի թէ իր շուրջն ալ ուշադրութիւն գրաւող մէկ մը չտեսաւ. եւ նոյն իսկ պատահական արկածով մը մեռնելը՝ առիթ չներկայեց Մայրաթոռին յաջորդութեան վրայ մտածելու»³⁷: Այս պայմանները կարող էին հանգեցնել նրան, որ կաթողիկոս չունենալու խնդիրը շարունակվեր երկար:

4. Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտը³⁸ լրջագույն խնդիր էր համարում Մայր Աթոռի՝ առանց կաթողիկոս մնալու հանգամանքը եւ սկսեց նոր կաթողիկոս ընտրելու ուղղությամբ ձեռնարկել քայլեր, որոնք

³³ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, նշ. աշխ., էջ 76:

³⁴ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյուն 2841:

³⁵ Մ. ՉԱՄՉԵԱՆՑ, նշ. աշխ., էջ 801:

³⁶ Հ. ՕՉԱՆՅԱՆ, Սիմեոն Երեւանցի, Ջամբու, Երեւան, 2022, էջ 71:

³⁷ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյուն 2842:

³⁸ Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի (1678–1741), Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1715–1741 թթ.— հայ կրոնական, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչ, «արեւ-

չհանդիպեցին լուրջ դիմադրության: Աստվածատուր կաթողիկոսի մահից չորս եւ կես ամիս անց Հովհաննես Կոլոտ պատրիարքը Կարապետ Բ. Ուլնեցու ընտրության մասին տեղեկացնում է Բարձր դռանը՝ ստանալով սուլթանի՝ «ըստ արգալի Յովհաննէս Փաթրիկին ետուք զհրաման» հաստատումը³⁹:

Կ. Պոլսի բարձրաստիճան եկեղեցականությունը, քահանայական դասը, իշխանական դասակարգը եւ ժողովուրդը հավանություն տվեցին Գաղատիայի⁴⁰ առաջնորդ Կարապետ Բ. Ուլնեցի եպիսկոպոսի թեկնածությանը⁴¹: Սիմեոն Երեւանցին Կարապետին ներկայացնում է իբրեւ «այր ծեր եւ անձնեալ, մեծաշուք եւ առատաձեռն»⁴², իսկ Զամչյանը՝ «այր զգօն եւ իմաստուն, փառացի անձամբ եւ գովելի վարուք եւ սիրելի յաշս ամենեցուն»⁴³: Հատուկ հրավերով Կարապետին Գաղատիայից բերեցին⁴⁴ Սբ. Աստվածածին եկեղեցի եւ 12 եպիսկոպոսների ներկայությամբ 1726 թ. փետրվարի 27-ին՝ Մեծ պահլայի երկրորդ կիրակի օրը, տեղի ունեցավ օծման արարողությունը: Այդ նույն ժամանակ Սյունիքում շարունակվում էր ազատագրական պայքարը Դավիթ Բեկի զլխավորությամբ⁴⁵:

Կարապետ կաթողիկոսի ընտրությունն ընդունեց Մայր Աթոռի եւ պարսկահպատակ հայությունը: Նա հրավիրվեց էջմիածին՝ զբաղեցնելու իր աթոռը, սակայն դեպքերի ընթացքը՝ օսմանցիների կողմից Երեւանի գրավումը եւ դեպի Սյունիք հարձակումները հնարավորություն չտվեցին մեկնելու էջմիածին: Մնալով Կ. Պոլսում՝ կաթողիկոսն անգործ չմնաց եւ ամեն կերպ փորձում էր աջակցել հայությանը: Ի վերջո, հունիսի 7-ին ճանապարհ ընկնելով, 1728 թ. մի քանի տեղ կանգ առնելուց հետո (Պրուսա, Անկյուրիա, Եւդոկիա եւ այլն) հասնում է Սբ. էջմիածին, որ-

մտահայ վերածննդի ռահվիրա»: Կոլոտ մականունը նրա տոհմանունն է: Մանրամասն տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, հտ. 1, Երեւան, 2002, էջ 626:

³⁹ Ս. ՖԱՀՐԱԿՅԱՆ, Դիտողություններ Կ. Պոլսի XIX դարի հայ պատրիարքների կնիքների մասին, «Բանբեր Մատենադարանի», 2020, թիվ 30, 267–268 էջ:

⁴⁰ Գաղատիա (Անգարա), Անկյուրիա կամ էնկյուրի – հին երեւելի ու պատմական քաղաք՝ ներկայում Թուրքիայի մայրաքաղաքը, ինչպես ժամանակին Փոքր Ասիայում եղել է Գաղատիա գավառի մայրաքաղաքը: Գաղատիան նշանավոր էր իբրեւ քրիստոնյա քաղաք: Մանրամասն տե՛ս ՄԻԿՏՅՈՒՆ ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Հայ Հանրագիտակ, հտ. Գ., տպ. Պուքրէշ, 1938, էջ 451:

⁴¹ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյունակ 2843–2844:

⁴² Հ. ՕՀԱՆՅԱՆ, նշ. աշխ., 72 էջ:

⁴³ Մ. ԶԱՄՉՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 801:

⁴⁴ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, նշ. աշխ., սյունակ 2844:

⁴⁵ Անդ, սյունակ 2858:

տեղ Կարապետին վիճակված չէր երկար ապրել: Արդեն տարիքն առած կաթողիկոսը 1729 թ. հոկտեմբերի 2-ին՝ Վարազա խաչի հինգշաբթի օրը, կնքում է իր մահկանացուն⁴⁶ թաղվելով Սբ. Հռիփսիմե եկեղեցու վկայարանի գավթի ձախակողմյան մասում⁴⁷: Նա կարճ գործեց, եւ հասկանալի է՝ տեսանելի արդյունքներ չէր կարող ունենալ: Այսուհանդերձ՝ կաթողիկոսից հաճելի հիշատակ են մնացել Մայր տաճարի խորանի կամարը զարդարող տասներկու առաքյալների պատկերները⁴⁸: Քանի որ Սյունիքի ազատագրական պայքարը եւ Կարապետ կաթողիկոսի ընտրությունը համընկան, եւ հետագայում՝ Դավիթ Բեկի մահից հետո (1728 թ.), պայքարի ղեկավարումն իրականացրեց Մխիթար Սպարապետը, արդեն ազատագրական պայքարի իրադարձություններն ընթացան կաթողիկոսի մահից հետո՝ մինչեւ Կարապետ Բ. Ունեցու հաջորդի՝ Աբրահամ Բ. Խոշաբեցու օծումը:

Այսպիսով՝ գալիս ենք հետեւյալ եզրահանգմանը: Կանգնած լինելով մի շարք խնդիրների (պարսկական, այնուհետեւ օսմանյան ուժերի արշավանքներ) առաջ՝ հայերն ապավինել էին ռուսական կողմի զորակցությանը, ամեն կերպ փորձում էին ունենալ նրանց աջակցությունը, միեւնույն ժամանակ դա գաղտնի պահել, որպեսզի չվտանգեին Թուրքիայի եւ Պարսկաստանի հետ հարաբերությունները, եւ որ ամենակարեւորն է՝ չտուժեր հայ ժողովուրդը: Իհարկե, հետագայում պարզ դարձավ (այսօր նույնպես ուսանելի է պատմության այդ դասը), որ ազատագրական պայքարի մեջ կարեւորը սեփական ուժերին ապավինելն է եւ առանց որեւէ աջակցության սպասումի զինված պայքար մղելը:

Ավարտելով մեր շարադրանքը՝ կարող ենք պնդել, որ հայ ժողովրդի ազատատենչ ոգին եւ հայրենասիրությունը պատմության բոլոր ժամանակներում ծնունդ են տվել օտար զավթիչների դեմ ազատագրական պայքարի ծավալմանը: Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես եղել է ազգապահպան կառույց: Ազատագրական պայքարը հայերի ամուր կամքի եւ համառ դիմակայության արդյունքում ձեռք բերած հաջողությունների վառ ապացույց էր՝ չնայած հանդիպած լուրջ դիմակայություն-

⁴⁶ Մ. ՉԱՄՁԱՆՑ, նշ. աշխ., էջ 805:

⁴⁷ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, նշ. աշխ., էջ 29:

⁴⁸ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կարապետ Բ. Ունեցի (1726–1729), Քրիստոնյա Հայաստան, 30.06.2012, ԿԱՐԱՊԵՏ Բ. ՈՒՆԵՑԻ (1726–1729) | Քրիստոնյա Հայաստան (wordpress.com) (5.10.2023 10:00):

ներին եւ խոչընդոտներին: Ժէ.-ԺԸ. դդ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եռանդուն կերպով մասնակցել է պարսկական եւ օսմանյան տիրապետությունից Հայաստանն ազատագրելու ծրագրերին, կազմակերպել, ղեկավարել ու հովանավորել է ազգային-հասարակական, քաղաքական բազմաթիվ ձեռնարկումներ: Մայր Աթոռը բազմաթիվ դիմադրությունների է հանդիպել (անգամ ձերբակալվել է Աստվածատուր կաթողիկոսը), սակայն չի նահանջել՝ շարունակելով քաջալերել ու ոգեշնչել հայ ազատարարներին: Իր հերթին Դավիթ Բեկն ստեղծել էր մարտունակ բանակ, կիսանկախ իշխանություն, ինչի արդյունքում պայքար մղելու ավանդույթները շարունակվեցին եւ փոխանցվեցին եկող սերունդներին, որոնք հաջորդ դարերի ընթացքում անձնազոհաբար պաշտպանեցին հայրենիքը թշնամու հարձակումներից: Ասվածի ապացույցներից է Ի. դարասկզբին Լեոնահայաստանի հերոսամարտը, երբ Գարեգին Նժդեհն ու նրա զորաշարքերը մարտի էին գնում կարգախոսով՝ «Հանուն հայրենիքի՝ դավիթբեկաբար» կամ «Մեզ հետ են Աստված եւ Դավիթ Բեկի վրիժակ ոգին»⁴⁹: Ու թեեւ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարից անցել է երեք դար, այդ գոյակուվի դասերն այսօր եւս շարունակում են մնալ այժմեական:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սիմէօն Երևանցի, հանուն հայրենիքի, Դավիթ Բեկ, Գարեգին Նժդեհ:

РЕЗЮМЕ

Данная статья посвящена описанию событий, происходящих вокруг Первостольного Святого Эчмиадзина в 20-х годах 18-го века в контексте освободительной борьбы, разворачивающейся в Арцахе и Сюнике.

⁴⁹ Ս. ԱԼԵՔՍԱՆԶԱՆ, Դավիթ Բեկը, որը հայոց զորականի կերպարին մինչեւ հիմա վեհություն է բերում,

հայրենատիրոջ մեր վարքին՝ արծվենի ճախը, «Սյունյաց երկիր մշակութային», № 6, Կապան, 2022, էջ 4:

Цель статьи — на основе имеющихся исследований представить выборы Католикоса, а также показать возникшие за это время трудности и пути их преодоления. В методологическом отношении мы попытались сравнить имеющиеся материалы и подвергнуть их историческому анализу.

При написании этой работы мы поставили задачу также коснуться такого важного аспекта, как сотрудничество духовных и светских деятелей в ходе армянской освободительной борьбы, особенно отношения к этой национально-освободительной борьбе Католикосов Аствацатура и Карапета.

Тема актуальна еще и тем, что как в прошлом, так и в настоящее время Арцах и Сюник были в центре внимания врагов, и необходимо понимать, что беспристрастное изучение национально-освободительных войн важно для того, чтобы сделать правильные выводы и в нынешней ситуации, а также подчеркнуть важность поддержки духовного сословия, которая всегда была необходима во все времена.

SUMMARY

This article is devoted to the description of the events that took place around the Mother See of Holy Etchmiadzin in the 1720s, in parallel with the liberation struggle that unfolded in Artsakh and Syunik.

The aim of the article is to present the election of the Catholicos, the difficulties that arose during that time and their overcoming on the basis of the existing research. We tried to compare the available materials with the historical analysis.

When writing the article, we set the task to touch upon the cooperation of spiritual and secular figures during the Armenian liberation struggle, especially the attitude of the Catholicoi Astvatsatur and Karapet towards the liberation struggle.

The topic is actual because both in the past and in the present, Artsakh and Syunik were the focus of the enemies' attention, and it is necessary to understand that an impartial study of the national liberation battles is important in order to draw the right conclusions in the current situation and to emphasize the importance of supporting the clergy, which was necessary at all times.



ԳՐԻԳՈՐ ՕՇԱԿԱՆՑԻՆԻ ՏԱՂԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՒ ՈՃԸ¹

Գրիգոր արք. Օշականցին ժԸ. դարի տաղերգու է, ծնվել է 1757 թ. Օշականում: Նրա կենսագրությունն ամբողջությամբ մեզ է ներկայացնում տաղասաց, մանկավարժ Հովհաննես Կարնեցին², որն Օշականցու ժամանակակիցն էր եւ անձամբ ճանաչել է նրան:

Յոթ տարեկանից Օշականցին³ սկսում է ուսումնառությունն Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա. Երեւանցու՝ էջմիածնում հիմնած ժառանգավորաց դպրոցում: Խելացի եւ ուշիմ պատանին արժանանում է կաթողիկոսի ուշադրությանը եւ ընդունվում է հոգեւոր ծառայության: Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսը նրան շնորհում է արքության պատիվ եւ ուղարկում Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրեր՝ որպես հայրապետական նվիրակ: 1795–1799 թթ. Գրիգոր արք. Օշականցին շրջում է ինչպես Արեւմտյան Հայաստանի (Կարին, Մուշ, Բասեն), այնպես էլ Օսմանյան կայսրության հայաբնակ այլ գավառներում (մասնավորապես Պոնտոս): Նա Արեւմտյան Հայաստանի տարբեր գավառներում եւ քաղաքներում ոչ միայն կատարում է նվիրակի իր առաքելությունը, այլեւ այցելում է նշանավոր վանքերն ու եկեղեցիները, բերդերն ու ամրոցները, որոնց մասին գրառումներ է կատարում: Պահպանվել են եկեղեցիների պատերին թողած նրա արձանագրություններից⁴:

Գրիգոր Օշականցին շրջագայություններից մեկի ընթացքում՝ 1799 թ. դեկտեմբերին, էրզրումի նահանգի Հերթ գյուղում վարակվում է ժանտախտով, վերադառնում է Կարին, որտեղ էլ 43 տարեկան

¹* Ստացվել է՝ 8.12.2023, գրախոսվել է՝ 23.12.2023:

էլ. հասցե՝ astghikhovhannisyanyan90@gmail.com:

² Վիեննայի մատենադարան, ձեռ. 884, 92ա–97բ:

³ Ավագանի անունը որեւէ տեղ հիշատակված չէ:

⁴ Վիեննայի մատենադարան, ձեռ. 884, 92ա–97բ:

հասակում կնքում է իր մահկանացուն: Ջգալով իր մոտալուտ մահը՝ Օշականցին Հովհաննես Կարնեցուն խնդրում է գրել իր կտակը, ապա նրան է հանձնում իր ստեղծագործությունները եւ ձեռագրերը: Կարնեցին ի մի է բերում դրանք եւ կազմում երեք մասից բաղկացած մեկ ընդհանուր ձեռագիր (տաղեր, ոտանավոր արձանագրություններ եւ տեսիլներ)⁵:

Գրիգոր Օշականցու տաղերը հրատարակել է Համազասպ Ոսկյանը⁶: Տաղերգակի կյանքին ու ստեղծագործությանն անդրադարձել է Շուշանիկ Նազարյանն իր «Գ. Օշականացու կյանքն ու ստեղծագործությունը» հոդվածում⁷, որտեղ մանրակրկիտ վերլուծության է ենթարկել հեղինակի տաղերը:

Սակայն Օշականցու ստեղծագործություններին նվիրված աշխատանքներում բացակայում են լեզվական ուսումնասիրությունները, եւ քանի որ գեղարվեստական ստեղծագործության հիմքում ընկած է լեզուն, ապա գեղարվեստական երկի համակողմանի ուսումնասիրությունը չի կարող չընդգրկել նաեւ լեզվի ուսումնասիրությունը: Այս հոդվածով կփորձենք լրացնել այդ բացթողումը:

Գրիգոր Օշականցու ստեղծագործության արժեքավոր մասն է կազմում «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ» ժողովածուն⁸: Այն ներառում է մոտ երկու տասնյակ տաղ, որոնց հիմնական նյութը հայրենի բնության գովերգումն ու փառաբանումն է՝ արված պարզ ու մատչելի նկարագրություններով:

Օշականցին ստեղծագործել է մի ժամանակահատվածում, երբ գրավոր բանաստեղծության մեջ իշխող է դառնում գրաբարը: Ինչպես նկատում է Վարդան Աճեմյանը, «18-րդ դարում գրաբարի դիրքերը զգալիորեն ամրապնդվում են», եւ «արեւմտահայ աշխարհաբարը 18-րդ դարում միայն երկրորդական գրավոր լեզու է, եւ առաջնությունը այս տեսակետից պատկանում է գրաբարին»⁹: Գրաբարի վերականգնման, զար-

⁵ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, Գրիգոր Օշականցու կյանքն ու ստեղծագործությունը, Երեւան, «Պատմաբանասիրական հանդես», № 4, 1964, էջ 103–104:

⁶ Հ. ՈՍԿԵԱՆ, Գրիգոր Արքեպ. Օշականցի, Վիեննա, «Հանդէս Ամսօրեայ», № 1–3, 1964, էջ 7–28, 4–6, էջ 141–152, 7–9, էջ 311–322, Հ. ՈՍԿԵԱՆ, Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը, Վիեննա, 1966: Սույն գրքին հղումներն այսուհետ կտրվեն շարադրանքում:

⁷ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 101–116:

⁸ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 103–104:

⁹ Վ. ԱՃԵՄՅԱՆ, Գրական արեւմտահայերենի ձեւավորումը, Երեւան, 1971, էջ 22, 23–24:

գացման այս բուռն շրջանում են ստեղծագործել ԺՀ. դարի նշանավոր բանաստեղծներ Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին, Հովհաննես Կարնեցին, Գրիգոր Օշականցին եւ այլք, սակայն այս բանաստեղծները, հին հայերենին հավատարիմ մնալով հանդերձ, ձգտել են դյուրին ու մատչելի դարձնել այն, իսկ շարահյուսությունն այն աստիճանի պարզեցնել, որ հնարավորինս հասկանալի դառնա:

Շարունակելով գրաբարամետ բանաստեղծների ավանդույթները՝ Օշականցին նույնպես հակվում է դեպի դասականությունը եւ որպես գեղարվեստական արտահայտման միջոց՝ ընտրում է գրաբար: Այդ շրջանում դեռեւս նոր ձեւավորվող եւ ոչ կանոնական աշխարհաբարը չէր կարող մրցել գրաբարի հետ, սակայն աշխարհաբարի՝ հատկապես արեւելահայ լեզվատարների առկայությունը գրաբար ստեղծագործությունների մեջ անխուսափելի էր:

Այսպիսով՝ Գրիգոր Օշականցու ստեղծագործության լեզվական առանձնահատկությունների բացահայտումը կատարել ենք մի շարք հիմնական ուղղություններով, համեմատականներ ենք անցկացրել ԺՀ. դարի բանաստեղծներ Պաղտասար Դպիրի, Պետրոս Ղափանցու եւ Հովհաննես Կարնեցու ստեղծագործությունների հետ՝ բացահայտելու համար, թե այս բանաստեղծներից ովքեր են առավել հակված դեպի առաջադեմ բանաստեղծության միտումը՝ դեպի մատչելի գրաբարը: Այսպես.

1) Բառապաշարը: Օշականցու ստեղծագործությունների հիմնական բառամթերքը գրաբարյան է, թե՛ տաղերում, թե՛ արձանագրություններում գրաբարյան բառերի հնչունապատկերի եւ գրության փոփոխություններ չկան, ուղղագրությունը դասական է, ինչպես՝ վարդագոյն, նոյն, տէր, սէր, յաւէտ, յոյժ, լցայ, լուայ, արշաւեցայ, պարտէզ (Ոսկեան, էջ 76, 77, 81, 89) եւ այլն:

Ստեղծագործություններում բացակայում է ձայնավորների մենաբարբառության աշխարհաբարյան միտումը. երկբարբառների, եռաբարբառների պարզեցումը, վերածումը երկհնչունների, ինչը բնորոշ է տվյալ ժամանակահատվածին. լոյս, սիւն, արիւն, հոգւոյս, գմբէտեայ, թակոյկ, սիրելոյն (Ոսկեան, էջ 76, 77, 93, 105, 111, 129) եւ այլն:

Գրաբարի միջոցով ավանդված բնիկ հայերեն բառապաշարից բացի՝ Օշականցին գործածում է գրաբարի քերականությանը բնորոշ մի շարք իրողություններ: Այսպես՝

ա) *Խստորեն պահպանված է գրաբարյան նախդիրների գործածությունը, իսկ կապերի կիրառության օրինակներ ընդհանրապես չկան. «Ունայն ընդ վայր կենցաղս լեալ...»¹⁰ (Ոսկեան, էջ 115), «զօրն ողջոյն, զգիշերն ողջոյն...» (Ոսկեան, էջ 97): Նշենք, որ գրաբարյան նախդիրների փոխակերպումը կապերի, աշխարհաբարի ձեւավորման կարեւոր երեւույթներից է, ինչը բացակայում է Օշականցու ստեղծագործության մեջ:*

բ) *Խոնարհման համակարգում լիովին պահպանվել է գրաբարի կազմությունը՝ բացառությամբ աշխարհաբարյան հարակատար դերբայի անկախ գործածության մեկ օրինակի. «Եւ քայքայի կերտուած մարմնոյս գեղեցիկ» (Ոսկեան, էջ 105): Ի հակադրություն Օշականցու՝ հարակատար դերբայի անկախ եւ օժանդակ բայով գործածության դեպքերը բավականին շատ են հանդիպում Պետրոս Ղափանցու (շաղամած, վառած եմ, ողորմած է)¹¹, Պաղտասար Դպիրի (հատած, գըտած, տաւած է, մեծուցած, սընուցած)¹², Հովհաննես Կարնեցու (ոլորած, բոլորած, բացած, մոլորած եմ)¹³ սիրո եւ բնությանը նվիրված տաղերում: Իսկ ահա Պետրոս Ղափանցիի գործածում է նաեւ եւ վերջավորությամբ վաղակատար դերբայներ, ինչպես՝ դարձեւ եմ, բարձեւ եմ, վարձեւ եմ, ցողեւ եմ¹⁴: Ավելին. Հովհաննես Դպիրի եւ Պետրոս Ղափանցու տաղերում հանդիպում են կու նախադաս մասնիկով ներկայի եւ անցյալի կազմության մի քանի օրինակներ, ինչպես՝ կու գաւ¹⁵, կու գընամ, կու պըտըտիմ, կու բոլորի¹⁶: Հայտնի է, որ կու մասնիկը համարվում է գրաբար եւ աշխարհաբար լեզուների տարբերակման հիմնական սահմանանիշներից մեկը, եւ ինչպես գրում Հր. Աճառյանը. «Մի գրաբար գրվածք, որ ունի կու մասնիկը, արդեն գրաբար չէ»¹⁷: Պաղտասար Դպիրի տաղերում հանդիպում ենք նաեւ վ կրավորական ածանցի գործածության մեկ օրինակի՝ բացվի¹⁸: Վ մասնիկով կրավորականի գործածումը եւս աշխարհաբարը գրաբարից զատող հիմնական գործոններից մեկն է:*

¹⁰ Անդ, էջ 115:

¹¹ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, Պետրոս Ղափանցի, Երեւան, 1969, էջ 245, 279, 301:

¹² ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց, Երեւան, 1958, էջ 72, 101, 116, 181:

¹³ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՅԻ, Տաղարան, Երեւան, 1962, էջ 68, 69:

¹⁴ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 285–286:

¹⁵ Անդ, էջ 243:

¹⁶ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 75, 90:

¹⁷ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երեւան, 1951, էջ 443:

¹⁸ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 83:

Հրամայականի կազմությունը՝ է, էք վերջավորություններով, ընդամենը մեկ օրինակով է տեղ գտել Գ. Օշականցու տաղերում՝ հանել (Ոսկեան, էջ 116), իսկ ահա Հովհաննես Կարնեցու տաղերում օրինակները բազմաթիվ են, ինչպես՝ այրէ, մատուցե՛ք, ծանուցե՛ք, տեսանիցե՛ք¹⁹ եւ այլն: Հովհաննես Կարնեցու տաղերում հանդիպում ենք նաեւ Ի-ով արգելական հրամայականի գործածության մի քանի օրինակի, ինչպես՝ մի առնե՛ր, մի հագնի՛ր, մի փախչի՛ր²⁰:

Գրիգոր Օշականցու տաղերում գրաբարյան բայերի ժխտական խոնարհումը եւս պահպանված է. «Կալ ընդ նոսա ոչ հեղգացա» (Ոսկեան, էջ 84), «Աղիողորմ լալով մաղթեմ ոչ լսէ» (Ոսկեան, էջ 105) եւ այլն, աշխարհաբարյան չ ձեւով թով օրինակներ չեն հանդիպում, այնինչ տվյալ ժամանակահատվածի գրաբար ստեղծագործություններում չ-ով ժխտականի գործածությունը սովորական բնույթ է կրում, ինչպես՝ չկար, չունիս²¹, չըգիտէ, չըտան²², չտեսցէ, չառնէ²³:

Բացի բնիկ հայերեն բառերից՝ Օշականցին գործածում է մի շարք փոխառություններ, օրինակ՝ ասորերեն՝ թարսիս, շափիւղայ, քանֆար, սաբայ, գուր, լումայ, հունարեն՝ մարգարիտ, լիբանոս, սիդոն, եբրայերեն՝ րաբբունի, մեսիա, եդեմ, գեհեն, պահլավերեն՝ տաշտ, գուսան, պայագատ, կնդուկ, թակոյկ, աւամ, մարգարէ, պարտեզ, պարսկերեն՝ խունկ, պիլպիլ, սմբուլ, դաստայ (Ոսկեան, էջ 88, 89, 102, 103, 106, 76, 89, 103, 78, 83, 103, 88, 111, 112, 113, 114, 122, 89, 90, 119):

Միջինհայերենյան բառերն ընդամենը մի քանիսն են՝ անփատակ, ծիծաղեռես, ողորմասիրտ, աղիւշէն (Ոսկեան, էջ 89, 112, 113), խոսակցական-բարբառային բառեր ընդհանրապես չեն հանդիպում: Օշականցին հավատարիմ է մնում իր ոճին՝ ձգտելով անաղարտ պահել գրաբարը: Ընդհանրապես այս շրջանի գրաբար ստեղծագործություններում հազվադեպ են հանդիպում խոսակցական-բարբառային բառեր՝ բացառությամբ Հովհաննես Կարնեցու տաղերի: Վերջինս, խառնվածքով առավել մոտ լինելով աշուղական բանարվեստին, հաճախ է գործածում դրանք, ինչպես՝ ուստ չեկայ, ժոխտոած, ժոտ գայ, հասրաթ, չամչրախ, դուրան, զալըմ, խիշտ, թափ եւ այլն²⁴:

¹⁹ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ, նշ. աշխ., էջ 110, 117:

²⁰ Անդ, էջ 124:

²¹ Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 325, 329:

²² ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 84:

²³ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ, նշ. աշխ., էջ 133–134:

²⁴ Անդ, էջ 67–71:

2) Բառակազմական իրողություններ: Բառակազմական տեսանկյունից Օշականցու տաղերը բավականին հարուստ են վերջածանցավոր, հարադրական եւ կրկնավոր, կցական, բաղահյուսական, համադրական բարդություններով, իսկ նախածանցավոր կազմությունները համեմատական կարգով բավականին քիչ են գործածված:

ա) Վերջածանցավոր բարդությունները հիմնականում կազմված են՝ ական, արան, ալի, աուր եւ գոյն վերջածանցներով, օրինակ՝ հայկական, արարչական, ֆաւարան, արֆայարան, մարմնական, ընդունարան, լուսարան, հարիւրաուր, բիւրաուր, տենչալի, տարփալի, մեղմագոյն, վայելչագոյն, գեղեցկագոյն (Ոսկեան, էջ 78, 81, 121, 122, 157, 160, 161, 168, 169): Հազվադեպ են այլ վերջածանցներով օրինակները՝ փոփրիկ, ֆաղցրիկ, մեղմիկ, նորոգիչ, զորութիւն (Ոսկեան, էջ 95, 106, 166):

բ) Նախածանցավոր կազմությունները քիչ են՝ միայն ան ժխտական նախածանցով բառեր՝ անմման, անբան, անհամար, անհաս, անարատ (Ոսկեան, էջ 74, 76, 80, 122), եւ չ ժխտական նախածանցով ընդամենը մեկը՝ չհանդուրժեալ (Ոսկեան, էջ 91): Այլ նախածանցներով կազմություններ չկան:

գ) Հարադրական բարդություններից հանդիպում են՝ մի առ մի, լույս տալ, ձայն տալ, կանչ առնել, զիրկ առնել, տեսության առնել (Ոսկեան, էջ 90, 108, 119, 122, 170), կրկնավորներից՝ խուժադուժ, շարաշար, ուրախ ուրախ, բեկբեկ. պէսպէս, դաստայ դաստայ, բարձրաբերձ (Ոսկեան, էջ 102, 111, 118, 119):

դ) Կցական բարդություններից կարելի է նշել՝ հօտապետ, եղբօրորդի, վարդակարմիր, այսօր, օտարաձայն, բարձրաձայն, սաղարթախիտ (Ոսկեան, էջ 74, 86, 95, 105, 111, 118, 119): Իսկական բարդություններից՝ լուսաբեր, հրաբորբոփ, ֆաղցրամվագ, ծիծաղերես, սիրագումար, ֆաղցրաձայն, ծաղկափայլ (Ոսկեան, էջ 74, 85, 90, 114, 117, 127) եւ այլն:

3) Ձեւաբանական իրողություններ: Օշականցու ստեղծագործություններում աշխարհաբարի ներկայությունը հիմնականում զգալի է հատկապես հոլովական համակարգում:

Սեռական եւ տրական հոլովաձեւերը հիմնականում դրսեւորվում են ի պարզ վերջադրական հոլովիչի գերակշռմամբ, ինչպես՝ Քրիստոսի, պատվիրանի, ժամանակի, համապարհի, վարդապետի, բախտի, պատարագի (Ոսկեան, էջ 75, 108, 109, 124, 125): Մնացյալ հոլովիչների կիրառման օրինակները հազվադեպ են, ինչպես՝ հիւսիսոյ, հողմոյ, սեղանոյ, տապոյ,

մահու, ծովու, աստեղ: Ինչպես հայտնի է, ի պարզ վերջադրական հոլովի-
չի առավելությունը մյուս հոլովիչների համեմատ աշխարհաբարին բնո-
րոշ երեւոյթ է:

Բացառական հոլովը հանդես է գալիս թե՛ աշխարհաբարյան եւ թե՛
գրաբարաձեւ կազմութեամբ. աշխարհաբարին բնորոշ ից վերջավորու-
թեամբ բացառական՝ իւմբից, երամից, ուտից, վեհից (Ոսկեան, էջ 81, 82),
գրաբարաձեւ հոլովում՝ ի սկզբանէ, ի հօտէ, ի հօրէ (Ոսկեան, էջ 76–79):

Երբեմն ի նախդիրն ընկնում է, եւ բացառականը հանդես է գալիս
հետեւյալ ձեւով՝ սարէն, հօտէն, եղանակէն (Ոսկեան, էջ 106–118): Ինչպես
տեսնում ենք, Օշականցու ժամանակներում ի նախդիրն այլեւս չի հա-
մարվում բացառական հոլովի կազմութեան պարտադիր բաղադրիչ:

Գործիական հոլովն իր աշխարհաբար կազմութեամբ բազում օրի-
նակներով տեղ է գտել Օշականցու ստեղծագործությունում՝ ոգւով, սի-
րով, երգով, սեղանով (Ոսկեան, էջ 113, 115) եւ այլն, իսկ գրաբարյան
գործիական ձեւերից՝ ահիւ, սրտիւ, շանթիւ (Ոսկեան, էջ 113):

Միայն աշխարհաբարին հատուկ ում ձեւույթով ներգոյական հոլովի
օրինակներ մեզ չհանդիպեցին:

Աշխարհաբար կազմութեամբ հոլովական ձեւերը հանդիպում են
միայն եզակի թվով, բավականին հետաքրքրական է հոգնակիի կազմու-
թյունը, եթե Օշականցին բացառապէս գործածում է գրաբարյան ք հոգ-
նակիակերտը, ապա Պետրոս Ղափանցու, Պաղտատար Դպիրի, Հովհան-
նես Կարնեցու տաղերում աշխարհաբարին հատուկ եւ եւ ներ հոգնա-
կիակերտ մասնիկներն օրինաչափ են, ինչպես՝ քերքեր, ջրեր, օրեր, ծերեր,
շաղեր, տաղեր, պաղեր²⁵, ծովեր, հովեր²⁶, բոցեր, վարսեր, գետեր²⁷: Այստեղ
առավել ուշադրութեան արժանի է Պետրոս Ղափանցու գործածած հոգ-
նակի սեռականի ձեւը, ինչպես՝ դաշտերուն, ձորերուն, ծառերուն²⁸, որը
լիովին համապատասխանում է արեւմտահայերենի նույն ձեւին:

4) Շարահյուսական իրողություններ: Ինչպես ցույց տվեցին օրինակ-
ները, ձեւաբանական մակարդակում Օշականցու ստեղծագործության
մեջ աշխարհաբարյան փոփոխությունները կամ տեղաշարժերն այդքան
էլ մեծ թիվ չեն կազմում, ուսումնասիրութեամբ պարզ է դառնում, որ շա-

²⁵ Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 240, 241:

²⁶ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 82:

²⁷ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՅԻ, նշ. աշխ., էջ 67, 68, 104:

²⁸ Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 258:

րահյուսությունը, ի տարբերություն ձեւաբանության, համեմատաբար մոտ է ժամանակի խոսակցական լեզվի շարահյուսությանը: Դրա ցայտուն օրինակն է անորոշ դերբայի գործիական հոլովով դրված ձեւի պարագայի գործածումը՝ նշալով, պարելով, դողանջելով, խնդալով, ցնծալով, ուսոստալով, թրթռալով (Ոսկեան, էջ 118) եւ այլն: Այս շարահյուսական կաղապարը բնորոշ է գրաբարին, այն վերջին դարերի ժողովրդախոսակցական ոճին պատկանող երեւույթ է:

Օշականցու տաղերը հետաքրքիր են նաեւ որոշիչ-որոշյալի շարադասության կիրառության առանձնահատկություններով: Հեղինակը գործածում է որոշիչ-որոշյալի շարադասության եւ նախագաս, եւ հետագաս օրինակներ՝ ազնի հօտապետ, կարմիր գոհար, կոկոն վարդ, բաժակ ոսկեղէն, ծառ պտղաբեր, պատկեր փաղցրիկ, ոսկեփետուր աղաւնի, գեղեցիկ Արագած, սաղարթ կանաչագեղ (Ոսկեան, էջ 74, 75, 76, 77, 90, 95, 96, 125):

Հետաքրքրական է, որ որոշիչները, ինչպես բնորոշ է գրաբարին, հետագասվելիս ո՛չ հոլովով, ո՛չ թվով չեն համաձայնում իրենց որոշյալի հետ՝ լուսով փայլակնացայտ, արուսեկի հրափայլ, յամպոյ մթագին, երգով փաղցրանուագ, անդաստանֆ ծաղկազարդ, ուստովֆ սախարթախիտ, ծառֆ անպտուղ (Ոսկեան, էջ 87, 88, 113, 115, 119, 127, 125):

Անդրադառնալով հատկացուցիչ-հատկացյալին՝ ուշադրության արժանի է հոգով սեռական հատկացուցիչի գործածությունը, ինչպես՝ լուսնիակին հոգին, վարդին թուփն (Ոսկեան, էջ 92, 94), որը նույնպես բնորոշ է արեւմտահայերենին:

Վերը նշված հնչունաբանական, բառապաշարային, բառակազմական քերականական իրողություններից զատ՝ Օշականցու տաղերը հետաքրքրական են ներկայանում նաեւ գեղարվեստական պատկերավորման միջոցներով եւ ոճաորման եղանակներով: Լեզվաոճական տեսանկյունից Օշականցու լեզուն պատկերավոր է, բարեհնչուն, հարուստ համեմատություններով եւ մակդիրներով՝ մարգարտափայլ, լուսափայլ, լուսազարդ, խանդակաթ, հրաբորբոֆ, արփիափայլ, վարդակարմիր, փաղցրանվագ, ոսկեփետուր (Ոսկեան, էջ 76, 77, 81, 83, 85, 95, 96), երբեմն էլ՝ բառաբարդման միջոցով ստեղծվում են հեղինակային նորաբանություններ, որոնք հարստացնում են գեղարվեստական խոսքը, օժտում ոճական արժեքով՝ փայլակնացայտ, իշխանաշուֆ, գոյաթափուր, դամբարազարդ, նորահնար (Ոսկեան, էջ 82, 95, 97, 112, 114):

Ըստ բանաստեղծական կառուցվածքի՝ Օշականցու տաղերը հիմնականում կազմված են հնգատող, վեցատող եւ մինչեւ տասներկու տողից բաղկացած տներից, որը հազվադեպ հանդիպող երեւույթ էր ժԹ. դարում. այդ ժամնակահատվածում ստեղծված տաղերը մեծամասամբ ունեն 1, 2 կամ 3 տողից կազմված դարձեր կամ կրկնականեր, որոնցով ամբողջանում են տները:

Հնչյունական ձեւավորման՝ հանգավորման տեսանկյունից բոլոր տաղերը հանգավորված են թույլ կամ աղքատ հանգերով: Վերջիններս կազմվում են բառավերջի շեշտված ձայնավորով. «Գաւազան ծաղկեալ ի Հօրէ...» (Ոսկեան, էջ 79), եւ բառավերջի շեշտված ձայնավորով ու դրան հաջորդող բաղաձայնով. «Գարնանային հողմոյն եկեալ...» (Ոսկեան, էջ 113):

Օշականցու ստեղծագործության մեջ մի առանձին խումբ են ներկայացնում այն տաղերը, որոնց բոլոր տողերն սկզբից մինչեւ վերջ ունեն միեւնույն վերջավորութիւնը: Նման խիստ սկզբունքով հյուսված են նաեւ Օշականցու ոտանավոր արձանագրութիւնները: Օրինակ՝

Աւետարանն իւղաբերի[ց] զսոյն կանոն կարգեալ ունի,
 Յինանց թաղման զընթեռնանի, իսկ ի յաղիցս ուրոյն կարգի.
 Յայլ կիւրակէս գերկուս նա մի, երից գլխոցն կանոնի
 Մատթէոսեանն միայնակ մի, միշտ Յարութեան ընթեռնանի,
 Զչորեսին Փոխսն Հարցի ասել լման հարկատորի.
 Զի զմանկացն որ ի հնոցի, ունիմք տագնապ յայսմ աշխարհի.
 Եւ Ողորմեայքն երբակի մի աւելորդ վարկանիցի,
 Որովք հորհուրդ աննառելի Երրորդութեանն Բարոզի²⁹:

Իհարկե սա խոսքում է տաղասացի արվեստի վարպետության մասին, սակայն անընդհատ կրկնվող հանգերը թուլացնում են խոսքի ազդեցությունը՝ այն դարձնելով ինչ-որ առումով միապաղաղ:

Չնայած նույնահանգ ստեղծագործությունների տարածվածությանը՝ միջնադարում հետզհետե ավելանում են փոփոխական հանգերով ստեղծագործությունները, որոնք իրենց ձեւով ու բնույթով շատ ավելի տպավորիչ ու գեղեցիկ են դարձնում բանաստեղծական խոսքը: Օշականցին եւս անմասն չի մնացել եւ նրա «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ» ժողովածուի ստեղծագործությունների մեծամասնությունը փոփոխական հանգավորմամբ է: Օրինակ՝

²⁹ Մատենադարան, ձեռ. № 7672, թերթ 53ա:

Արի՛ք եղբար՛ք ելցո՛ւմ այսօր
 Յայգեստան, յայգեստան,
 Անա երգէ տատրական ազնիւ
 Քաղցրաձայն, քաղցրաձայն (Ոսկեան, էջ 117):

Սակայն փոփոխական հանգերով տաղերում հանգափոխությունը երբեմն կատարվում է անկանոն եղանակով: Օրինակ՝

Ի յատենի թագաւորին
 Մինչ կացուցեալ տագնապիս՝ աւաղ
 Երամբ սրբոցն աստեղափայլ
 Զարդարին, զարդարին, զարդարին:
 Դատօղն արդար ի յակնարկելն
 Ի դէմս քո ամաչիս՝ աւաղ (Ոսկեան, էջ 101):

Այսպիսով՝ Գրիգոր Օշականցին միջնադարյան այն հեղինակներից է, որոնք մեզ ներկայանում են, իրենց ժամանակաշրջանի չափանիշներով, արժեքավոր տաղերով, որոնք աչքի են ընկնում իրենց նրբություններ, գեղարվեստական պատկերների կենդանի, խոսուն նկարագրությամբ, հարուստ ու հագեցած բառապաշարով: Նրա բանաստեղծական խոսքը պարզ ու ընկալելի է, բարբառային եւ օտար բառերի առկայությունն աննշան է, բառաձեւերը, քերականական կառույցները մեծ մասամբ գրաբարյան են, սակայն աշխարհաբարի ներկայությունը եւս նկատելի է՝ հատկապես հոլովական համակարգում: Պետք է փաստենք, որ Գրիգոր Օշականցին, ի տարբերություն Պետրոս Ղափանցու, Պաղտատար Դպիրի եւ Հովհաննես Կարնեցու, առավել զուսպ եւ ավանդապահ է՝ առավելագույնս հարազատ գրաբարին:

Ինչ խոսք, այս եւ այլ ստեղծագործություններում տեղ գտած գրաբարյան եւ աշխարհաբարյան լեզվաոճական իրողությունները ենթահոդ պատրաստեցին հետագայում աշխարհաբարի երկու ճյուղերի ձեւավորման՝ հատկապես արեւմտահայերենի լեզվաքերականական բաղադրիչների հիմնավորման համար:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Տաղ, տաղաչափություն, հանգ, հանգափոխություն, փոփոխական հանգ:

РЕЗЮМЕ

Архиепископ Григор Ошаканци — восточноармянский поэт XVIII века. Его произведения и рукописи были собраны Ованнесом Карнеци. Основная тема Григора Ошаканци — восхваление и прославление родной природы с реалистичным, объективным, простым и доступным описанием.

Основная лексика произведений Ошаканци — древнеармянская. Помимо исконно армянской лексики, переданной через грабар, Ошаканци использует ряд реалий, характерных для грамматики этого языка. Ошаканци также использует ряд заимствованных слов из сирийского(арамейского), греческого, иврита, пехлевийского и персидского языков.

Он один из тех авторов Средневековья, который представляется нам ценными по меркам своего времени стихами, отличающимися тонкостью, живым, красноречивым описанием художественных образов, богатым и полным словарным запасом.

Грабарские (классический армянский язык) и ашхарабарские (новый армянский язык) грамматико-лексические и стилистические реалии, обнаруженные в творчестве Григора Ошаканци, подготовили почву для формирования двух ветвей ашхарабарского армянского, особенно для языковых компонентов западноармянского языка.

SUMMARY

Archbishop Grigor Oshakantsi was an 18th century Eastern Armenian poet. His works and manuscripts were collected by Hovhannes Karnetsi. The main theme of Grigor Oshakantsi is the praise and glorification of native nature in objective, simple and comprehensible description.

The basic vocabulary of Oshakantsi's works belongs to the Classical Armenian language. In addition to the native Armenian vocabulary conveyed through the Classical Armenian, Oshakantsi uses a number of facts characteristic of the grammar of the Classical Armenian. Oshakantsi also uses a number of loanwords from Assyrian, Greek, Hebrew, Pahlavi and Persian.

He is one of those medieval authors who present valuable poems by the standards of their time, characterized by subtlety, vivid, eloquent description of artistic images and rich vocabulary.

The linguistic and stylistic realities of the Classical Armenian and Modern Armenian languages found in the works of Grigor Oshakantsi prepared subsoil for the formation of two branches of the Modern Armenian language, especially for the substantiation of the linguistic components of the Western Armenian.



ԱՍՏՎԱԾԱՆՉՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՆՆՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՈՒ ՄԻՋՈՑ ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ
«ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ¹

Նայերեն առաջին մանկական «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի էջերում լույս ընծայված պատմություններն իրենց բարոյախրատական նշանակությամբ միտված էին նպաստելու Կ. Պոլսի հայկական ընտանիքներում հասակ առնող երեխաների քրիստոնեական դաստիարակությանը:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ընթերցողները, անշուշտ, կնկատեն, որ Հակոբ Պարոնյանն իր խմբագրած մանկական պարբերականում հրատարակել է նաեւ աստվածաշնչյան որոշ պատմություններ, որոնք երեխաներին դյուրըմբռնելի ձևով մատուցելու մտադրությամբ շարադրել է սեփական դիտանկյունից: Բայց ինչպե՞ս է մեկնաբանել դրանք մեծ գրողը: «Այդ է էականը,— իրավացիորեն նկատում է Գառնիկ Ստեփանյանը,— միստիկական, բարոյախոսական կողմը, հրաշապատում կեղեւը դուրս գցելով՝ նրանց տվել է միանգամայն նոր մեկնաբանություն՝ երբեմն այնքան սրամիտ ու համարձակ, որ մարդ կարող է զարմանալ, թե ինչպես են հանդուրժել Կրոնական ժողովը եւ Ուսումնական խորհուրդը, երգիծաբանին չեն բանադրել որպես ամբարիշտ»²: Վերոհիշյալը խոսում է այն մասին, որ Պարոնյանը, ամենեւին չլինելով, այսպես կոչված, մանկական գրող, բայց ունենալով հստակ գիտակցություն, որ ստեղծագործում է նախադպրոցական տարիքի, կրտսեր ու միջին դպրոցահասակ երեխաների համար, եւ անհրաժեշտ է հաշվի առնել նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները, դաստիարակության խնդիրները, միջավայրը, հայրենիքից դուրս՝ օտար հողում

¹* Ստացվել է՝ 19.06.2023, գրախոսվել է՝ 27.06.2023:

էլ. հասցե՝ harutyunyanlusya@gmail.com:

² Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հակոբ Պարոնյան, Երևան, 1964, էջ 181:

եւ այլակրոն մարդկանց շրջապատում ապրելը, կարողացավ իրագործել մանկական պարբերական խմբագրելու ծրագիրը:

Պարոնյանի մանկական երկերի համապատկերում աստվածաշնչյան պատումների դաստիարակչական դերը բացահայտելու գործում օգնության են հասնում «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում փոքր քանակով տպագրված բիբլիական պատմությունները՝ «Ադամ Եւային խաբուիրը», «Քրիստոսի մէկ հրաշքը», «Դաւիթ եւ Դողիաթ», «Պաղտասար թագաւորին խնջոյքը», «Անառակ որդի», «Տէր Զաքարիոն քարոզը», «Աստուծոյ իմաստութեան վրայ գանգատողը շուտով կը զղջայ», «Յովսէփ գեղեցիկ», «Անվախ Ներսէս», «Աստուծոյ արդարութիւնը» եւ այլն:

Ինչո՞ւ էր առհասարակ Պարոնյանն իր մանկական թերթում հրատարակում աստվածաշնչյան պատմություններ, եւ ի՞նչ էր սքողված այդ նպատակադրման հիմքում: «Բնականաբար Պարոնյանը չէր կարող իր թերթից իսպառ վանել Աստվածաշնչի առասպելները, — համոզված է գրականագետ Գ. Մադոյանը — նա ստիպված էր ընտրութեամբ իր ընթերցողներին վերապատմել դրանցից մի քանիսը: Այս առողջ մոտեցումը բարձրացնում էր նրա թերթի արժեքը: Հատկանշական է, որ հետագայում, երբ թերթն անցնում է Յազմաճյան գրատան ձեռքը, մոռացության է տրվում այս պարոնյանական ավանդույթը, թերթը լցվում է սրբազան պատմության առասպելներով ու նկարներով, որը եւ քննադատվում է մամուլի կողմից»³:

Աստվածաշնչի բովանդակության զանազան մեկնաբանություններում Հ. Պարոնյանը խրատներ եւ խորհուրդներ է տալիս թե՛ մեծերին, թե՛ փոքրերին: Դրանցից է «Աստուծոյ իմաստութեան վրայ գանգատողը շուտով կը զղջայ» ստեղծագործությունը, որտեղ Պարոնյանն ընդգծում է այն գաղափարը, որ յուրաքանչյուր արարչագործություն օգտակար է մարդկանց եւ բարօրություն է բերում նրանց:

Երբեմն մենք գանգատվում ենք երեւույթներից, որոնք մեր առօրյայում դժվարություններ են ստեղծում. այդպես բողոքում է շուկայից վերադարձող վաճառականը, քանի որ խոնավ ու անձրեւոտ եղանակի պատճառով նա հաճախ էր սայթաքում եւ ցեխի մեջ ընկնում: Սակայն նույն խոնավ եղանակի շնորհիվ նա ազատվում է ավազակի գնդակից,

³ Գ. ՄԱԴՈՅԱՆ, Հակոբ Պարոնյան, Երեւան, 1960, էջ 75:

որովհետեւ վառողը թրջվել էր, եւ հրացանը չի կրակում: Վաճառակահին հաջողվում է փախչել ու ողջ-առողջ տուն հասնել: Նա փառք է տալիս Աստծուն՝ ինքն իրեն ասելով. «Ինչ անխելքութիւն էր, այն գէշ օդն Աստուծոյ մէկ անգին պարգեւը սեպելու տեղ՝ դժգոհութիւն ըրի: Թէ որ երկինքը պայծառ ըլլար եւ օդը չոր՝ հիմա բանս բուսած էր, զաւակներս պարապ տեղը պիտի սպասէին իմ դարձիս: Անձրեւը՝ որուն համար գանգատուեցայ, թէ կեանքս եւ թէ հարստութիւնս ազատեց: Ասկէ ետքը մեղա՛յ, որ Աստուծոյ ըրածը պարսաւեմ: Իր իմաստութիւնը ամեն բանի մեջ կը փայլի, բայց մեր անխելքութիւնը չենք տեսներ»⁴:

Ավելորդ չենք համարում անդրադառնալ աստվածաշնչան այնպիսի մանրամասների, որոնք կօգնեն ճիշտ դաստիարակել երեխաներին եւ գտնել կյանքը ճիշտ ապրելու համար այնպիսի ցուցումներ, որպիսիք օգտագործել է մեծ երգիծաբանն ու մանկագիրը: Մանավանդ որ ժամանակակից շատ մանկավարժներ եւ ծնողներ բազմիցս արտահայտվում են այն մասին, որ երեխաները փոխվել են, որ դժվարացել է նրանց ուսումնական գործընթացի մեջ ներգրավելը: «Մանկական գրականության հիմնական խնդիրն է նպաստել, որ երեխաների հեքիաթային գույներն ու հնչյունները չաղավաղվեն, — համոզված է գրականագետ Մ. Գիլավյանը, — որ նրանք ներդաշնակվեն բնության հետ ու սիրով լցվեն Աստծո ստեղծած բոլոր կենդանի արարածների նկատմամբ: Այս նպատակներով է մանկապատանեկան գրականությունը դիմում Աստվածաշնչին, որը մարդասիրական գաղափարների անսպառ շտեմարան է: Աստվածաշնչան պատվիրանները՝ որպէս մատաղ սերնդի բարոյահոգեբանական դաստիարակության, անհատականության ձեւավորման, մտահորիզոնի ընդլայնման կարեւոր գործոններ»⁵:

Այս առումով Աստվածաշունչը սովորեցնում է այնպիսի գործնական միջոցներ, որոնք հնացած եւ ավելորդ չի կարելի համարել:

Ուզում ենք ուշադրություն հրավիրել հետեւյալի վրա:

Աստված ծնողներին օժտել է բնածին հատկություններով, որոնք օգնում են նրանց դաստիարակել երեխաներին: Աստված օգնում է հասկա-

⁴ «Թատրոն. բարեկամ մանկանց», կիսամսեայ պատկերազարդ հանդէս, Կ. Պոլիս, 1876, թիւ 7, էջ 54:

⁵ Մ. ԳԻԼԱՎՅԱՆ, Աստվածաշնչան թեմաներն ու մոտիվները նորագույն շրջանի հայ մանկապատանեկան գրականության մեջ, Կանթեղ, գիտական հոգիվածների ժողովածու, 2018, թիվ 1, էջ 3–4:

նալ հրահանգներ, որոնք վերաբերում են բարոյական եւ հոգեւոր հարցերին, երեխաների դաստիարակությանը:

Աստվածաշունչը հատուկ ցուցումներ է տալիս ծնողներին՝ հայրերին՝ առանձին, մայրերին՝ առանձին: Աստծու խոսքը նշում է, որ երեխա դաստիարակել ու մեծացնել նշանակում է տարիներ շարունակ անձնագործողի դրսևորել:

Այս շրջանում է, որ ծնողների դերն ու օրինակը մեծ նշանակություն են ստանում: Աստվածաշունչը խորհուրդ է տալիս հաճախ զրույցներ ունենալ երեխաների հետ: Նրանց հետ անհրաժեշտ է խոսել իրական կյանքի օրինակներով եւ բացատրել, թե ինչպես սխալ ճանապարհով գնացողները կարող են վնասներ կրել, իսկ ճիշտ ճանապարհի վրա գտնվողները՝ օգուտներ քաղել: Պարոնյանը դա անում էր Հովսեփի, Դավթի անունով, Հովսեփի որդու միջոցով: Ծնողները կարող են դա անել՝ նման օրինակներ բերելով իրենց շրջապատից: Մնում է երեխաների ուշադրությունը հրավիրել բացասական եւ դրական օրինակների վրա:

«Յովսէփ գեղեցիկ» պատմության միջոցով Պարոնյանը ցանկանում է երեխաներին ցույց տալ նախանձի կործանարար հետեւանքները: Նախանձն ամբողջությամբ կարող է բարոյալքել մարդուն: Հետեւելով այս պատմության մեջ ծավալված իրադարձություններին՝ տեսնում ենք, թե ինչպես է նախանձը մարդու հոգում ատելություն, թշնամանքի բույն հյուսում եւ անգամ դրդում եղբայրասպանության:

Ինչ է ուզում Պարոնյանն այս պատմության շնորհիվ սովորեցնել երեխաներին: Ո՞րն է հեղինակի իրական նպատակը, եւ ինչո՞ւ է իր մանկական պարբերականում նմանօրինակ պատմությունների կողքին այս պատմությունը նույնպես ներառել: «Յովսէփ գեղեցիկ» պատմությունն այն մասին է, թե ինչպես եղբայրները միասին խորհրդակցեցին եւ որոշեցին սպանել արյունակից կրտսեր եղբորը: Այնուհետեւ մի սուտ հորինեցին՝ փորձելով խաբել սեփական հորը: «Յակոբ Նահապետին տղան Յովսէփ Գեղեցիկ՝ առաքինութեան եւ խելացութեան կողմանէ ամեն պատանիներու աննման օրինակ մը ըլլալով՝ սիրով մտիկ կըլլուի իր գըլխուն եկած բաներուն պատմութիւնը, եթէ հազարաւոր անգամ ալ պատմուի: Յովսէփի եղբայրները կասկածելով, որ իրենց հայրը իրենցմէ աւելի կը սիրէ Յովսէփը, կը նախանձէին վրան եւ կատէին զանիկա»⁶: Հետեւյալ

⁶ «Թատրոն. բարեկամ մանկանց», Կ. Պոլիս, 1876, թիւ 8, էջ 60:

պատմության օգնությամբ երգիծաբանն իր փոքրիկ ընթերցողներին փորձում էր բացատրել, որ եղբայրների սրտի մեջ առաջացած նախանձի հետեւանքը դարձավ բարկության, ատելության, ստելու, եղբորը գերի վաճառելու եւ հոր հետ անխղճաբար վարվելու դրդապարճառ:

Բարոյագետ Պարոնյանը, ընտրելով ու շարադրելով այս աստվածաշնչյան պատմությունը, ոչ միայն քայլ է անում երեխաներին կրթելու եւ քրիստոնյային վայել դաստիարակելու, այլեւ մտքերի ու զգացումների զարգացման որոշակի ուղղություն է տալիս: «Կ. Պոլսում գտնվելու տարիները,— նկատում է գրականագետ Ա. Գլջյանը,— փաստորեն կյանքի ու մշակույթի հետ հաղորդակցվելու համալսարաններ էին եղել երիտասարդ տաղանդի համար: Այս ընթացքում նա շատ բան էր տեսել, ապրել, ճանաչել, փորձել, մերժել: Նրա հոգին նոր պայմանների մեջ էր աճել ու թրծվել: Նա ձեռք էր բերել նոր պահանջմունքներ, ճանապարհի որոնումներում առավել նկատելի էր դարձել սեփական իդեալի դերը: Նա կյանքի փորձության մի կարեւոր շրջան էր անցել, շատ բան գիտեր աշխարհի ու իրականության մասին: Միշտ մնալով ինքնուրույն մտածող՝ արդեն սեփական հայացքով էր իմաստավորում իրականությունը»⁷:

«Յովսէփ գեղեցիկ» պատմության օրինակով, այդ պատմության կերպարներով ու կատարվող իրադարձություններով Հ. Պարոնյանը փորձում է հուշել երեխաներին, որ նախանձն ինքնին անտեսանելի է, որովհետեւ մարդու ներսում է, եւ անգամ մի փոքր հատիկ նախանձի սերմը բավական է, որ այն վնասներ պատճառի եւ տվյալ մարդուն, եւ շրջապատի մարդկանց: Կարեւոր է նաեւ թույլ տալ, որ երեխան տեսնի իր սխալ արարքի հետեւանքը: Դա արդարամտություն կսովորեցնի երեխային, եւ նա կհասկանա, որ առավել հոգատար եւ խնամքով պետք է վերաբերվել ուրիշներին: Նման հարցերի մեջ է խորամուխ լինում մանկագիր Հ. Պարոնյանը «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում:

Երգիծաբանը ոչ թե սրբերի շարքին դասված նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության մասին շարադրմամբ, աստվածաշնչյան բարոյախոսական առակներով, այլ նշանավոր մարդկանց կյանքի արգասավոր եւ օգտաբեր դրվագներով է ուզում դաստիարակել նոր հասունացող սերնդին: «Բարոյական քարոզին փոխարինում են գեղարվես-

⁷ Ա. ԳԼՋՅԱՆ, Երիտասարդ Հակոբ Պարոնյանը ինքնահաստատման ճանապարհին (1868–1870 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, թիվ 5, էջ 115:

տական տարբեր միջոցները, որոնց շնորհիվ Պարոնյանը,— համոզված է պատմաբան Ա. Խառատյանը,— իր ընթերցողի մեջ ձեռավորում է որոշակի վարքագիծ եւ գեղագիտական նախասիրություններ: Պարբերականի խմբագիրն ամենուրեք ելնում է բարոյական պարտքի զգացումից, որով եւ պայմանավորվում է նրա վերաբերմունքը մարդու եւ արտաքին աշխարհի նկատմամբ: Ոչ քիչ դեպքերում Պարոնյանն այդ պարտքը պատկերացնում է կրոնաբարոյական դաստիարակության արժեքներով եւ շեշտում իր ամենակարեւոր նպատակը՝ «դեռահաս տղայոց դաստիարակությունը»⁸:

Ըստ աստվածաշնչյան պատումի՝ Ադամն ու Եւան նախքան մեղսագործությունն ու դրախտից արտաքսումը Եդեմում ապրել են անհոգ այնքան ժամանակ, քանի դեռ չեն խախտել Արարչի կարգադրությունը: Եւ դեռ երկար կարող էին շարունակել ապրել, եթե լսեին Աստծու հորդորն ու զգուշացումը՝ չուտել բարու ու չարի գիտության ծառից: Ել չենք ասում, որ հետագայում նրանց թույլ կտրվեր ուտել կյանքի ծառի պտղից եւ հավիտյան ապրել:

«Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում պարոնյանական մեկնաբանությամբ հրատարակված «Ադամ Եւային խաբուիլը» պատմության մեջ հեղինակն էական մեկ այլ միտք է զարգացրել ու ներկայացրել հեքիաթի ձեւով՝ սեփական հանցանքն ուրիշի վրա գցելը: «Այն վայրկենին թագաւորը ներս մտնելով՝ մուկին ուր ըլլալը կը հարցնէ: Էրիկը կմկըմալով ասանկ կը պատասխանէ. «Վեհափառ թագաւոր, իմս չէ յանցանքը: Խնչ ըսեմ սա կնկանս որ ամանին մէջինը հասկնալու համար գլուխս տարաւ. ես չուզելով բացի եւ մուկը փախաւ:

— Տէ, ըսաւ թագաւորը դուն չէիր այն օրը անտառին մէջ ըսողը որ՝ ես եթէ Ադամին տեղն ըլլայի, սանկ կընէի, նանկ կընէի. ո՛ւր է, ապտակ մը պիտի իջեցնէիր կնկանդ. պէտք էր որ պահէիր խոստմունքդ»⁹:

Դյուրին գործ է ուրիշի սխալը մատնացույց անելը, այնինչ հաջորդ վայրկյանին հնարավոր է դու ինքդ գործես այդ նույն սխալը: Յուրաքանչյուրս կարող ենք ընկնել փորձանքի մեջ, բայց ամենակարեւորը դրանից դաս քաղելն ու խրատվելն է: Պարոնյանը հենց այս մտադրությամբ, միմիայն երեխաներին իր մանկական պարբերականում բերված

⁸ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, Հակոբ Պարոնյանի պարբերականները (մեծ երգիծաբանի ծննդյան 150-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», Երեւան, 1994, էջ, 93:

⁹ «Թատրոն. բարեկամ մանկանց», Կ. Պոլիս, 1876, թիւ 2, էջ 14:

օրինակներով խրատելու ցանկությամբ է, որ հորդորում է նույն սխալը երկրորդ անգամ չգործել:

Կարելոր է հասկանալ, թե որն է փորձության մեջ ընկնելու պատճառը. երբեմն հենց գայթակղությունը, անտեղի ու ավելորդ հետաքրքրասիրությունը, Աստծու պատվիրաններին ականջալուր չլինելը, սատանայի կամքը կատարելն ու նրա ստին հավատալը: Այո՛, Աստված չի հանդուրժում իր զավակների անհնազանդությունը: Անհնազանդությունն այն է, երբ մենք, Աստծու պատվիրանները գիտենալով հանդերձ, շեղվում ենք ճշմարիտ ուղուց եւ փորձանքի մեջ ենք ընկնում:

«Ադամ Եւային խաբուիլը» պատմության վերջաբանում Պարոնյանն անմիջական զրույց է ծավալում երեխաների հետ եւ բացահայտում է, թե ինչ նկատառումով է թերթում զետեղել սույն խրատական պատմությունը, եւ այնուամենայնիվ ինչի է ձգտում այս ամենով հասնել երգիծաբանը: «Թատրոնիս մէջ ինչո՞ւ դրի ես այս պատմութիւնը գիտէ՞ք, խելացի տղայք. ուզեցի հասկցնել որ այս աշխարհիս մէջ մարդիկ, թէ մեծ ըլլան եւ թէ պզտիկ, թէ տղայ եւ թէ չափահաս, միշտ փորձութեան որոգայթին մէջ կ'իյնան: Գիտէ՞ք ինչ է փորձութիւնը, ամենուն գիտցած եւ շատ անգամ ամենուս գլուխը եկած բանն է որ փորձանք կ'ըսուի. որո՞ւն գլուխը եկած չէ մեծ կամ պզտիկ փորձանք մը. բանն ան է որ օգուտ քաղէ անկէ եւ խրատուի»¹⁰:

Ադամի ու Եւայի պատմությունը պատմություն է Աստծու կամքին չհնազանդվելու եւ դրա արդյունքում Արարչի բարկության մասին, որի պատճառով նրանք, պատժի արժանանալով, զրկվեցին դրախտից: Այսինքն՝ սա մեզ համար պետք է դաս լինի, որ մենք երկյուղով եւ հնազանդությամբ մոտենանք Աստծու յուրաքանչյուր պատգամին:

Պարոնյանական «Ադամ Եւային խաբուիլը» հեքիաթում ընթերցողը տեսնում է ոչ միայն զուտ բիբլիական պատմության վերարտադրությունը, այլ ավելի կարելոր մի հանգամանք՝ նախանշում է մարդ արարածի մեղսագործ տեսակը: Իսկ ի՞նչ հնարանքի է դիմում հեղինակը, ինչպե՞ս է իր խորաթափանց պատմության միջոցով խրատում երեխաներին: Ակնհայտ է, որ Պարոնյանն անհնազանդության գաղափարն անփոփոխ է թողել, բայց փոխարենն ընտրել է կերպարային այնպիսի համակարգ, որը կհամապատասխաներ երեխաների տարիքային եւ հոգեբանական

¹⁰ «Թատրոն. բարեկամ մանկանց», Կ. Պոլիս, 1876, թիւ 2, էջ 14:

առանձնահատկություններին: Մանկագիրը հիմնավորում է իր ասելիքը՝ առանց դիմելու «հնարանքի» մեթոդին, բնագրում կատարում է դիպաշարային այնպիսի դասավորություն, որ հեքիաթի վերջում հերոսները, ընկնելով փորձության մեջ, գիտակցում են իրենց արարքի հետեւանքները:

Երգիծաբանն իր խոստմանը հավատարիմ է մնում: Ականատեսն ենք այն հանգամանքի, որ «Թատրոն. բարեկամ մանկանց»-ում տպագրված պատմությունների միջոցով՝ Պարոնյանը երեխաներին հաղորդում է գիտելիքներ, հմտություններ, որոնք ձեռք են բերվում դաստիարակության օգնությամբ:

Աստվածաշնչյան այսօրինակ պատմությունների պարոնյանական վերաշարադրմամբ, ծանոթագրությամբ ու մեկնաբանմամբ հեքիաթների շարքի թվարկումը կարելի է շարունակել եւ յուրաքանչյուրի մեջ գտնել խրատական մի «խորհրդանիշ»: Մեր համոզմունքն ամբողջացնելու օրինակ է «Քրիստոսի մեկ հրաշքը» առակը:

Առակում զրույցի առարկա դարձած վերոգրյալ պատմությունը ընթերցողի համար ոչ նորություն էր, ոչ էլ երկնքից իջած մարգարեություն: Վկայությունը հետեւյալն է, թե ինչպես հինգ հացով Քրիստոսը կարողացել է հինգ հազար հոգի կշտացնել: հետաքրքրություն է ներկայացնում այն դրվագը, որ երգիծաբանն այս ամենը ոչ թե նկարագրում է իբրեւ արտասովոր իրողություն կամ հրաշք, այլ որպես հոմոն՝ համեմված սրամիտ ու ծիծաղաշարժ ուրվագծով: «Վարդապետին մէկը՝ օր մը՝ իր քարոզին մէջ այս հրաշքը պատմած ատեն՝ սխալելով եւ հացին ու հոգիին համրանքն իրարու հետ շփոթելով «Հինգ հազար հացով հինգ հոգի կշտացան» կը զրուցէ:

– Հայր սուրբ, կըսէ իսկոյն ժողովուրդէն մէկը, հացն էր հինգը, չէ թէ հոգին:

– Իրաւունք ունիք, օրհնած, վրայ կը բերէ վարդապետը իր սխալմունքը պարտիկ ուզելով, բայց ես գիտնալով այնպէս ըսի, հասկնալու համար՝ թէ արդեօք քարոզս մտիկ կընէ՞ք, եթէ ոչ կը քնանաք»¹¹:

Պարոնյանը՝ երեխաների ամենամտերիմ բարեկամը, այս եղանակով է կառուցել ու հանդիսադրել աստվածաշնչյան մնացյալ պատմությունները: Հովսեփ Գեղեցիկի կերպարով փառաբանել է ժրաջանու-

¹¹ «Թատրոն. բարեկամ մանկանց», Կ. Պոլիս, 1876, թիւ 4, էջ 28:

թյունն ու փութեռանդությունը, իսկ Դավիթի եւ Գողիաթի պարագայում՝ սրատես երգիծաբանի աչքից չեն վրիպել զորեղությունն ու կորովը: «Երեխան եւ նրա աստվածահաճո դաստիարակությունը մեծ տեղ են զբաղեցնում Աստվածաշնչում, որտեղ նա ներկայանում է որպես անմեղ, հոգով պարզ, խոնարհ եւ երկնքի արքայությունը ժառանգակից անձ: Ավետարանական դրվագներից մեկում պատմվում է, թե ինչպես, երբ Հիսուսի մոտ էին բերում մանուկների, առաքյալներն արգելում էին՝ մտածելով, թե դա հոգնություն կպատճառի Վարդապետին: Այդ տեսնելով՝ Քրիստոսն ասում է. «Թույլ տվեք այդ մանուկներին եւ մի՛ արգելեք, որ նրանք գան ինձ մոտ, որովհետեւ երկնքի արքայությունը այդպիսիններինն է» (Մատթ. ԺԹ. 14)»¹²:

«Թատրոն, բարեկամ մանկանց»-ը խմբագրելու տարիներին հարմար առիթն ու պատեհ ժամանակը երբեք չկորցնելով՝ երգիծաբանը շարունակել է երեխաների «միտքը սրել» աստվածաշնչյան պատմություններով: «Հ. Պարոնյանին բազմակողմանիորեն ուսումնասիրողը, — նկատում է Ա. Մանուկյանը, — չի կարող այլ գրողի որեւէ երկը շփոթել նրա գործերի հետ: Փոքրածավալ, մի քանի տողերից կազմված նյութերի, լրագրական սովորական հայտարարությունների մեջ անգամ Պարոնյանը մատնում է իրեն»¹³:

Պարոնյանն իր մանկական պարբերականում երեխաներին աստվածաշնչյան վերոհիշյալ պատմություններով խրատելու, սեփական սխալները գիտակցելու, ներողություն հայցելու, քրիստոնյային վայել դաստիարակելու մտադրությամբ է, որ անդրադարձել է Քրիստոսի պատմած «Անառակ որդի» առակին, որը Ղուկասի Ավետարանում է:

«Թատրոն, բարեկամ մանկանց» պարբերականում ընթերցելով «Անառակ որդի» առակը՝ առաջին հայացքից տեսնում ենք որդի, որն իրեն բաժին հասած ժառանգությունը վերցնում եւ հեռանում է հայրական տնից՝ այն միայնակ վայելելու ցանկությամբ: Ամբողջ ունեցվածքը վատնելուց ու կորցնելուց հետո, որպեսզի սովից չմեռնի, ինչ-որ մեկի մոտ ծառայության է անցնում: Սակայն ապարդյուն: Նույնիսկ օրվա հա-

¹² Հ. ՄԱՏԻՎՅԱՆ, «Երեխա» հասկացույթը կրոնական հայեցակարգում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ, 2011, թիվ 14, էջ 136:

¹³ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հ. Պարոնյանի գրական ժառանգության շուրջը, ՀՍՄԻ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, թիվ 6, 1953, էջ 65:

ցին արժանանալ չի կարողանում: Վերջապես հիշում է, որ ունի հայր, որից կարող է ներողություն խնդրել: Հայրը հեռվից տեսնում է տուն վերադարձող որդուն եւ ընդառաջ վազելով՝ փարվում նրան: Ամոթահար որդին հորից ներում է խնդրում: «Ինչ հիանալի տեսարան, անառակ որդին իր յանցանքը կը խոստովանի եւ մեղայ կըսէ սրտանց. գթասիրտ հայրը կընդունի անոր զղջումը եւ ուրախութիւն ընելու համար ամենէն պարարտ կովը մորթել կուտայ. հարկ ու հարսնիք էր այն օրն իրեն համար»¹⁴:

Բարոյական այս սքանչելի առակի առանցքում տեսնում ենք անառակ, բայց զղջացող որդու եւ գթած ու ներող հոր, որը խորհրդապատկերում է Հայր Աստծուն եւ քրիստոնյա մարդուն, որ վատնում է Աստծու տված իր ողջ ունեցվածքը՝ միտք, առողջություն, ժամանակ, պարգեւներ, շնորհք, մի խոսքով՝ ամեն բան, ինչ անհրաժեշտ է աստվածապաշտ կյանք ապրելու համար:

«Ուրեմն, խրատական այս պատմութիւնը,— նկատում է Տ. Զաքարիա Ժ. վրդ. Բաղումյանը,— ապաշխարության, զղջման, ներողամտության եւ մարդուս հանդեպ Աստծու անսահման ողորմածության եւ անպայմանավոր սիրո մասին է: Այլ խոսքով՝ առակը պատկերում է քրիստոնյաներիս կյանքը՝ անկումներով եւ վերելքներով, զանազան մեղքերին հակվածությամբ ու նրանց դեմ անտեղիտալի պայքարներով»¹⁵:

Բայց անառակ քրիստոնյան, այս ամենն օգտագործելով միայն իր անձնական հաճույքների, վայելքների, ցանկութիւնները բավարարելու, սեփական եսը գոհացնելու, սեփական փառքն ունենալու համար, կորցնում է ամեն ինչ: Բայց փառք Աստծուն, որ այդ ամենը մարդուն վերագտնելու հնարավորութիւն է ընձեռում այն ժամանակ, երբ նա հասկանում, գիտակցում եւ ընդունում է իր մեղավորության չափաբաժինը, որոշում է դարձի գալու հնարավորութիւնը չկորցնել: «Ինչ քառս ալ որ մարդու միտքը եւ կամքը հառաջացնեն, եւ մարդ ինքզինքը դնե ինքնակործանման անդունդի եզերքին,— նկատում է Թորգոմ արք. Մանուկյանը,— նորեն աստվածային միջամտութիւն մը զայն պիտի վերադարձնե ինքզինքին, հաստատելով կարգ ու կանոն, համաշափութիւն, եւ գիտակցութիւն տիեզերական կարգավորության մը, որուն մեջ մարդ

¹⁴ «Թատրոն, բարեկամ մանկանց», Կ. Պոլիս, 1876, թիւ 6, էջ 45:

¹⁵ Տ. Զաքարիա Ժ. վրդ. Բաղումեանի քարոզը՝ խօսուած Անառակի կիրակիին Ս. Գայեանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին, էջմիածին, 2022, Գ., էջ 29:

արարածը ունի եւ պիտի ունենա իր տեղը եւ պատասխանատվությունը, համաձայն Աստվածաշնչական հայտնություն¹⁶:

Հայր Աստված ներում է յուրաքանչյուրին, ով «Անառակ որդի» առաւելում նկարագրված զավակի պէս զղջալով հետ է դառնում ու ներում հայցում: Աստված գթասիրտ ու ներող է, ինչպէս այս պատմության հայրը, որ ընդառաջ վազեց որդուն, ներեց նրան ու մոռացավ որդու մեղքը:

Հայերեն առաջին մանկական «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի լույս ընծայված համարները խոսում են այն մասին, որ Հ. Պարոնյանը պարբերականը խմբագրելիս բնավ չի շրջանցել Սուրբ Գրքի նյութերը, ավելին՝ իր իսկ ընտրությամբ որոշ պատմություններ առանձնացրել ու երեխաներին հասկանալի ներկայացնելու ցանկությամբ լուսաբանել է սեփական հայեցակետից:

Պարբերականում հրապարակված աստվածաշնչյան պատմությունները ոչ միայն միտված էին խթանելու Կ. Պոլսի հայկական ընտանիքներում ապրող երեխաների դաստիարակությունը, այլեւ դրանց շնորհիվ Պարոնյանը փորձել է որոշակի աշխարհայացք ձեւավորել Աստծու եւ առ Աստված հավատքի վերաբերյալ, բայց այս հանգամանքն ամենեւին չի նշանակում, թե խմբագրի ցանկությունը հրաշագործությունների մասին պատմություններով երեխաներին տպավորելն է եղել: Ամենակարեւորն այն է, որ մանկական պարբերականում տեղ գտած պատմություններն այնպիսի վարպետությամբ են մշակված եւ շարադրված, որ համապատասխանում են մանկական տարիքի ընթերցանության պահանջներին եւ որոշ դեպքերում նաեւ յուրացվում որպէս հեքիաթ:

«Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում սուրբգրային նյութը քննության առնելու դրդապատճառները մի քանիսն են: Աստվածաշնչին անդրադառնալը, թերեւս, անհրաժեշտ նախապայման էր. դա առավել մեծացնում էր պարբերականի արժեքը, հարստացնում նրա բովանդակությունը, իսկ հայտնի պատմությունների մեկնաբանությունները ոչ միայն երեխաներին խրատելու պատեհ առիթ էին ստեղծում, այլեւ նպաստում էին նրանց դաստիարակությանը քրիստոնեական արժեհամակարգով:

«Թատրոն. բարեկամ մանկանց» մանկական պարբերականում աստվածաշնչյան թեմաների արծարծումը նպաստում էր ոչ միայն պոլսա-

¹⁶ Թ. Ա. Ր. Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ կրոնական դաստիարակությունը անցյալին եւ այսօր, էջմիածին, 1980, սեպտեմբեր, էջ 12:

հայ երեխաների շրջանում հոգեւոր արժեքների ձեւավորմանը, մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակութեան խորացմանը, այլեւ առհասարակ ազգապահպանութեանը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հակոբ Պարոնյան, Թատրոն. բարեկամ մանկանց, աստվածաշնչյան պատմություններ, դաստիարակություն:

РЕЗЮМЕ

Публикуемые номера первого армянского детского журнала «Театр: друг детей» были основаны также на духовных началах: при его редактировании А. Паронян нисколько не обошел библейскую тему, более того, некоторые истории он отобрал и со своей точки зрения пересказал с намерением преподнести их в доступной для детей форме.

Библейские рассказы, опубликованные в журнале, были не только призваны способствовать воспитанию детей, проживающих в армянских семьях Константинополя, но и благодаря им Паронян пытался сформировать у них определенное мировоззрение относительно Бога и веры в Бога, однако это обстоятельство не означает, что желание редактора состояло в том, чтобы только поразить детей красотой рассказов, мотивами чуда. Библейские сюжеты, о которых идет речь в детском журнале, разработаны с таким мастерством и написаны с таким глубокомыслием, что отвечают требованиям детского чтения, а в ряде случаев и усваиваются как сказки. В случае создания детской литературы в наше время вышеизложенные соображения заслуживают пристального внимания.

Итак, есть несколько причин для рассмотрения библейской темы в периодическом журнале «Театр: друг детей». Обращение к Библии было, пожалуй, необходимой предпосылкой, потому что благодаря этому ценность периодического журнала значительно возрастала, а толкования библейских рассказов на доступном детском языке не только создавали возможность дисциплинировать детей, но и способствовали их благородному и христианскому воспитанию.

Под редакцией Пароняна перасказ серии библейских историй, написанных для западноармянских детей в журнале «Театр: друг детей», является ядром для раскрытия, понимания и усвоения нравственного значения библейских историй и истин, а также изучения необходимости их присутствия в журнале.

SUMMARY

The published issues of the first Armenian children's periodical "Theater: Friend of Children" are based on the belief that when editing it, H. Paronyan did not bypass the biblical theme at all; moreover, he selected several stories and wrote them from his own point of view with the intention of presenting them in a way understandable for children.

The biblical stories published in the periodical were not only intended to contribute to the education of children living in Armenian families in Constantinople, but through them Paronyan tried to form in them a certain worldview regarding God and faith in God; however, this circumstance does not mean that the editor's desire was to impress the children with miraculous motives. The most important thing is that the biblical stories referred to in the children's periodical are developed with such skill and written with such depth that they meet the requirements of juvenile reading and, in some cases, are appropriated as fairy tales. In the case of the creation of children's literature, the above considerations are worthy of attention.

There are several reasons for addressing the biblical theme in the periodical "Theater: Friend of Children." Reference to the Bible was perhaps a necessary prerequisite, for by doing so the value of the periodical was greatly increased, and the interpretations of scriptural stories not only created an opportunity to discipline children, but also contributed to their virtuous and Christian upbringing.

Under the editorship of Paronyan, in the overview of stories written for Western Armenian children, the series of biblical stories published in "Theater: Friend of Children" are the core for uncovering the moral significance of biblical stories and exploring the necessity of their presence in the periodical.



ԻՎԵԹ ԹԱԶԱՐՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՄՄ, ԵՊՀ

ԱՆԻԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ԸՍՏ ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՃԱՆՋԱՆՅԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ (ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ, ՀՄՐ 423 ԺՈՂՈՎԱԾՈՒ)¹

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԺԹ. դարը գիտության մի շարք ոլորտների համար աննախագեղ զարթոնքի ժամանակաշրջան է: Գիտությունների զարգացումը որակապես ավելի բարձ աստիճանի հասցնելու համար անհրաժեշտ էին լրացուցիչ նյութեր՝ պատկերային մեծաթիվ փաստարկներ եւ տեղեկություններ: Եւ ահա սկսվեց լուսանկարչության դարաշրջանը, եւ դա զգալիորեն նպաստեց աշխարհի ու բնության վերաբերյալ մարդկանց հայացքների փոփոխությանը: Հայտնագործման առաջին իսկ օրից լուսանկարչությունն իր անուրանալի ներդրումն է ունեցել գիտության տարբեր ճյուղերի զարգացման գործում:

ԺԹ. դարի վերջում եւ Ի. դարի սկզբում առանձնապես խորացավ հետաքրքրությունը հնագիտության նկատմամբ: Դրան մեծապես խթանեցին պատմաբանների աշխատությունները եւ դրանց էջերում մեծ թիվ կազմող լուսանկարները, որոնց օգնությամբ պատմական, հետազայում նաեւ հնագիտական հետազոտություններն առավել դյուրին եւ արդյունավետ էին իրականացվում: Սկզբնական շրջանում առավել կարեւորվում էր լուսանկարչություն-ճարտարապետություն, քան լուսանկարչություն-մարդաբանություն կապը: Այս շրջանում կազմավորվում էին տարբեր արշավախմբեր, որոնք մեկնում էին քիչ ուսումնասիրված հնավայրեր: Հայ իրականության մեջ պատմական հուշարձանների լուսանկարների միջոցով փաստագրողների առաջին ներկայացուցիչներից է Հովհաննես Քյուրքչյանը, որը հրատարակեց «Ավերք Հայաստանի»

^{1*} Ստացվել է՝ 8.05.2023, գրախոսվել է՝ 16.05.2023: Էլ. հասցե՝ yvettetaj@yahoo.com:

Անի» խորագիրը կրող՝ Անիի պատկերներով առաջին լուսանկարչական ժողովածուն²:

Ի. դարի սկզբին անվանի արեւելագետ, հայագետ, հնագետ Նիկոլայոս Մառը եւ նշանավոր գիտնական, ճարտարապետ, հնագետ Թորոս Թորամանյանը իրենց արշավախմբերով կատարած գիտական ուսումնասիրությունների ընթացքում նույնպես լուսանկարներ են արել: Այս գործում իր մեծ դերակատարությունն ունի նաեւ Կարապետ Հովհանջանյանը, որը հայկական բնաշխարհի տարբեր անկյուններում լուսանկարել է քանդակներ, փորագրություններ, հնագիտական շինություններ, զանազան հնություններ, որոնք գրավել են նրա ուշադրությունը եւ հետաքրքրական են թվացել:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԺԹ. դարի հասարակական գործիչ, գրող, հնագետ եւ լուսանկարիչ Կարապետ Հովհանջանյանի (Յովհանջանեանց) կյանքի մասին սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել: 1860-ական թթ. վերջից մինչեւ 1870-ականների սկիզբը «Մեղու Հայաստանի» պարբերականին ալբյումներով հրատարակված նոր գործիչներ են միանում: Այդ անձանց թվում էր Կարապետ Հովհանջանյանը՝ նույն ինքը՝ Կրպեն: Պարբերականի աշխատակիցներն ազգային պահպանողական գաղափարախոսության կրողներ էին, եւ նոր դեմքերի շնորհիվ «Մեղու Հայաստանի» պարբերականի մի շարք հրապարակախոսական նյութեր ազատական երանգներ են ստանում³: Կարապետ Հովհանջանյանն աշխատակցել է նաեւ «Փարոս Հայաստանի», «Մշակ», «Ազգագրական հանդես», «Բազմավեպ» եւ այլ պարբերականներին: Նա ճանապարհորդում էր, լուսանկարում եւ իր ուսումնասիրություններն ու լուսանկարները հրապարակում մամուլի էջերում:

Կարապետ Հովհանջանյանը 1878 թ. «Մեղու Հայաստանի»⁴ պարբերականի 40-րդ համարում հրատարակած մի նյութում նշում է, որ առա-

² S. Kurkdjian's Stereoscopic photographs of Ani, <http://www.virtualani.org/kurkdjian/>:

³ ԳԵՒՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆ, «Մեղու Հայաստանին 1860–1880-ական թթ. Ալեքսանդրապոլի մասին», Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, № 13, Գյումրի, 2010, էջ 128–134:

⁴ Քաղաքական, բանասիրական եւ առեւտրային շաբաթաթերթ, որը 1873 թվականից հրատարակվել է որպես օրաթերթ: Լույս է տեսել 1858–1886 թթ. Թիֆլիսում:

ջին անգամ Անիում եղել է 1873 թ., եւ այդ տարիներին ընթացքում Անին ավելի է ավերվել: Նա ավելացնում է, որ Հայաստանի հին մայրաքաղաքը փրկելու համար ամեն ջանք պետք է գործադրել: Նույն շրջանում հրատարակված «Ճանապարհորդութիւն յԱնի» վերտառությամբ ուղեգրությունից պարզվում է, որ Հովհանջանյանն Ալեքսանդրապոլ գավառի նույնանուն քաղաքից է: Այդ հոգվածում Հովհանջանյանը մանրամասն նկարագրում է նաեւ Անի տանող ճանապարհը: Հոգվածից հայտնի է դառնում, որ ճանապարհորդության ընթացքում հեղինակին ուղեկցել են իր բարեկամները⁵:

1878–1880 թթ. մամուլի էջերում Կարսի եւ Ալեքսանդրապոլի գյուղերի մասին հրատարակվում են նյութեր, որոնցից մի քանիսը պատկանում են Հովհանջանյանի գրչին: Հոգվածագիրն անդրադառնում է Կարսի պատմությանը, բնակիչների կենցաղին, ինչպես նաեւ քաղաքում ապրող հայերին եւ օտարազգիներին: Հեղինակը ներկայացնում է Շիրակ գավառը, Արագած լեռան ստորոտին գտնվող Թափաղուլակ հայ կաթուղիկ գյուղը, տարածքի կլիման, տեղաբնակներին եւ նրանց ապրուստի միջոցները⁶:

Մեկ այլ հոգված Հովհանջանյանը նվիրել է Ալեքսանդրապոլին մերձակա Չերքեզի ձորին: Հրատարակված նյութից պարզ է դառնում է, որ 1868–1869 թթ. ռուս զինվորները նույն վայրում շինարարական աշխատանքներ կատարելիս կարմիր քարերով կառուցված եկեղեցի են հայտնաբերել: Եկեղեցու պատերից մեկին ընթերցվել է հետեւյալ արձանագրությունը. «Աստուած ողորմեա՛ մեզ»: Մոտակայքում գտնվել են նաեւ բազմաթիվ տապանաքարեր, որոնք, ցավոք, շինարարական աշխատանքների արդյունքում ոչնչացվել են:

Կարապետ Հովհանջանյանը, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին գտնվելով Կարսում, նկատում է, որ պատերազմական իրավիճակում անգամ հայերը պահպանում են նախնիների ավանդույթներն ու ազգային սովորույթները: Իր տպավորությունները նա ամբողջացրել է Կարսին նվիրված գրքում, որը հրատարակվել է ավելի ուշ՝ 1893 թ.⁷:

⁵ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՁԱՆՆԵՆՅ, «Ճանապարհորդութիւն յԱնի», «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1878, № 40:

⁶ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1879, № 28:

⁷ ԿՐՊԵ, Կարս քաղաք, Մոսկվա, 1893:

Կարապետ Հովհաննջանյանի գրչին են պատկանում նաեւ չափածո գրվածքներ: Նրա «Տարոնցի հայի արտասուքը» եւ «Տարոնցի կնոջ օր-օրը» վերնագրով բանաստեղծությունները տպագրվել են «Փարոս Հայաստանի» ամսագրում: Կա նաեւ մեկ այլ ուշագրավ փաստ նրա աշուղ լինելու մասին, սակայն ասվածը հաստատող հավելյալ տեղեկություններ հնարավոր չեղավ գտնել: Հ. Հարությունյանը «Կարսի եւ Ալեքսանդրապոլի աշուղական փոխառնակցությունները XIX դ.»⁸ հոդվածում հիշատակում է «էս ինչ թավուր քար ջիկար իմ» վերնագրով երգը, որի հեղինակը Կրպե անունով մի աշուղ է:

1881 թվականից սկսած՝ Կ. Հովհաննջանյանն արդեն իր հեղինակած նյութերին կից հրապարակում է նաեւ լուսանկարներ: Դրանից առաջ հրատարակված հոդվածներին նա կցում էր միայն իր գծանկարները: Ասվածի վկայություններն են 1881 թ. «Փարոս Հայաստանի» թերթի 4-րդ համարում Ալիմու վանքի, Բագնայրի ուխտի, Խժկոնքի մենաստաններին նվիրված աշխատանքները: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ նա մինչ 1881 թ. լուսանկարչությամբ չի զբաղվել:

Կարապետ Հովհաննջանյանը լուսանկարներ արել է թե՛ իր պատրաստած նյութերի եւ թե՛ այլ հեղինակների հետազոտությունների համար: Դա ընդունված երեւույթ էր այդ ժամանակներում, քանի որ ուղեւորություններն առնչվում էին մեծ դժվարությունների ու բարդությունների հետ: Այս կերպ գիտնականները հնարավորություն էին ունենում իրենց նյութերով ու լուսանկարներով օժանդակել միմյանց, ուստի ծանոթների եւ բարեկամների միջնորդությամբ դիմում էին ինչ-որ մեկին, որը կկարողանար լուսանկարների օգնությամբ լրացնել եւ ամբողջացնել իրենց ուսումնասիրությունները: Ճարտարապետական շինություններ լուսանկարելիս մասնագետի համար հուշարձանը հնարավորինս տեսանելի դարձնելու հանգամանքը առաջնային խնդիրներից է, որի համար կարելու դեր ունի լույսի ու ստվերի ճշգրիտ ընտրությունը: Այս հարցում Կարապետ Հովհաննջանյանն օգտագործել է իր ժամանակներում լուսանկարչությամբ զբաղվող օտարների կուտակած փորձը, որեւէ պատմական հուշարձան վավերագրելու նպատակով ժամեր շարունակ համբերությամբ սպասել է, որ առաջանա անհրաժեշտ որակ ստանալու համար

⁸ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Կարսի եւ Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթների փոխառնակցությունները XIX դ. (մաս Ա.)», Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, № 16, Գյումրի, 2013, էջ 72–79:

պահանջվող լույսի ու ստվերի համադրությունը, եւ ստեղծվեր լուսանկարելու ամենից հարմար պահը: Մասնագիտական վարպետությամբ կատարված լուսանկարները հնարավորություն էին տալիս հետազոտողներին պատկերացում կազմելու ճարտարապետական կոթողների դիրքի, կառուցվածքի եւ այլ առանձնահատկությունների մասին:

Հայտնի իրողություն է, որ Ղեւոնդ Ալիշանն իր կոթողային ուսումնասիրություններն ստեղծելիս համագործակցել է հնագետների, ճարտարապետների, արվեստագետների ու ճանապարհորդների հետ: Նրանցից մեկն էր Կարապետ Հովհանջանյանը, որին հանձնարարում է, հուշարձանները լուսանկարելուց բացի, նաեւ տեղանքի մասին ճշգրտումներ անել⁹: Ալիշանը «Շիրակ» աշխատության մեջ նշում է. «Ըստ այսոցիկ եւ այլք, ընդ որս դասելի են եւ համառօտ ստորագրութիւնք այցելուաց Անուշ, հրատարակեալք յազգային օրագիրս Տփղեաց, եւ միահաւաք քարտէսք տեսարանաց նորին, վիմագրեալք ի Յովհ. Տէր Աբրահամեան՝ ի Կաֆա, եւ ի Կարապետէ Յովհանջանեանց ի Մոսկուա, որպէս եւ լուսագրեալք ի Նիկիտ եւ Մակարովիչ օտարազգեաց, զորս մեր չէ տեսեալ»¹⁰:

Ճանապարհորդության ընթացքում Հովհանջանյանին ուղեկցում էր Սարգիս Ահարոնյանց անունով մի երիտասարդ: «Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն» ուղեգրության մեջ Հովհանջանյանը մանրամասն ներկայացնում է իր անցած ճանապարհը՝ նկարագրելով նաեւ հուշարձանները լուսանկարելու ընթացքը¹¹: Այստեղ թեեւ Հովհանջանյանի ուշադրության կենտրոնում խժկոնքն ու Մրենն էին, սակայն անդրադարձել է նաեւ այլ հնավայրերի: Նրա յուրաքանչյուր լուսանկար կարող է ուսումնասիրության հիմք դառնալ ճարտարապետների եւ պատմաբանների համար:

Այս շրջանում Հովհանջանյանի ստեղծագործության գլխավոր նյութը բնությունն է եւ բնության մեջ մարդու կերտած նշանավոր հուշարձանները, որոնք կազմում են մեր պատմության մի մասը: Այդ հուշարձանների արտաքին տեսքն արվեստագետի միջամտությամբ հաճախ կենդանություն է ստանում եւ բանաստեղծական անմոռաց տողեր արթնացնում դիտողի հոգում: Հովհանջանյանը հայրենասիրական ջերմ խանդավառությամբ է վերաբերվում լուսանկարչությանը, ցանկանում է

⁹ Ս. ՇՏԻԿՅԱՆ, Ալիշանը հայ մտավորականների հուշերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, հմր. 6, էջ 37:

¹⁰ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 109:

¹¹ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՁԱՆՅԱՆՅ, Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն, Վենետիկ, 1885, էջ 10:

լուսանկարի միջոցով հավերժացնել բնությունը՝ բարձրաբերձ լեռներով, դաշտերով, անտառներով, լճակներով ու գետերով: Չնայած հուշարձանները մարդու ձեռքի գործն են, բայց, միեւնույն ժամանակ, հեղինակն ինչ-ինչ մտավախություններ ուներ, որ նույն մարդը կարող է դրանց կործանման պատճառ դառնալ: Հովհաննջանյանի մտահոգություններն անտեղի չէին, քանի որ այժմ այդ հուշարձաններից շատերը փաստացի գոյություն չունեն. մի մասը ոչնչացել է բնական եւ հասարակական աղետների հետեւանքով, մյուս մասը՝ տարբեր ժամանակներում ի հայտ եկած իշխանավորների կամքով: Այս առումով կարող ենք արձանագրել, որ հեռատես արվեստագետը հասել է իր նպատակին՝ հավերժացնելով այդ ամենը:

Հովհաննջանյանը գրել է նաեւ արձակ գործեր: Նրա պատմվածքների մի մասը հայկական ավանդությունների գրական մշակումներ են: Մի շարք պատմվածքներում պատկերել է ժողովրդի կյանքից առնված դրվագներ: Դրանք տպագրվել են «Մեղու Հայաստանի», «Նոր-դար», «Լումայ» եւ «Արձագանք» պարբերականներում: 1893 թ. Հովհաննջանյանն այդ պատմվածքները հրատարակում է առանձին գրքով՝ «Պատկերներ կյանքից»¹² խորագրով, իսկ 1904 թ. ընթերցողի դատին է հանձնում «Պատկերներ եւ պատմվածքներ»¹³ ժողովածուն, որի էջերում հին գրվածքների կողքին գետեղել է նորերը:

Հովհաննջանյանի բազմաթիվ լուսանկարներ պատմական հուշարձանների միայն արտաքին տեսքը չէ, որ արձանագրել են. դրանցից յուրաքանչյուրը բացառիկ արժեք է ներկայացնում՝ նպաստելով ճարտարապետական կառույցի ամբողջականությունը հասկանալուն:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ № 423 ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Կարապետ Հովհաննջանյանը 1904 թ. լուսանկարների մի ժողովածու է նվիրում էջմիածնի վարդապետ Տեր-Մովսիսյանին: Այժմ այդ ժողովածուն պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանի լուսանկարների ժողովածուների հավաքածուի մեջ՝ № 423 համարի տակ: Գրադարանում պահվում է նաեւ № 425 լուսանկարական ժողովածուն¹⁴:

¹² Կ Ր Պ Ե, Պատկերներ կյանքից, Ալեքսանդրապոլ, 1893:

¹³ Կ Ր Պ Ե, Պատկերներ եւ պատմվածքներ, Նոր Նախիջևան, 1904:

¹⁴ Այս ժողովածուի լուսանկարներն իրենց որակային հատկանիշներով զիջում են խնդրո առարկա ժողովածուի լուսանկարներին:

29 լուսանկարով, որոնց հեղինակը նույնպես Կարապետ Հովհանջանյանն է: Համեմատելով երկու ժողովածուների լուսանկարներն ու գնահատելով հորինվածքային եւ ընդհանրապես որակական հատկանիշները՝ մեր ուսումնասիրության համար ընտրեցինք Հ^{մր} 423 ժողովածուն: Այստեղ ընդգրկված է 22 լուսանկար, որոնք հեղինակը վերնագրել է եւ ստորագրել է դարձերեսներին:

Ժողովածուի առաջին նկարը Հոռոմոսի հաղթական մարն է, որի ձախ կամարի թմբուկը եւ գմբեթը բացակայում են (նկ. 2բ): Կամարի տակ երեւում է մի քահանա, որը, ըստ Հովհանջանյանի հուշերի, փոխարինում էր այդ ժամանակ բացակայող Հոռոմոսի քահանա Հակոբ վրդ. Ախալցխացուն: Նկարի ձախ հատվածում տեսանելի է երեք ձիով մի կառք, որում նստած է մի տղամարդ: Այդ ժամանակներում որոշ լուսանկարիչներ ճարտարապետական որեւէ կառույց լուսանկարելիս անպայման մարդկային մի կերպար կամ լուսանկարչական գործիք էին պատկերում: Այն ապահովում էր դիտողի՝ ճարտարապետական տվյալ հուշարձանի համաշափության ճիշտ ընկալումը: Այս լուսանկարում քահանայի եւ կառքի ներկայությունը գուցե ոչ այնքան պատահականությունն արդյունք է, որքան գիտակցված մոտեցում: Կառքում նստած տղամարդու կողքին պարկեր են երեւում: Հնարավոր է, որ սա Հովհանջանյանի լուսանկարչական գործիքներով լի պարկն է: Լուսանկարների ժողովածուի հաջորդ նկարը Անիի կիսավեր գմբեթով Սբ. Գրիգոր Լուսավորիչ կամ Տիգրան Հոնենցի եկեղեցին է (նկ. 3ա): Լուսանկարի մեծ մասը զբաղեցնում է եկեղեցին, որի մուտքի մոտ՝ քարե փլատակների վրա, նկատելի է նստած դիրքով մորուքավոր մի տղամարդ՝ պարանոցին խաչ: Կարծում ենք, որ նա Հովհանջանյանի գրառումներից մեզ հայտնի՝ իրեն ուղեկցող հոգեւորական Հակոբ Մուրատեսյանն է: Նրա կողքին եւս մի տղամարդ է երեւում:

Հաջորդն Ախուրյանի կիրճում գտնվող Կուսանաց կիսավեր վանքն է, որի տակ սխալմամբ գրված է. «Սբ. Գեորգ եկեղեցի Անուշ» (նկ. 4բ):

Լուսանկարի ներքեւի աջ հատվածում շինության վրա նստած մի տղամարդ է: Ըստ երեւույթին՝ դա այն նույն տղամարդն է, որը Հոռոմոսի կամարների եւ Տիգրան Հոնենցի եկեղեցու մոտ է լուսանկարվել: Հետնախորքում տեսնում ենք քարքարոտ մի լեռ եւ Մանուկհրի մզկիթը¹⁵:

¹⁵ Մանուկհրի մզկիթը (թուրքերեն՝ Ebul Manucehr Camii) գտնվում է Անի քաղաքի հարավային մասում՝ Ախուրյան գետի ձորեզրին: Կառուցվել է Բագրատունիների օրոք՝ Ժ.-ԺԱ. դարերում՝ որպես քաղաքային մաքսատան կամ պահակատան շենք: Ավելին տես

Մեզ հայտնի չէ՝ արդյո՞ք լուսանկարիչը միտումնավոր կերպով է միեւնույն տեսարանում մեկտեղել մասմեդական եւ քրիստոնեական հոգեւոր շինությունները, թե՞ պատահականորեն է ստացվել: Ամեն դեպքում, մզկիթը չէր կարող տեսարանից դուրս մնալ, եթե հաշվի առնենք այն դիտանկյունը, որ ընտրված է լուսանկարն անելիս: Այս լուսանկարի դարձերեսին գրված է. «Սբ. Գէորգ անուանակոչութիւնը ճիշտ չէ (Ալիշանի սխալմունքի հետեւանքով, որը նմանաձեւության պատճառով շփոթել է Ղոշավանքի¹⁶ Սբ. Գէորգի հետ), այլ Ան[ի]ում Ախուրեանի ափի մոտ քարափին լանջին կառուցւած Կուսանաց վանքն է»:

Հաջորդ լուսանկարի մակագրությունն է. «Ճակատ արքունի ապարանից Անույ», որն իրականում քաղաքի հյուսիսարեւելյան կողմում գտնվող՝ «Պարոնի պալատ» անունով հայտնի շինությունն է: Նկարում տեսնում ենք մուգ հագուստով մի տղամարդու, որն ըստ երեւոյթին՝ Տիգրան Հոնենցի եկեղեցում գտնվող անձն է (նկ. 5ա):

Հաջորդ լուսանկարում Անիի Աբուղամբենց Սբ. Գրիգոր եկեղեցին է (նկ. 6բ): Հովհանջանյանի նախորդ գործերի նման այս լուսանկարի մեծ մասը նույնպես զբաղեցնում է հուշարձանը: Լուսանկարի աջ կողմում եկեղեցին է, որի մոտ նստած է մեզ ծանոթ մուգ հագուստով տղամարդը՝ ձախ ձեռքը ոտքին հենած, իսկ աջը՝ ծնոտին: Նկարելու համար ընտրած դիտանկյունը հետաքրքիր է: Թվում է՝ ներքեւի աջ անկյունի եւ գմբեթի ձախ անկյունի ուղղությամբ շինությունը շարունակում է փլուզվել: Այնուամենայնիվ, եկեղեցին դեռ կանգուն է:

Մյուս նկարում Մանուչեհրի կիսավեր մզկիթն է՝ ներկայացված իր մինարեթով (նկ. 7ա): Մեր նկարագրած երրորդ լուսանկարի խորքում արդեն տեսանելի էր Մանուչեհրի մզկիթը, որն այստեղ հակառակ կողմից է լուսանկարված: Հովհանջանյանը շինության մասին հնարավորինս շատ պատկերային տեղեկություններ փոխանցելու նպատակով ընտրել է ավելի ճիշտ դիտանկյուն, որի արդյունքում միաժամանակ կարող ենք կարծիք կազմել մզկիթի՝ եւ արտաքին, եւ ներքին վիճակի վերաբերյալ: Ակնհայտ է, որ մինարեն կանգուն է եւ ավելի լավ է պահ-

ՎԱՐԱՋԳԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Անի քաղաքը, Երեւան, 1964, էջ 79–80, Иосиф Орбели, Краткий путеводитель по городищу Ани, СПб, 1910, էջ 5–7:

Հստ Կ. Մաթեոսյանի ենթագրության՝ շինությունն սկզբնապես Անիի կաթողիկոսարանն էր (տես ԿԱՐԵՆ ՄԱԹԵՆՈՍՅԱՆ, Անին եւ անեցիները, Երեւան, 2021, էջ 31–32):

¹⁶ Ղոշավանքը Հռոմոսի վանքն է:

պանվել, քան բուն շինությունը: Շինության առջեւ՝ քարակույտերի վրա, տեսանելի է երկու անձ, որոնցից մեկը կենտրոնում է՝ իշխող դիրքով, իսկ մյուսը ձախ կողմում համեստորեն կանգնած է: Կենտրոնում՝ ձեռքերը գոտկատեղին, ինքնավստահ կեցվածքով կանգնած տղամարդը նախորդ լուսանկարներից մեզ արդեն հայտնի է, իսկ մյուսը, հավանաբար, տեղանքին քաջածանոթ ուղեկցողն է:

Հաջորդ երկու լուսանկարները նվիրված են Անիի Սբ. Առաքելոց եկեղեցուն¹⁷: Երկու գործերից երեւում է, որ եկեղեցու մեծ մասն ավերված է: Առաջինում ներկայացված է եկեղեցու գավիթը, իսկ երկրորդում՝ ճակատային մասից մի հատված, որի վրա մասամբ պահպանվել է եկեղեցու վիմագիր արձանագրությունը (նկ. 8բ եւ 9ա):

Մյուս լուսանկարում Հովհաննջանյանը փաստագրել է Անիի Սբ. Փրկիչ եկեղեցին, որի միայն մեկ երկրորդն է այսօր կանգուն: Փլուզումը տեղի է ունեցել այն մասում (մուտքի կողմից), որն ամբողջական է Հովհաննջանյանի լուսանկարում (նկ. 10բ):

Հովհաննջանյանն անտարբեր չի անցել Անիի Սբ. Աստվածածին եկեղեցու (Անիի Մայր տաճար) կողքով՝ անմահացնելով ճարտարապետական այդ կոթողը (նկ. 11ա): Ի. դարի սկզբին Անի այցելածներից շատերը Մայր տաճարը լուսանկարել են նույն դիտանկյունից, որից Հովհաննջանյանն է նկարել: Նրանց թվում էին Հ. Քյուրթչյանը, Գ. Բաշինջաղյանը, Ա. Ֆեթվաճյանը եւ այլք:

Ժողովածուում ընդգրկված աշխատանքներից հաջորդի տակ մակագրված է. «Կամարի ներքնայարկի արքունի ապարանք Անույ», որը, սակայն, վերը նշված «Պարոնի պալատի» նեքին հատվածն է (նկ. 12բ):

Մյուս երկու լուսանկարներում ներկայացված են Անիի պարսպները (նկ. 13ա եւ 14բ): Առաջինում տեսնում ենք մուգ հագուստով մի տղամարդու, որը ստվերում կանգնելու պատճառով այդքան էլ աչքի չի ընկնում եւ կարծես ձուլված է հուշարձանի հենքին: Անկասկած, այստեղ լուսանկարիչը պարսպի մոտավոր չափերը դիտողին ընկալելի դարձնելու համար նպատակ է ունեցել տղամարդու միջոցով լուծել համաշափության խնդիրը:

¹⁷ Եկեղեցին կառուցվել է 1004–1031 թթ.: Ներսիս քառախորան, չորս անկյուններում մատուռ-ավանդատներով, արտաքուստ քառակուսի, հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է: Ավելին տես «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան (խմբ.՝ Հովհաննես Այվազյան), Երեւան, 2002, էջ 64–65:

Հաջորդ լուսանկարում ներկայացված է Խժկոնքի վանական համալիրի Սբ. Սարգիս եկեղեցուն կից որմնանփակ խաչարձանը (նկ. 15ա): Վանական համալիրը հայտնի է թուրքերեն Բեշքիլիսե (Հինգ եկեղեցի) անվամբ: Այդպես է գրված նաև լուսանկարի տակ: Հովհանջանյանն այս խաչքարը յուրահատուկ կերպով է լուսանկարել: Լուսանկարելու համար ընտրելով ներքեկից վերեւ դիտանկյունը՝ շեշտադրել է խաչքարի կոթողային լինելու հանգամանքը եւ խորհրդավորությունը: Այս բացառիկ հուշարձանն այժմ ամբողջովին ոչնչացված է:

Հաջորդ աշխատանքը նվիրված է Խժկոնքի վանական համալիրի Սբ. Սարգիս եկեղեցուն (նկ. 16բ): Նկարի մեծ մասը գրավում է եկեղեցին, իսկ ձախ հատվածում մեզ հայտնի խաչքարն է: Ի տարբերություն նախորդ աշխատանքների՝ այս լուսանկարը մարդկային կերպարների շնորհիվ կենդանություն է ձեռք բերել: Արդեն նկարագրած գործերում հանդիպում են խիստ արհեստական դիրքերով լուսանկարված տղամարդկանց մի քանի կերպարներ, իսկ այս նկարում պատկերված են բազմաթիվ մարդիկ (այդ թվում՝ մի կին ու երկու երեխա), եւ նրանք ու հուշարձանը լրացնում են միմյանց: Հովհանջանյանն իր հրապարակումներից մեկում նշում է, որ եկեղեցին գտնվում է անմխիթար վիճակում: Նա նկատում է, որ ուխտավորների այցելությունները նվազել են, եկեղեցին նորոգելու համար անհրաժեշտ է դրամական աջակցություն, եւ միայն այդ դեպքում ուխտավորների թվի ավելացում կարող է արձանագրվել:

Հաջորդը՝ բարձրության վրա երեւացողը, Տեկորից ոչ հեռու գտնվող Ագարակի (էգրեկ) Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցին է, որն Ի. դարասկզբին դեռեւս կանգուն է եղել, իսկ այժմ հիմնավեր է (նկ. 17ա): Անմիջապես աչքի է ընկնում գմբեթի խաչը: Կարծում ենք, որ տվյալ լուսանկարն իր ժամանակաշրջանի համար կարեւոր դեր է ունեցել ճարտարապետների եւ պատմաբանների համար: Այստեղ երեւում է, որ պատուհանները քարերով փակված են: Եթե ուսումնասիրողները տվյալ հուշարձանի՝ ավելի վաղ շրջանից լուսանկար ունենային, կարող էին համեմատել Հովհանջանյանի լուսանկարի հետ եւ պատկերացում կազմել տարիների ընթացքում հուշարձանի փոփոխության ենթարկվելու մասին: Այստեղ լուսանկարները կարող ենք դիտարկել որպես պատկերային վկայություն՝ փաստաթուղթ: Այս լուսանկարում նույնպես տեսանելի է մի տղամարդ, որը դժվար թե պատահաբար հայտնված լիներ:

Կարծում ենք, ինչպես մյուս դեպքերում, տղամարդուն Հովնաջանյանը լուսանկարել է զուտ հուշարձանի չափերի մասին դիտողին ընդհանուր պատկերացում տալու միտումով:

Բավական յուրահատուկ է Տեկորի եկեղեցու լուսանկարը (նկ. 18բ), որի հետաքրքրությունը պայմանավորված է լուսանկարչի ընտրած դիտանկյունով: Աստիճանավոր պատվանդանի վրա կարծես ընկած է եկեղեցու ծանրությունը, որը խորհրդանշում է հայոց վիշտը: Այս կադրը տեղեկատվական կարեւոր աղբյուր է պարունակում: Մուտքի բարավորները կամարների նման պարզ երեւում են, գմբեթը կանգուն է: Տեկորի եկեղեցին, որը հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության առանցքային կառույցներից է, այժմ ամբողջությամբ ավերակի է վերածված:

Հովհանջանյանի լուսանկարների մեծ մասում պատկերված են խժկոնքը եւ Մրենը: Այդ լուսանկարների մի մասը զետեղված է N^o 423 ժողովածուում, մյուսները կարելի է գտնել «Բազմավեպում», Ղ. Ալիշանի «Այրարատում» եւ իր՝ Հովհանջանյանի «Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն» ուղեգրությունում: Ժողովածուի մաս է կազմում Մրենի արեւելյան կողմից արված լուսանկարը (նկ. 19ա): Այստեղ նույնպես դիտանկյունն ընտրված է ոչ պատահականորեն: Լուսանկարն արվել է բավական հեռվից, որպեսզի դիտողը կարողանա շինության վիճակի վերաբերյալ ընդհանուր գաղափար կազմել: Հուշարձանը բարվոք վիճակում չէ: Եկեղեցու առջեւ տեսանելի է հինգ անձ, որոնցից երկուսը քահանա են, մյուս երկուսի ձեռքին զենքեր կան: Ենթադրաբար՝ զինված մարդիկ Հովհանջանյանի գրվածքում հիշատակված այն անձինք են, որոնք Մրենի ճանապարհին ուղեկցում էին նրանց¹⁸: «Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն» ճամփորդական նոթերում տպագրված է Մրենի արեւելյան եւ հյուսիսային կողմից արված երկու լուսանկար:

Հովհանջանյանը յուրովի մոտեցում է ցուցաբերել Մրենի խաչքարերին՝ մեկը ներկայացնելով լուսանկարի (նկ. 20բ), մյուսը՝ գծանկարի տեսքով, որը տպագրվել է «Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն» ուղեգրության Ե. տախտակում: Խաչքարի իրական չափը ցույց տալու նպատակադրումով հեղինակը լուսանկարել է մի կանգնած տղամարդու: Իր դերից ձանձրացած տղամարդուն չի հետաքրքրում իր դիմանկարը,

¹⁸ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՁԱՆՆԵԱՆՅ, Ալեքսանդրապոլից մինչեւ ի Մրեն, էջ 14:

նա ուղղակի, պարտականությունից ելնելով, լուսանկարվել է: Լուսանկարների զննումից ակնհայտորեն երևում է արվեստագետի գործուն վերաբերմունքն առարկայի (օբյեկտ) նկատմամբ: Այդ վերաբերմունքն արտահայտվում է ե՛լ լուսանկարի դիտանկյան, ե՛լ լույսի ու ստվերների բաշխման, ե՛լ յուրատեսակ ֆոտոպլենների հաղորդման ու նկարահանման պահն ընտրելու միջոցով: Հավանաբար Հովհանջանյանը տղամարդուն բավական երկար է սպասեցրել, որպեսզի իր պատկերացրած կատարյալ լույսն ու ստվերը կարողանա ստանալ: Մյուս կողմից՝ սա հիշեցնում է ԺԹ. դարի ազգային-քաղաքական հանրահայտ խորհրդանիշ «Մայր Հայաստան» պատկերաշարի՝ «Ոգի Հայաստանի» կոչվող մշակումը (Ճանիկ Արամյան)¹⁹: Ավերակների վրա նստած կերպարը ժամանակին լայնորեն տարածված էր ոչ միայն լուսանկարչության մեջ, այլև գեղանկարչության, գորգագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառներում:

Հաջորդ նկարի խորապատկերում Սբ. Շուշան եկեղեցին է (Ախուրյանի ափին, այժմ ՀՀ տարածքում), որը, համեմատած նախորդների հետ, որպես ուսումնասիրության աղբյուր, հետաքրքրություն չի ներկայացնում (նկ. 21ա):

«Աւերակ եկեղեցի յայգեստանեացս Բագարանայ» կոչված համար 22բ լուսանկարում պատկերված է է. դարի առաջին կեսին կառուցված Սբ. Թադեոս եկեղեցին: Բագարանում հայտնի է երեք եկեղեցի՝ Սբ. Գեւորգ, Սբ. Շուշան եւ Սբ. Թադեոս: Լուսանկարից երևում է, որ եկեղեցին բավականին վնասված է, բացակայում է գմբեթը, սակայն շինությունը կանգուն է: Մուտքի մոտ երևում է չորս անձ: Մեկը քահանա է, մյուս երկուսը, դատելով հանդերձանքից, տեղացիներ են (միգուցե ուղեկցողներ), իսկ ձախ կողմում՝ նախորդ լուսանկարներից մեզ ծանոթ տղամարդն է՝ սպասողական դիրքով: Եկեղեցին այժմ ավերակ է:

Վերջինը Բագարանի կիսավեր Սբ. Գեւորգ եկեղեցու լուսանկարն է, որի նշանակությունը եզակի է, քանի որ կառույցն ավերվել է, իսկ եկեղեցու ուրիշ լուսանկարներ չեն պահպանվել (նկ. 23ա):

Կարապետ Հովհանջանյանը թողել է նաեւ գծանկարներ, որոնք տպագրվել են ամսագրերում, Ղեւոնդ Ալիշանի «Այրարատ» եւ «Շիրակ» աշխատություններում: Կ. Հովհանջանյանի «Ալեքսանդրապոլից

¹⁹ Տե՛ս Kurkdjian's Sterescpic Photographs of Ani, <http://virtualani.org/kurkdjian/index.htm>

մինչև ի Մրեն» ուղեգրության Ե. տախտակում ընդգրկված են Մրենի ապարանքի դուռը, խաչքարը, Մրենի գծանկարները: Հովհանջանյանը «Փարոս Հայաստանի» 1881 թ. համարներում Շիրակի հուշարձաններին նվիրված մի քանի հոդված է հրատարակել, որոնց կցվել են հեղինակի գծանկարները²⁰:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կարապետ Հովհանջանյանը Հովհաննես Քյուրքչյանից հետո երկրորդ լուսանկարիչն է, որ այցելելով Անի՝ լուսանկարների միջոցով ներկայացրել է քաղաքի կարեւոր հուշարձանները: Շինություններից շատերն այժմ արդեն գոյություն չունեն: Այս առումով յուրաքանչյուր լուսանկար փաստագրական տեսակետից կարեւոր սկզբնաղբյուր է ուսումնասիրողների համար: Այսպիսով՝ Կարապետ Հովհանջանյանի աշխատանքների օրինակով եւ հատկապես փաստագրման առումով կարող ենք ասել, որ լուսանկարչությունը մեծ օգնություն էր գիտությունը: Ինչպես վերելում տեսանք, Կարապետ Հովհանջանյանի լուսանկարած մի շարք հուշարձաններ այժմ գոյություն չունեն, եւ դրանց վերաբերող միակ աղբյուրը Հովհանջանյանի լուսանկարներն են: Լուսանկարիչն իր հոդվածներով, գծանկարներով եւ լուսանկարներով գիտնականների ուշադրությունը բեւեռում էր փառահեղ անցյալ ունեցող հայկական մշակույթի եւ հայ ստեղծագործողների վարպետության վրա: Հովհանջանյանի աշխատանքները մեր օրերում եւս շարունակում են մնալ կարեւոր ու արդիական՝ որպես սկզբնաղբյուր ծառայելով պատմաբանների, արվեստաբանների կամ վերականգնողների համար: Կարապետ Հովհանջանյանի ստեղծագործությունները հայ արվեստագետների, ճարտարապետների ստեղծագործական մտքի ու վարպետության անառարկելի վկաներն են:

²⁰ Հովհանջանյանն անդրադարձել է Խժկոնքի Սբ. Ստեփանոս, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Ստեփանոս Նախավկա եւ այլ եկեղեցիների: Մանրամասն տես ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՋԱՆՅԱՆԻ, «Փարոս Հայաստանի», 1881 № 3–6:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Շարապետ Հովհաննիսյան, Անիի հուշարձաններ, Մատենադարան, լուսանկար, լուսանկարների ժողովածու:

РЕЗЮМЕ

В конце XIX — начале XX века возрастает интерес к археологии. Этому в большой мере способствовали труды ученых историков, на страницах которых также содержалось большое количество фотографий. С их помощью исторические, а впоследствии и археологические исследования стали проходить намного легче и результативнее.

Карапет Овганджян относится к числу людей, использовавших фотоаппарат с этой целью. Овганджян — видный государственный деятель, писатель, археолог и фотограф конца XIX века. В 1904 году он дарит альбом фотографий эчмиадзинскому архимандриту отцу Мовсисяну. Сейчас этот альбом хранится в собрании альбомов библиотеки Матенадарана (номер 423). В нем представлены 22 фотографии. В фотографиях предстают древние строения города Ани, а также скульптуры, оказавшиеся в фокусе внимания Овганджяна. Все фотографии в альбоме озаглавлены и подписаны на обратной стороне.

Таким образом, Карапет Овганджян своими статьями, чертежами и фотографиями привлекал внимание ученого мира к имеющей блестящее прошлое армянской культуре и мастерству армянских зодчих. Они и сегодня являются востребованными и в качестве иллюстративных первоисточников продолжают сохранять свою важность для историков, археологов, искусствоведов и реставраторов.

SUMMARY

In the late 19th — early 20th century, interest in archeology increased. It was greatly contributed by the works of historians, among which there were many photographs. With their help, historical and later archeological researches were easier and more efficient.



Նկ. 1 Հոռոմոսի հաղթականաբը:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավբմ, նկ 2բ:



Նկ. 2 Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ կամ
Տիգրան Հոռենցի եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավբմ, նկ. 3ա:



Նկ. 3 Անիի Ս. Գեորգ եկեղեցին: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավբմ, նկ. 4բ:



Նկ. 4 Անիի արփունի
ապարանքի ավերակները:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 5ա:



Նկ. 5 Անիի Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 6բ:



Նկ. 6 Մանուկների կիսավեր մզկիթը:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 7ա:



Նկ. 7 Անիի Ս. Առաքելոց եկեղեցու գավիթը:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 8բ:



Նկ. 8 Անիի Ս. Առաքելոց եկեղեցու
նակատային մասից՝ մի հատված:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 9ա:



Նկ. 9 Անիի Ս. Փրկիչ եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 10բ:




Նկ. 10 Անիի Ս.Աստվածածին եկեղեցին (Անիի Մայր տաճար):
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննյան: ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 11ա:



Նկ. 11 Անիի կամարներով արժունական
աշտարակը: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 12բ:




Նկ. 12 Անիի պարիսպները:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 13ա:



Նկ. 13 Անիի պարիսպները:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 14բ:




Նկ. 14 Խժկոնքի վանական համալիրի
Ս. Սարգիս եկեղեցուն կից խաչարձանը:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան: ՄՄ
գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 15ա:



Նկ. 15 Խժկոնքի վանական
համալիրի Ս. Սարգիս եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 16բ:



Նկ. 16 Ս. Ստեփանոս Նախավկա
եկեղեցին: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 17ա:



Նկ. 17 Տեկորի եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 18բ:



Նկ. 18 Մրեն: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 19ա:



Նկ. 19 Մրենի խաչքարեր:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 20բ:



Նկ. 20 Ս. Շուշան եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան:
ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրում, նկ. 21ա:



Նկ. 21 Սկերակ եկեղեցի, հավանաբար Ս. Թադեոս եկեղեցին է:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննիսյան: ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրոմ, նկ. 22բ:




Նկ. 22 Բագարանի կիսավեր Ս. Գեորգ եկեղեցին:
Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննիսյան: ՄՄ գրադարան, Հ^մ 423 ավրոմ, նկ. 23ա:

Karapet Hovhanjanyan belongs to the number of people who started using his camera for that purpose. Hovhanjanyan was a 19th c. public figure, writer, archaeologist and photographer. In 1904, he presented an album of photographs to Ter-Movsisyan, Archimandrite of Holy Etchmiadzin. Now the album is stored in the collection of albums of the Matenadaran library, album № 423. It contains 22 photographs. These are images of archeological buildings and sculptures from the city of Ani, which came to the attention of Hovhanjanyan. All photographs in the album bear titles and inscriptions on the reverse side.

Thus, with his articles, drawings and photographs, Karapet Hovhanjanyan focused the attention of scientists on the Armenian culture with a brilliant past and the skills of Armenian artists. They are still in demand today and continue to maintain their importance as a source for art historians or restorers.





ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՃՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ 2023 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2023 թ. շարունակել է քարոզչական իր ուրույն գործունէութիւնը՝ լոյս ընծայելով եւ տարածելով գիտական, հոգեւոր-ուսուցողական, քարոզչական եւ կրթադաստիարակական գրականութիւն:

Բացի գրքերի հրատարակութիւններից՝ Հրատարակչական բաժինը նաեւ համակարգել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտօնաթերթերի՝ «Էջմիածին» ամսագրի եւ «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի խմբագրութիւնների գործունէութիւնը: 2023 թ. ընթացքում լոյս են ընծայուել «Էջմիածին» ամսագրի 12 համարները ինչպէսեւ օտարալեզու Յաւելուածը, որոնք, բացի տպագիր տարբերակից, հասանելի են նաեւ թուային տարբերակով (<https://etchmiadzinlibrary.am/images/Magazin/Etchmiadzin.html>): Ամսագրի տարբեր համարներում ներառուած նիւթերը լուսաբանում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վեհափառ Հայրապետի գործունէութեան մի շարք բնագաւառներ:

«Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթը, ըստ սահմանուած ժամանակահատուածի եւ պարբերականութեան, 2023 թ. լոյս է ընծայել 16 համար (արտաքին պատճառներով 8 համար տակաւին չի հրապարակուել), որոնց էջերում առաջին հերթին տպագրուել են Ամենայն Հայոց Հայրապետի՝ տարբեր առիթներով խօսուած բոլոր ուղերձներն ու պատգամները, տեղեկատուական համակարգի տրամադրած բոլոր, ինչպէս նաեւ թեմերի տրամադրած լրատուական նիւթերը: Պարբերաբար տպագրուել են կրօնական, պատմական, գրականագիտական, արուեստաբանական, բարոյահոգեբանական ու հրապարակախօսական յօդուածներ: Թերթի թուային տարբերակը հասանելի է հետեւեալ յղմամբ՝ <https://etchmiadzinlibrary.am/images/Magazin/Qristonya%20Hayastan.html>:

Շնորհակալութեամբ յիշենք Մայր Աթոռի հրատարակչական խորհրդի անդամներին, հեղինակներին եւ աշխատակիցներին՝ խմբագիրներին, սրբագրիչներին, էջադրողներին, տպագրիչներին, կազմարարներին եւ այլոց, որոնց միասնական աշխատանքի շնորհիւ ընթերցողի սեղանին են դրոււմ արժէքաւոր ու օգտակար հրատարակութիւններ: Յատուկ շնորհակալութեամբ պէտք է յիշենք նաեւ Մայր Աթոռի հրատարակչութեան մեկենասներին՝ թէ՛ տարբեր հիմնադրամներով եւ թէ՛ առանձին անհատական մեկենասութեամբ օժանդակութեան համար:

Հստ այսմ՝ 2023 թ. Մայր Աթոռի հրատարակչութիւնը լոյս է ընծայել՝

Ա. «Յուցակ կաթողիկոսական դիւանի Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւի», հտ. Ա, վաւերագիրք 1—413, թղթապանակք 1—7 գիրքը (կազմեցին՝ Ա. Մալխասեան, Ն. Մարտիրոսեան, Ա. Ասատրեան, Լ. Ստեփանեան, խմբ.՝ Արմէն Մալխասեան):

Մաշտոցեան Մատենադարանի արխիւային հաւաքածուի հիմնական եւ ամենահին մասը «կաթողիկոսական դիւանի ֆօնդն» է, որը պարունակում է փաստագրեր 1441—1975 թթ.: Ֆօնդում ընդգրկուած են 42,123 միաւոր վաւերագրեր, որոնք արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ նուիրապետական աթոռների, թեմերի, գաղթավայրերի հետ ունեցած փոխյարաբերութիւնների, հայ եւ օտար ժողովուրդների կրօնական, քաղաքական, տնտեսական, վիճակագրական եւ այլ հարցերի վերաբերեալ: Կարելոր են կաթողիկոսների՝ օտար թագաւորներին ուղղուած կոնդակները եւ նրանցից ստացած պատասխան հրովարտակներն ու գրութիւնները: Մեծաքանակ նիւթեր կան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նուիրաբերած գոյքի, տրուած ստացականների, այլեւայլ հաշուեմատեանների վերաբերեալ: Առանձնապէս արժէքաւոր եւ հազուագիւտ վաւերագրերը՝ կաթողիկոսների կոնդակները, ցարական հրովարտակները, շահերի, սուլթանների հրամանագրերը, եզակի քարտէզները եւ այլն, ունեն համաշխարհային պատմամշակութային նշանակութիւն:

Բ. «Գարեգին Ա.. Յովսէփեան... փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, հտ. Գ. (կազմող՝ Գոհար Աւագեան, խմբագիր՝ Արմէն Մալխասեան):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանին վերաբերող փաստաթղթերի ու նիւթերի ժո-

ղովածուի Գ. հատորում ներկայացուած են 330 փաստաթղթեր, որոնք պահպանուում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում՝ Գարեգին Յովսէփեանի անձնական ֆօնդում: Սոյն հատորում ընդգրկուած փաստաթղթերը, հիմնականում, Գարեգին Յովսէփեանին ուղղուած անձնական բնոյթի նամակներն են՝ տարբեր աստիճան ու պաշտօն ստանձնած հոգեւորականներից եւ զանազան մտաւորականներից, գիտնականներից, հասարակական գործիչներից ու այլ անձանցից:

Ժողովածուի մէջ ներառուած նիւթը յատուկ արժէք ու հետաքրքրութիւն է ներկայացնում տարբեր գիտական ուսումնասիրութիւնների, Ի. դարի առաջին տասնամեակին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրութիւնների, միաբանութեան անդամների փոխյարաբերութիւնների, Կարինի երկրաշարժից տուժածներին ցուցաբերուած աջակցութեան, Գեւորգեան ճեմարանի ու Ներսիսեան դպրոցի գործունէութեան, դասագրքերի հրատարակման վերաբերեալ:

Ժողովածուն համալրուած է օժանդակ ցանկերով եւ օգտակար ծանօթագրութիւններով: Վաւերագրերի հնագրագիտական ձեւակերպումն իրականացուել է գործող կանոնների համաձայն: Փաստաթղթերը հրատարակուում են առաջին անգամ, բնագրի լեզուով՝ մասնակի ուղղագրական ու կէտադրական փոփոխութիւններով՝ պահպանելով շարադրանքի լեզուն ու ոճը:

Հասցէագրուում է պատմաբաններին, աստուածաբաններին, եւ ընդհանրապէս, հայագիտութեամբ հետաքրքրուողներին:

Գ. Արմինէ Տիգրանեան, Արցախի քրիստոնէական ժառանգութեան ոչնչացման եւ բռնաւարացման աղբիւրջանական քաղաքականութիւնը (խմբ.՝ պ. գ. դ. պրոֆ. Համլէտ Պետրոսեան:

Գրքոյկում քննուում են 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ Արցախի տարածքներում Աղբիւրջանի բռնազաւթած քրիստոնէական հայկական ժառանգութեան (եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, համալիրներ, խաչքարեր եւ այլն) անօրինական թիրախաւորման, դրանց ոչնչացման եւ բռնաւարացման եղանակները եւ ներկայացուում դրանց պահպանութեան հիմնադրոյթները՝ ժառանգութեան «իսկութեան», «ամբողջականութեան», «մշակութային կարեւորութեան», «բացառիկութեան» միջազգային սկզբունքների լոյսի ներքոյ: Աշխատանքում հեղինակը հաւաքել եւ գիտական մանրամասն

